

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒԹՅԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՇԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սում ուսումնակրությունը իրականացվել է «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացնան» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը համատեղ իրականացվում է ՀՀ Ազգային ժողովի և Միավորված ազգերի կազմակերպության զարգացնան ծրագրի կողմից՝ Նիդերլանդների զարգացման ծրագրերի հարցերով՝ նախարարի ֆինանսական աջակցությամբ: Ուսումնասիրությունը իրականացվել է և սույն գեկույցը կազմվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրքանշյան» հասարակական հետազոտությունների կենտրոնի կողմից:

**Դոկտոր Լուսիկ Դամիելյան**  
«Թուրքանշյան» հասարակական հետազոտությունների կենտրոնի տնօրեն

**Լիլիթ Ումրոյան**  
«Թուրքանշյան» հասարակական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող

**Թերեզա Խորովյան**  
Ծրագրի Համակարգող

@ Միավորված ազգերի կազմակերպության ծրագիր  
Երևան, 2005



*Armenia*



Ambassade van het  
Koninkrijk der Nederlanden

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ	4
Անփոփում	5
Ներածություն	7
Մեթոդաբանություն	8
Մարդու իրավունքների կրթություն հասկացությունը	9
Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները մարդու իրավունքների կրթության ոլորտում	13
Հայաստանում գործող իրավական ակտերը մարդու իրավունքների կրթության վերաբերյալ	17
Առաջարկություններ	19
Կրթության բնագավառը Հայաստանում	19
Մարդու իրավունքների կրթությունը նախադպրոցական համակարգում	20
Մարդու իրավունքների կրթության գնահատումը նախադպրոցական կրթության համակարգում	21
Առաջարկություններ	23
Մարդու իրավունքների կրթությունը միջնակարգ կրթության ոլորտում	24
Ուսուցիչների և վարչական աշխատակազմի վերապատրաստումները	28
Հանրակրթական դպրոցում մարդու իրավունքների կրթության գնահատում	31
Առաջարկություններ	41
Մարդու իրավունքների ուսուցանումը հատուկ դպրոցներում	43
Մարդու իրավունքների դասավանդման գնահատումը հատուկ դպրոցներում	44
Առաջարկություններ	44
Մարդու իրավունքների ուսուցումը հետդպրոցական շրջանում	45
Նախնական և միջին մասնագիտական կրթություն	45
Բարձրագույն մասնագիտական կրթություն	47
Դասախոսների վերապատրաստում	49
Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում մարդու իրավունքների կրթության գնահատում	50
Առաջարկություններ	53
Մարդու իրավունքների կրթությունը հիմնական մասնագիտական խմբերի և պետական ծառայողների համար	54
Ուստիկանություն	54
Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի աշխատակազմ	54
Դատավորներ	55
Իրավաբաններ	55
Քաղաքացիական ծառայողներ	56
Այլ մասնագիտական խմբեր և պետական ծառայողներ	56
Հիմնական մասնագիտական խմբերի և պետական ծառայողների համար մարդու իրավունքների կրթության գնահատում	58
Առաջարկություններ	59
Մարդու իրավունքների կրթությունը խոցելի խմբերի համար	60
Խոցելի խմբերին ուղղված մարդու իրավունքների կրթության ծրագրերի գնահատում	61
Առաջարկություններ	62
Մարդու իրավունքների կրթությունը լայն հասարակության համար	63

Լայն հասարակության համար մարդու իրավունքների կրթության գնահատում	64
Առաջարկություններ	66
Մարդու իրավունքների կրթության ուղղված ֆինանսական և կազմակերպական աջակցությունը Հայաստանում	67
Մարդու իրավունքների կրթության ազգային ծրագիրը և համանման ուրիշ ծրագրեր	70
Արդյոք Հայաստանում անհրաժե՞շտ է մարդու իրավունքների կրթության ազգային ծրագրի ստեղծումը:	73
Գրականության ցանկ	75
Հետազոտության մեջ նշված միջազգային, տարածաշրջանային և հայաստանյան իրավական փաստաթղթեր	78
<b>ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԱՅՆ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՈՐՈՆՑ</b>	
Ներկայացնելութիւնների ՀԵՏ ՀԱՐՑԱՋՐՈՒՅՑՅՆԵՐԻ ԵՆ ԱՆՑԿԱՑՎԵԼ	83
ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՄԱՏՇԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ	89
ՀԱՎԵԼՎԱԾ Գ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԱՌԱՐԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	94
ՀԱՎԵԼՎԱԾ Դ. ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՍԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՍԱՍՍԱՅՅՈՒՂԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ	96
ՀԱՎԵԼՎԱԾ Ե. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱԿՏԻՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ	100

## **Հապավումների ցանկ**

ՀՍԻԿ	Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀԱՅ	Հայաստանի ամերիկյան համալսարան
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ՄԻԺԻ	Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԲՀԻ	Բաց հասարակության ինստիտուտ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԹՀՀԿ	«Թուրքանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոն
ՄԹ	Միացյալ Թագավորություն
ԱՄՔՈՐ	Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԱԿ-ի ՀՏՎ	ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչություն
ՅՈՒՆԵՍԿՕ	ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ-ի ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն

## **Ամփոփում՝ TC "Executive Summary" Վ C Վ "1" }**

Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը և ՀՀ Ազգային ժողովը նախաձեռնել են «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման ծրագիրը», որի նպատակն է խթանել մարդու իրավունքների զարգացումը Հայաստանում՝ ապահովելով հանրային իրազեկությունը մարդու իրավունքների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանի նորաստեղծ հաստատության վերաբերյալ:

Պայմանագիր է կնքվել Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրքանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոնի հետ (ԹՀՀԿ), որպեսզի իրականացվի Հայաստանում մարդու իրավունքների կրթության իրավիճակի առաջին համապարփակ գնահատումը, և դրա հիման վրա ձևավորվեն մարդու իրավունքների կրթության ոլորտի ռազմավարությունն ու ազգային ծրագիրը: Այս հետազոտության նպատակն է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակի շրջանակներում գնահատել և վերլուծել մարդու իրավունքների կրթության պաշտոնական և ոչ պաշտոնական կրթական ծրագրերը՝ իրականացված Հայաստանում տարբեր խմբերի համար, ներառյալ շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերը:

Ուսումնասիրությունը ներառում է նաև մարդու իրավունքների կրթությանն ուղղված կազմակերպական և ֆինանսական աջակցությունը, մարդու իրավունքների վերաբերյալ առկա հանրամատչելի գրականության ուսումնասիրությունը, մարդու իրավունքների կրթության վերաբերյալ դրույթներ պարունակող տարբեր ազգային ծրագրերի և իրավական ակտերի վերլուծությունը: Ծրագիրն իրականացնելիս կիրառվել են հիմնական շահագործի կողմերի հետ խոր հարցազրույցների, մարդու իրավունքներ դասավանդող ուսուցիչների հետ համատեղ քննարկումների, մարդու իրավունքների կրթական ծրագրերի և իրավական ակտերի մասնագիտական վերլուծության մեթոդները:

Հայաստանում նախադպրոցական կրթական ծրագիրը մարդու իրավունքների կրթության բաղադրիչներ չի ընդգրկում, սակայն ոլորտի նորմատիվային փաստաթղթերը, որոնք ներկայումս պատրաստվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, կընդգրկեն նաև նման բաղադրիչներ: Մարդու իրավունքների կրթությունը ընդգրկված չէ նաև հատուկ կրթության համակարգում: Ընդհանուր կրթության համակարգում մարդու իրավունքների գիտելիքները մատուցվում են հանրակրթական դպրոցի 8-րդ և 9-րդ դասարաններում առանձին առարկաների դասավանդումով («Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն»): Այդ երկու առարկաների դասագրքերը կարելի է լավ սկիզբ հանարել, սակայն դրանք չեն բովանդակում մարդու իրավունքների այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են, օրինակ, մարդկության դեմ ոճրագործությունները: Անհրաժեշտ է համակարգված ձևով պարբերաբար թարմացնել դասագրքերը, վերապատրաստել ուսուցիչներին և ապահովել նրանց նոր նյութերով: Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում 37 հաստատություններ մեկ կամ մի քանի բաժիններում ներառում են «Մարդու իրավունքներ» դասընթացը: Արհեստագործական մասնագիտական կրթական հաստատություններում «մարդու իրավունքներ» առարկայի դասավանդումը պարտադիր չէ:

Մասնագիտական խմբերի, ինչպես օրինակ՝ արդարադատության և իրավապահ ոլորտների աշխատողների համար մարդու իրավունքների կրթությունն ունեցել է կարճաժամկետ ու ոչ պարբերական բնույթ. մասնագիտական խմբերի կանոնավոր վերապատրաստումները մեծ նասանք չեն ներառել մարդու իրավունքների կրթությունը: Դայաստանում բոլոր քաղաքացիական ծառայողները օրենքով սահմանված կարգով անցնում են պարբերական մասնագիտական վերապատրաստում, սակայն այն չի ներառում մարդու իրավունքների կրթության բաղադրիչը: Խոցելի խմբերի մարդու իրավունքների կրթությունը հիմնականում ուղղված է եղել կանանց ու փախստականներին և իրականացվել է միայն մեծ քաղաքներում:

Մարդու իրավունքներին առնչվող հիմնական փաստաթղթերը թարգմանվել և հրատարակվել են հայերեն, բայց հասարակության լայն շրջաններին մատչելի չեն: Մարդու իրավունքների կրթության օրենսդրական հիմքերը հիմնականում կրթության ոլորտում են: Մարդու իրավունքների կրթության որոշ բաղադրիչներ կան երեխաների իրավունքների պաշտպանության, թրաֆիքինգի դեն պայքարի և կանանց վիճակի բարելավման ազգային ծրագրերում: Դայաստանում մարդու իրավունքների կրթության ազգային ծրագիր չի մշակվել: Մարդու իրավունքների կրթությունը գրեթե լիովին ֆինանսավորվում է օտարերկրյա դոնոր կազմակերպությունների կողմից:

## **Ներածություն՝ TC "Introduction" Վ C Ա "1" }**

Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության գարգացման ծրագիրը և ՀՀ Ազգային ժողովը նախաձեռնել են «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման ծրագիրը», որը նպատակ ունի խթանել մարդու իրավունքները՝ ապահովելով հանրային իրազեկությունը մարդու իրավունքների հիմնախնդիրների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանի նորաստեղծ հաստատության վերաբերյալ։ Ծրագրի առաջին բաղադրիչը ներառում է Հայաստանում մարդու իրավունքների ներկա դրության գնահատումն ու վերլուծությունը, ինչը հնարավորություն կտա՝ 1) նախատեսելու Վիեննայի հռչակագրով և գործողությունների ծրագրով (1993) սահմանված հանձնարարականների իրականացման համար անհրաժեշտ քայլերը, 2) ստեղծելու մարդու իրավունքների կրթության գործողությունների ազգային ծրագրի մշակման նախադրյալները։ Պայմանագիր է կնքվել Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրքանջյան» հասարակական հետազոտությունների կենտրոնի հետ, որպեսզի նա իրականացնի Հայաստանում մարդու իրավունքների կրթության առաջին ամբողջական և համակողմանի վերլուծությունը և գնահատումը, ինչը հիմք կծառայի Հայաստանում մարդու իրավունքների կրթության ռազմավարության և մարդու իրավունքների կրթության ծրագրի մշակման համար։

Այս հետազոտության նպատակն է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակի շրջանակներում գնահատել Հայաստանում իրականացված միջոցառումների արդյունավետությունը։ Ըստ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերի գերագույն հանձնակատարի հանձնարարականների<sup>1</sup> այս գնահատումը շեշտադրում է մարդու իրավունքների կրթության հետևյալ բաղադրիչները։

- ֆորմալ կրթական համակարգի՝ մարդու իրավունքների առարկաների ուսումնական ծրագրերը,
- մարդու իրավունքների կրթական ծրագրերը հիմնական մասնագիտական խմբերի համար,
- մարդու իրավունքների կրթական ծրագրերը խոցելի խմբերի համար և դրանց մատչելիությունը,
- մարդու իրավունքներին վերաբերող տարրեր հայերեն նյութերի գոյությունը և դրանց մատչելիությունը լայն հասարակության համար,
- մարդու իրավունքների կրթությանն ուղղված կազմակերպական և ֆինանսական աջակցության մակարդակը,
- մարդու իրավունքների կրթության ազգային ծրագրերի և համանման այլ ծրագրերի գոյությունը,
- մարդու իրավունքների կրթության վերաբերյալ ազգային իրավական ակտերի գոյությունը։

Զեկույցի յուրաքանչյուր գլուխը վերաբերում է վերը նշված խնդիրներից մեկին և բովանդակում է տվյալ ոլորտի իրավիճակի ընդհանուր նկարագրությունը,

<sup>1</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակ, 1995-2004: Կյանքի դասեր / Միավորված ազգերի կազմակերպություն: Նյու Յորք և Ժնև, 1998, էջ 42-44:

մարդու իրավունքների կրթության վերաբերյալ իրավական ակտերի վերլուծությունը, ոլորտի գնահատումը և առաջարկություններ:

Զեկույցում գետեղված են նաև օժանդակ նյութերի հավելվածներ, որոնք ներառում են. 1) մարդու իրավունքների առարկաներ դասավանդող բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանկ, 2) մարդու իրավունքների կրթությանբ գրադարձ, աջակցող կազմակերպությունների, ներառյալ միջազգային դուռը կազմակերպությունների, միջկառավարական կազմակերպությունների, պետական կառույցների, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ցանկ, 3) մարդու իրավունքների վերաբերյալ հայերեն հրատարակված գրականության ցանկ, ներառյալ մարդու իրավունքներին առնչող միջազգային, տարածաշրջանային և ազգային փաստաթղթերը, դրանց պարզեցված տարբերակները, գրքույկներ, պարբերականներ և այլ նյութեր, 4) մարդու իրավունքների կրթությանը վերաբերող դրույթներ պարունակող ազգային իրավական ակտերի ամբողջական ցանկ:

## **Մեթոդաբանություն՝ TC "Methodology" և C Վ "1" }**

Հայաստանում մարդու իրավունքների կրթության ոլորտի շահագրգիռ անձանց և կազմակերպությունների անունները պարզելու համար կազմվել է նախնական տվյալների ցուցակ, որի հիման վրա կապ է հաստատվել նաև կազմակերպությունների ու անձանց հետ, և «Ճնագնդի» մեթոդի կիրառմանբ ցուցակն անբողջացվել է: Արդյունքում կուտակվել է համակողմանի և սպառիչ տեղեկատվություն մարդու իրավունքների կրթության ոլորտի բոլոր ակտիվ կազմակերպությունների վերաբերյալ<sup>2</sup>: Ցուցակի հիման վրա խորը հարցազրույցներ են անցկացվել 60 հիմնական շահառուների հետ (մարդու իրավունքների կրթությանբ ակտիվութեն գրադարձ և Հայաստանում ծրագրեր իրականացնող միջազգային և միջկառավարական կազմակերպություններ, միջազգային դուռը կազմակերպություններ, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, մարդու իրավունքների և մարդու իրավունքների կրթության փորձագետներ, կառավարական տարբեր մակարդակների պաշտոնյաներ): Բաց հարցերից բաղկացած հարցաշարեր են ստեղծվել վերը նշված հիմնական խնբերից յուրաքանչյուրի համար:

58 խորը հարցազրույցներ են անցկացվել մարդու իրավունքների կրթության ոլորտի մի շարք ընդհանրական հիմնախնդիրների շուրջ հիմնական տեղեկացված անձանց հետ<sup>3</sup>: Հավելված Ա-ում ներկայացված է հարցվածների ցուցակը, որն ընդգրկում է 14 դուռը կազմակերպությունների, 10 կատարող կազմակերպությունների, 9 բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ, մարդու իրավունքների 6 տեղական փորձագետներ և 22 պետական պաշտոնյաներ: ԹՀՀԿ-6 նաև կապ է հաստատել Հայաստանի բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ ներկայումս այդ համակարգում դասավանդվող մարդու իրավունքների առարկաների ցուցակը պարզելու նպատակով և հարցում է անցկացրել այն 37 հաստատություններում, որտեղ դասավանդվուն են մարդու իրավունքների առարկաներ:

<sup>2</sup> Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրին աջակցել է հիմնական դուռըների և պետական կառույցների բացահայտմանը:

<sup>3</sup> Հարցազրույցից հրաժարվելու ընդհանրներ երկու դեպք է եղել, երկուսն էլ՝ ՀՀ կառավարության ներկայացուցիչներ:

Հանրակրթական դպրոցների ուսուցիչները նույնապես նպատակային խմբային քննարկումների միջոցով ընդգրկվել են հետազոտության մեջ: Վեց այդպիսի քննարկումներ են անցկացվել «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» առարկաների ուսուցիչների հետ (երկու քննարկում Երևանում և մեկական՝ Իջևան, Վանաձոր, Եղեգնաձոր, Մարտունի քաղաքներում): Այս չորս քաղաքներում անցկացված քննարկումներին մասնակցել են նաև մերձակա գյուղերի ուսուցիչներ: Խմբային քննարկումներին ընդհանուր հաշվով մասնակցել է 50 ուսուցիչ: Կատարվել են գրառումներ:

ԹՀՀԿ-ն կատարել է հանրակրթական դպրոցի՝ մարդու իրավունքների ուսումնական և առարկայան ծրագրերի, դասագրքերի, ուսուցչների ձեռնարկների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված մարդու իրավունքների կրթության ծրագրերի թեմատիկ պլանների վերլուծություն:

Հետազոտության ընթացքում ձեռք են բերվել և վերլուծության ենթարկվել տարբեր ծրագրերի շրջանականերում իրականացված գնահատումներ, գեկույցներ և հարակից այլ նյութեր:

Մարդու իրավունքների կրթության վերթերյալ դրույթներ պարունակող գործող իրավական ակտերը վեր հանելու և մարդու իրավունքների կրթության պետական աջակցության մակարդակը պարզելու նպատակով իրականացվել է առկա իրավական ակտերի տեղեկատվական շտեմարանների հետազոտում: Արդյունքները ենթարկվել են փորձագիտական/ իրավաբանականվերլուծության:

Բոլոր տվյալները հավաքվել են 2005 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին:

### **Մարդու իրավունքների կրթություն հասկացությունը**

Հետզիետե ամրապնդվող մի համոզմունք կա, թե «կրթությունը մարդու իրավունքների բնագավառում և հանուն մարդու իրավունքների»<sup>4</sup> նպաստում է մարդու իրավունքների մշակույթի կերտմանը և կայուն, զարգացած ժողովրդավարական համակարգերի յուրահատուկ բաղադրիչ է: Մարդու իրավունքների կրթությունը համակողմանի երևույթ է և ներառում է մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացումը և քաղաքական ու սոցիալական վարքի վրա ազդեցություն գործելու նպատակով իրավական չափորոշիչների վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների հաղորդումը<sup>5</sup>:

<sup>4</sup> Մարդու իրավունքների խնդիրներ. մարդու իրավունքների հիմնահարցեր, ներառյալ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արդյունավետ տնօրինման այլընտրանքային մուտքումները: Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կրթության տասնամյակը (1995-2004) և մարդու իրավունքների ոլորտում հասարակական տեղեկատվության միջոցառումները: Գլխավոր քարտուղարի գեկույց: Մարդու իրավունքների կրթության ազգային գործողությունների ծրագրի մասին հանձնարարականներ A/52/469/Add.1

<sup>5</sup> Mihr A. *Human Rights Education: Methods, Institutions, Culture and Evaluation*, Magdeburg, 2004. [http://www.humanrightsresearch.de/material/Discussion-Paper-Band\\_4.pdf](http://www.humanrightsresearch.de/material/Discussion-Paper-Band_4.pdf)

Թեև մարդու իրավունքների կրթությունը կրթության իրավունքի բաղկացուցիչ մաս է, վերջերս այն սկսել է լայն ճանաչում գտնել որպես մարդու առանձին իրավունք: Մարդու իրավունքների համընդիմուր հոչակագրում (ՄԻՀՀ) նշված է:

«Յուրաքանչյուր ոք կրթության իրավունք ունի: ...Կրթությունը պետք է նպատակառողված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական կամ կրոնական խմբերի միջև փոխընթացմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, ել ավելի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ գործունեությանը»<sup>6</sup>:

ՄԱԿ-ի 1993 թ. մարդու իրավունքներին նվիրված համաշխարհային խորհրդաժողովում (Վիեննայի համաժողով) ճանաչվեց մարդու իրավունքների կրթության առանձնահատուկ դերը «համայնքների միջև կայուն և ներդաշնակ հարաբերությունների հաստատման և փոխընթացման, հանդուրժողականության և խաղաղության խթանման» գործում<sup>7</sup>: Այդ համաժողովում խրախուսվեց նաև ՄԱԿ-ի բոլոր անդամ երկրների կողմից հատուկ ծրագրերի և ռազմավարության մշակումը մարդու իրավունքների լայնածավալ կրթության նպատակով: Վիեննայի համաժողովում հայտարարվեց նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակի մասին:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակը սկսվեց 1995թ<sup>8</sup>: **Տասնամյակի** հիմքում ընկած են մարդու իրավունքների կրթությունն ամրագրող բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, ներառյալ ՄԻՀՀ-ն (26-րդ հոդվ.), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (13-րդ հոդվ.), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (29-րդ հոդվ.), Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան (7-րդ հոդվ.) և մի շարք ուրիշ փաստաթղթեր: **Տասնամյակի** նպատակներին համահունչ և վերը նշված փաստաթղթերի դրույթներին համապատասխան՝ մարդու իրավունքների կրթությունը բնորոշվել է որպես «մարդու իրավունքների համընդիմուր մշակույթի կերտման նպատակով իրականացվող վերապատրաստումների, դասընթացների իրականացման և տեղեկատվության տարածման ջանքեր, որոնց միջոցով մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ են հաղորդվում»<sup>9</sup>: Մարդու իրավունքների կրթությունը պետք է նպատակուղղված լինի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը, անձի լիարժեք զարգացմանը, ազգերի, բնիկ ժողովուրդների և բոլոր երիկ, կրոնական և լեզվական խմբերի փոխընթացմանը, հանդուրժողության, գեներային հավասարության և բարեկամության հաստատմանն ու ամրապնդմանը, ազատ հասարակության մեջ բոլոր անձանց արդյունավետ մասնակցությանը և նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ գործունեությանը<sup>10</sup>.

<sup>6</sup> Մարդու իրավունքների համընդիմուր հոչակագրի 26-րդ հոդված, 1948 թ.:

<sup>7</sup> Վիեննայի հոչակագրի և գործողությունների ծրագիր A/CONF.157/23, 1993 թ., 12 հուլիսի, պար. 78-82:

<sup>8</sup> ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշում 1994/184, A/RES/49/184, 2005թ., 6 մարտի:

<sup>9</sup> Տես 1-ին հոդված, էջ 3., պար. 2:

<sup>10</sup> Նույն տեղում:

*Տասնամյակի շրջանականերում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակի գործողությունների միջազգային ծրագրի /1995-2004/, ինչպես նաև Մարդու իրավունքների կրթության ազգային գործողությունների ծրագրի վերաբերյալ ուղեցույցի հիման վրա բազմաթիվ ծրագրեր ու միջոցառումներ են կազմակերպվել և իրականացվել: Երկու փաստաթղթերն էլ մշակվել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերի գերազույն հանձնակատարի գրասենյակի կողմից<sup>11</sup>:*

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակի ավարտը 2004 թ. մարդու իրավունքների կրթության նկատմամբ ուշադրության անկման չհանգեցրեց, ավելին, գիտակցելով մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքների և տեղեկությունների տարածման, մարդու իրավունքների հիմնարար արժեքների նկատմամբ համընդհանուր հարգանքի ամրապնդման նպատակով հետագա գործողությունների անհրաժեշտությունը՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովն իր 2005 թ. 60-րդ նստաշրջանի ընթացքում ընդունած բանաձևում կոչ արեց նոյն թվականից սկսել մարդու իրավունքների կրթության համաշխարհային ծրագիր<sup>12</sup>:

Մարդու իրավունքների կրթությունը ամրագրված է ոչ միայն միջազգային, այլև մի շարք տարածաշրջանային փաստաթղթերով: Օրինակ՝ Եվրոպայի միության շրջանակներում գոյություն ունեն Եվրոպառլամենտի և Եվրոպայի միության խորհրդի մի շարք բանաձևեր, ըստ որոնց՝ կրթության նպատակն է անձի համակողմանի զարգացումը և «մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ձևավորումը»<sup>13</sup>: Այդ բանաձևերը ընդգծում են նաև կրթության դերը ռասայականության, քսենոֆոբիայի (այլատյացության) դեմ պայքարում և պլուրալիզմի (բազմակարծության) ու հանդուրժողության արժեքների ձևավորման հարցում<sup>14</sup>:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունվել են մի շարք որոշումներ,<sup>15</sup> հոչակագրեր<sup>16</sup> և առաջարկություններ անդամ պետություններին<sup>17</sup> մարդու

<sup>11</sup>Տես 4-րդ հղումը:

<sup>12</sup>ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի որոշում 2004/7, 2004 թ., 21 ապրիլի:

<sup>13</sup> Եվրոպական հանրությունում կրթության ազատության մասին Եվրոպական խորհրդարանի որոշումը, 1984 թ., 14 մարտի:

<sup>14</sup> Եվրոպայի միության խորհրդի և անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների «Ռասիզմի և քսենոֆոբիայի դեմ պայքարի մասին» որոշում, 1990 թ., 29 մայիսի:

<sup>15</sup> Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (78) 41-րդ որոշումը մարդու իրավունքների դասավանդման մասին, 1978 թ., 25 նոյեմբերի:

<sup>16</sup> Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հոչակագրեր. 1981 թ., 14 մայիսի՝ Անհանդուրժողականությունը՝ որպես ժողովրդավարության սպառնալիք, Խոսքի ու տեղեկատվության ազատության մասին հօչակագիր, 1982 թ., 29 ապրիլի:

<sup>17</sup> Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի առաջարկություններն անդամ երկրներին. թիվ R(79)16 առաջարկություն անդամ պետություններին մարդու իրավունքների ոլորտում հետազոտությունների խթանման վերաբերյալ, 1979թ., 13 սեպտեմբերի, թիվ R(81)17 առաջարկություն անդամ պետություններին չափահաս անձանց կրթության ոլորտում քաղաքականության մշակման վերաբերյալ, 1981թ., 6 նոյեմբերի, թիվ R(83)13 առաջարկություն անդամ պետություններին երիտասարդներին կյանքի համար նախապատրաստման գործում միջնակարգ դպրոցի դերի վերաբերյալ, 1983թ., 23 սեպտեմբերի, թիվ R(84)17 առաջարկություն անդամ պետություններին զանգվածային լրատվության ոլորտում տղանարդկանց և կանանց հավասար դերի վերաբերյալ, 1984թ., 25 սեպտեմբերի, թիվ R(84)18 առաջարկություն անդամ պետություններին միջնշակութային փոխընթացման նպատակով ուսուցիչների վերապատրաստման

Իրավունքների կրթության նպատակի և գործառույթների, ինչպես նաև մարդու իրավունքների կրթության խթանման հատուկ մեխանիզմների ձևավորման վերաբերյալ: 1997թ. Եվրոպայի խորհրդի կողմից կյանքի կոչվեց «Կրթություն ժողովրդավարական քաղաքացիության համար» ծրագիրը, որի շրջանակներում Եվրոպական բազմաթիվ երկրների ժողովրդավարական կրթության փորձագետներ և պրակտիկ գործունեությամբ զբաղվողներ հնարավորություն ստացան հանդիպելու և քննարկումներ ծավալելու խնդրի շուրջ՝ ժողովրդավարական կրթություն հասկացության բնորոշումները և ռազմավարությունը մշակելու, ինչպես նաև ժողովրդավարության կրթության ոլորտում հաջողված ձեռնարկումներին անդրադառնալու նպատակով: Ծրագիրն ավարտվեց 2004 թվականին, որին հետևեց Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հայտարարությունը 2005 թվականը «Կրթության միջոցով քաղաքացիությանը նվիրված Եվրոպական տարի» ճանաչելու վերաբերյալ<sup>18</sup>:

Ամերիկյան պետությունների կազմակերպության շրջանակներում ևս կան մարդու իրավունքների կրթությունն ամրագրող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ Մարդու իրավունքների և պարտականությունների ամերիկյան հոչակագիրը (12-րդ հոդված)<sup>19</sup> և Մարդու իրավունքների ամերիկյան դաշնագիրը (26-րդ, 41-րդ, և 42-րդ հոդվածները)<sup>20</sup>:

Աֆրիկյան միասնականության կազմակերպության շրջանակներում նույնպես կան մարդու իրավունքների կրթության վերաբերյալ դրույթներ պարունակող փաստաթղթեր, Աերազյալ Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան<sup>21</sup>, Երեխայի իրավունքների և բարեկեցության աֆրիկյան խարտիան<sup>22</sup> և մի շարք որոշումներ<sup>23</sup>:

---

Վերաբերյալ, հատկապես միգրացիայի ենթատեսառում, 1984թ., 25 սեպտեմբերի, թիվ R(85)7 առաջարկություն անդամ երկրներին դպրոցներում մարդու իրավունքների դասավանդման և ուսուցման վերաբերյալ, 1985թ., 14 մայիսի, թիվ R(91)16 առաջարկություն անդամ երկրներին սոցիալական ծառայողներին մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստելու վերաբերյալ, 1988թ., 16 նոյեմբերի, թիվ R(94)12 առաջարկություն անդամ երկրներին դատավորների դերի, չեզոքության և աշխատանքի արդյունավետության վերաբերյալ, 1994թ., 13 հոկտեմբերի: Խորհրդարանական ասամբլեայի թիվ 1346 առաջարկություն մարդու իրավունքների կրթության վերաբերյալ, 1997թ., 26 սեպտեմբերի, թիվ R(98)15 առաջարկություն ապաստան խնդրող անձանց հետ, հատկապես սահմանային կետերում, առաջինը հաղորդակցվող ծառայողների վերապատրաստման վերաբերյալ, 1998թ., 15 դեկտեմբերի, թիվ (2004)4 առաջարկություն անդամ պետություններին բարձրագույն կրթության և մասնագիտական վերապատրաստման շրջանակներում Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի ուսուցման վերաբերյալ, 2004թ., 12 մայիսի:

<sup>18</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքը. [http://www.coe.int/T/E/Cultural\\_Co-operation/education/E.D.C/](http://www.coe.int/T/E/Cultural_Co-operation/education/E.D.C/)

<sup>19</sup> Մարդու իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ամերիկյան հոչակագիր (1948թ.) 12-րդ հոդված. «Յուրաքանչյուր ոք կրթության իրավունք ունի, որի հիմքում ընկած են ազատության, բարոյականության և համանարդկային համերաշխության սկզբունքները: Նմանապես, յուրաքանչյուր ոք այնպիսի կրթության իրավունք ունի, որը պատրաստում է անձին վայելուչ արելակերպ ձեռք բերելուն, կյանքի չափանիշների բարձրացմանն ու հասարակության համար օգտակար անդամ դառնալուն»:

<sup>20</sup> Մարդու իրավունքների ամերիկյան դաշնագիր. «Սան Ժոզե, Կոստա Ռիկայի պակտ», 1978թ.:

<sup>21</sup> Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայի (1981թ.) 25-րդ և 45-րդ հոդվածներ:

<sup>22</sup> Երեխայի իրավունքների և բարեկեցության աֆրիկյան խարտիայի (1990թ.) 11-րդ, 32-րդ և 42-րդ հոդվածներ:

<sup>23</sup> Մարդու և ժողովուրդների իրավունքների կրթության վերաբերյալ որոշում (AHG/198)՝ ընդունված Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան համանաժողովի կողմից, 1993թ., Աֆրիկայում

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շրջանակներում գործում են մարդու իրավունքների կրթության կոչ անող մի քանի համաձայնագրեր, ներառյալ Յելսինկի եզրափակիչ ակտը<sup>24</sup> (որով ճանաչվում է մարդու իրավունքների ոլորտում սեփական իրավունքները ինանալու և համապատասխանաբար գործելու իրավունքը), Եվրոպայի անվտանգության և համագործացության խորհրդաժողովի (ԵԱՀԽ) մասնակից երկրների ներկայացուցիչների Վիեննայում ընդունած եզրափակիչ փաստաթուղթը<sup>25</sup>, ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդաժողովի Մոսկվայի խորհրդակցության փաստաթուղթը, որով կարևորվում է մարդու իրավունքների կրթության իիմնարար դերը և ԵԱՀԿ անդամ երկրների քաղաքացիների համար նման կրթության անհրաժեշտությունը<sup>26</sup>, ինչպես նաև մի շարք այլ փաստաթուղթեր:

Մարդու իրավունքների կրթության վերաբերյալ փաստաթուղթերի ցանկը չի սահմանափակվում վերը նշված միջազգային և տարածաշրջանային փաստաթուղթերով<sup>27</sup>: Այդ փաստաթուղթերը տարբերվում են իրենց իրավական ուժով. մարդու իրավունքների կրթության վերաբերյալ բազմաթիվ փաստաթուղթեր իրենցից ներկայացնում են հռչակագրեր, սկզբունքներ, հանձնարարականներ, որոշումներ և առաջարկություններ, որոնք իրավական բնույթի պարտավորություններ չեն առաջացնում մասնակից երկրների համար, բայց «անժատելի բարոյական ուժ» ունեն, քանզի «նման փաստաթուղթերի արժեքը մեծ թվով պետությունների կողմից դրանց ընդունումը և ճանաչումն է»<sup>28</sup>: Յետևաբար նման փաստաթուղթերը միջազգային հանրության համար ծառայում են որպես համընդիանուր սկզբունքներ:

### **Դայաստանի Դանուապետության միջազգային պարտավորությունները մարդու իրավունքների կրթության ոլորտում**

Դայաստանը վավերացրել է մարդու իրավունքների ոլորտի իիմնական միջազգային և Եվրոպական փաստաթուղթերը, փաստ, որը, ի լրումն Դայաստանի անդամակցությանը տարածաշրջանային մի քանի կազմակերպությունների, ինչպիսիք են ԵԱՀԿ-ն և Եվրոպայի խորհուրդը, առաջացնում է իրավական և քաղաքական բնույթի պարտավորություններ մարդու իրավունքների կրթության բնագավառում:

մարդու իրավունքների պաշտպանության խթանման մասին Աֆրիկյան միասնականության կազմակերպության Նախարարների խորհրդի թիվ CM/Res.1420 (LVI) որոշում, 1992թ., 22-28 հունիսի:

<sup>24</sup> Յելսինկի եզրափակիչ ակտ՝ ընդունված Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի կողմից, Յելսինկի, 1975թ., 1 օգոստոսի, VII սկզբունք:

<sup>25</sup> Եվրոպայի անվտանգության և համագործացության խորհրդաժողովի մասնակից երկրների ներկայացուցիչների Վիեննայում ընդունած եզրափակիչ փաստաթուղթը, 1989թ., 19 հունվարի:

<sup>26</sup> ԵԱՀԽ-ի Մարդկային չափանիշի խորհրդաժողովի Մոսկվայի խորհրդակցության փաստաթուղթը, 1991թ., 3 հոկտեմբերի, պարբ. 42:

<sup>27</sup> Բացի նշվածներից, կան նաև շատ ուրիշ փաստաթուղթեր, որոնք գործում են ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների և տարածաշրջանային տարբեր կազմակերպությունների շրջանակներում և արևշվում են մարդու իրավունքների, ժողովրդավարության կրթությանը:

<sup>28</sup> Մարդու իրավունքների կրթության իրավունք. մարդու իրավունքների կրթությանն առնչվող միջազգային և տարածաշրջանային փաստաթուղթերի դրույթների ընտրանի/ Միավորված ազգերի կազմակերպություն: Եյու Յորը և Ժնև, 1999, էջ 2, պարբ. 4: (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակ (1995-2004) # 3):

Ինչպես աշխարհի երկրների մեջ մասը, Հայաստանը նույնպես ընդունել է Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագիրը (այն իր բնույթով չի առաջացնում իրավական բնույթի պարտավորություններ, բայց ճանաչված է որպես չափանիշներ սահմանող փաստաթուղթ, սովորութային միջազգային իրավունքի ուժ ունի և հիմնարար փաստաթուղթ է մարդու իրավունքների ոլորտում)<sup>29</sup>, որի 26-րդ հոդվածը ամրագրում է կրթության նպատակը, այն է՝ «անձի լիարժեք զարգացումը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդումը»<sup>30</sup>:

1993 թվականին Հայաստանը միացել է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին, որը բովանդակում է մի քանի դրույթներ մարդու իրավունքների կրթության և դաշնագրում ամրագրված իրավունքների լիակատար ապահովման ու իրականացման նպատակով դրանց մասին իրազեկության բարձրացման վերաբերյալ: Դաշնագրի 2-րդ հոդվածը մասնակից երկրներից պահանջում է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները նշված նպատակի իրականացման համար, և չնայած կրթությունը՝ որպես այդ միջոցներից մեկը, հատուկ նշված չէ, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն հետագայում անդրադարձել և պարզաբանել է այդ հարցը<sup>31</sup>: Դաշնագրի 13-րդ հոդվածի առաջին կետում գետեղված է հոչակագրի 26-րդ հոդվածի դրույթը, որը, ինչպես արդեն նշվել է, ամրագրում է կրթության նպատակը, այն է՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդումը, ազգերի, ռասայական կամ կրոնական խմբերի փոխըմբռնումը, համդուրժողականությանն ու բարեկամությանը նպաստելը:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի մարդու իրավունքների կրթության վերաբերյալ հատուկ դրույթներ չի բովանդակում: Սակայն Մարդու իրավունքների կոմիտեի կողմից ընդունված երրորդ ընդհանուր մեկնաբանությամբ<sup>32</sup> նշվում է, որ դաշնագրի պետք է հրատարակվի բոլոր մասնակից պետությունների պաշտոնական լեզուներով, և քայլեր պետք է ձեռնարկվեն դեկավարներին, նրանց վերապատրաստման շոշանակներում, դաշնագրի բովանդակությանն ու նրանում ամրագրված իրավունքներին ծանոթացնելու ուղղությամբ: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի վերաբերյալ Հայաստանի ներկայացրած գեկույցի հիման վրա Մարդու իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտողություններում նշվում է, որ ողջունելի են Հայաստանի ջանքերը մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման և մարդու իրավունքները դպրոցական առարկայացանկի մեջ ներգրավելու հարցում: Շեշտելով ժողովրդավարության հաստատման և խթանման գործում իրավաբանական մասնագիտության և դատական ոլորտի աշխատողների համար

<sup>29</sup> Humphrey, J. P. "Universal Declaration of Human Rights", <http://www.hrusa.org/field/listings.php?catid=2>

<sup>30</sup> Տես՝ 6-րդ հղումը:

<sup>31</sup> Ընդհանուր մեկնաբանություն, թիվ 3, ընդունված Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի կողմից 5-րդ նստաշրջանում, 1990թ.:

<sup>32</sup> Ընդհանուր մեկնաբանություն, թիվ 3, ընդունված Մարդու իրավունքների կոմիտեի կողմից 13-րդ նստաշրջանում, 1981թ.:

մարդու իրավունքների կրթության հատուկ կարևորությունը՝ կոմիտեն պնդում է, որ Հայաստանում իրականացվի նման վերապատրաստում<sup>33</sup>:

Հայաստանը միացել է նաև Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային և որպես մասնակից երկիր՝ անհապաղ ու արդյունավետ միջոցներ ծեռնարկելու պարտավորություններ ունի, մասնավորապես դասավանդման, կրթության, մշակույթի և տեղեկատվության բնագավառներում ռասայական խտրականության հանգեցնող նախապաշարմունքների դեմ պայքարի, ազգերի և ռասայական կամ էթնիկական խմբերի փոխըմբռնման, հանդուրժողականության ու բարեկամության խրախուսման<sup>34</sup> համար, եթե անգամ ռասայական խտրականությունը գործնականում չի կիրառվում իր իրավասության տակ գտնվող տարածքներում:<sup>35</sup> Ռասայական խտրականության վերացման կոմիտեի Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի վերաբերյալ զեկույցում՝ ուղղված Հայաստանին, նշվում է. «Ռասայական խտրականության զոհ դարձած անձանց կողմից բողոքների բացակայությունը և իրավական գործողություններ չծեռնարկելը կարող են նաև առկա իրավական միջոցների մասին իրազեկության պակասի ցուցանիշ լինել: ...Հայաստանը պետք է ազգային օրենդրությամբ ամրագրի համապատասխան դրույթներ հանրությանը բոլոր հնարավոր իրավական միջոցների առկայության մասին տեղեկացնելու վերաբերյալ»<sup>36</sup>:

Մի այլ համաձայնագիր, որին միացել է Հայաստանը 1993 թվականին և հետևաբար ստանձնել է դրանից բխող պարտավորություններ, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան է: Այն կոչ է անում մասնակից երկրներին կրթության, մասնավորապես ուսումնական ձեռնարկների ու դպրոցական ծրագրերի վերանայման և ուսուցման մեթոդների հարմարեցման միջոցով հասնել հասարակության մեջ տղամարդու և կնոջ դերերի ստերեոտիպային ընկալումների մերժմանը<sup>37</sup>:

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմուճի ու պատժի դեմ կոնվենցիան, որին Հայաստանը միացել է 1993 թվականին, բոլոր անդամ երկրներից պահանջում է, որպեսզի

... խոշտանգումների արգելմանը վերաբերող ուսումնական նյութերն ու տեղեկատվությունն ամբողջովին ընդգրկվեն իրավակիրառող մարմինների՝ քաղաքացիական թե ռազմական, բժշկական աշխատակազմերի, պետական ծառայողների և այլոց վերապատրաստման ծրագրերում, որոնք կարող են ներգրավված լինել ձերբակալության, կալանավորման կամ

<sup>33</sup> Մարդու իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտողություններ, Հայաստան 19/11/98. CCPR/C/79/Add.100:

<sup>34</sup> Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (1969թ.) 7-րդ հոդված:

<sup>35</sup> Ընդհանուր առաջարկ, թիվ 5, ընդունված Ռասայական խտրականության վերացման կոմիտեի կողմից 15-րդ նստաշրջանում, 1977թ.:

<sup>36</sup> Ռասայական խտրականության վերացման կոմիտեի եզրափակիչ դիտողություններ. Հայաստան 01/11/2002, A/57/18, պար. 269-291:

<sup>37</sup> Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (1981թ.) 2-րդ (ա, բ) և 10-րդ (c) հոդվածները:

բանտարկության ցանկացած ձևի ենթարկված անձանց կալանքի տակ պահելու, հարցաքննելու կամ նրանց հետ վարվեցողության մեջ<sup>38</sup>:

Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, որին Հայաստանը մասնակցում է 1993 թվականից, բովանդակում է մարդու իրավունքների կրթության վերաբերյալ մի շարք դրույթներ, մասնավորապես բոլոր ոլորտներում երեխաների իրավունքների և երեխաներին բռնության բոլոր տեսակներից պաշտպանելու նպատակով պետության բոլոր համապատասխան վարչական, օրենսդրական, սոցիալական և կրթական միջոցառումները ձեռնարկելու պարտավորության մասին,: Կոնվենցիան նաև նշում է, որ երեխայի կրթությունը, ի լրումն այլ նպատակների, պետք է ուղղված լինի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի զարգացմանն ու երեխային ազատ հասարակության մեջ, փոխըմբռնման, խաղաղության, հանդուրժողականության, տղամարդու և կնոջ իրավահակասարության և բոլոր ժողովուրդների, էթնիկական, ազգային և կրոնական խմբերի, ինչպես նաև բնիկ ազգաբնակչությանը պատկանող անձանց միջև բարեկամության ոգով ու պատասխանատու կյանքով ապրելուն նախապատրաստելում<sup>39</sup>:

Երեխայի իրավունքների կոմիտեին ներկայացվող գեկույցներին վերագրվող ընդիհանուր պահանջներում, ըստ երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 44-րդ հոդվածի, մասնավորապես նշվում է, որ պետությունների կողմից ներկայացվող գեկույցները պետք է պարունակեն տեղեկություններ այն բոլոր միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են կամ նախատեսվում են տվյալ պետության կողմից կոնվենցիայում ամրագրված դրույթների լուսաբանման և իրապարակայնացման համար: Բացի դրանից, պետությունները պետք է տեղեկություններ հաղորդեն կոնվենցիան ազգային ու տվյալ պետությունում բնակվող փոքրամասնությունների լեզուներով թարգմանելու և իրատարակելու, հեռուստատեսությամբ, ռադիոյով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հեռարձակվող հաղորդումների և նմանատիպ ձեռնարկների, դպրոցական դասացուցակներում կոնվենցիայի նորմերի և դրույթների առկայության և արտահայտման մակարդակի, պետական ծառայողների և երեխաների հետ առնչվող մասնագիտական խմբերի վերապատրաստման և երեխայի իրավունքների կրթության մասին<sup>40</sup>:

Երեխայի իրավունքների կոմիտեն Հայաստանի կողմից 2004 թվականին ներկայացված գեկույցի վերաբերյալ իր եզրափակիչ դիտողություններում վերստին նշել է, որ Հայաստանը պետք է ստեղծի կոնվենցիայի բովանդակության և դրանում ամրագրված դրույթների իրականացման մասին տեղեկատվություն ապահովող շարունակական ծրագիր, ինչպես նաև խրախուսել է «երեխաների իրավունքների կրթությունը ապահովելու համար գործադրվող ջանքերը և կոնվենցիայի դրույթների վերաբերյալ գիտելիքների հաղորդման նպատակով համակարգված ու շարունակական վերապատրաստման ծրագրերի զարգացումը երեխաների հետ աշխատող բոլոր մասնագիտական խմբերի համար»<sup>41</sup>:

<sup>38</sup> Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի (1987թ.) 10-րդ հոդված:

<sup>39</sup> Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (1990թ.) 17-րդ (ա, բ) 19-րդ (1) և 29-րդ (1: ա, բ, շ, ը) հոդվածներ

<sup>40</sup> Տե՛ս 28-րդ հղումը, էջ 24:

<sup>41</sup> Երեխայի իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտողությունները. Հայաստան CRC/C/15/Add.225, 2004 թ., 30-ը հունվարի:

Ի լրումն վերը նշված պարտավորությունների, որոնք ստանձնել է Հայաստանը՝ Վավերացնելով նշված միջազգային փաստաթղթերը, որպես ՍԱԿ-ի անդամ պետություն՝ նա պարտավոր է հարգել և առաջնորդվել նաև բազմաթիվ ուրիշ փաստաթղթերով, որոնք ձևավորվել են ՍԱԿ-ի մարդու իրավունքների համակարգում և ծառայում են որպես չափորոշիչներ կամ առկա հիմնական իրավական փաստաթղթերի և մեխանիզմների վերաբերյալ լրացուցիչ հատուկ տեղեկություններ տրամադրող միջոցներ՝<sup>42</sup>:

Հայաստանը, բացի ՍԱԿ-ից, անդամակցում է նաև Եվրոպայի խորհրդին և ԵԱՀԿ-ին: Այս կազմակերպությունների շրջանակներում գործող մարդու իրավունքների կրթության վերաբերյալ տարբեր փաստաթղթերի միջոցով ձևավորված քաղաքականությունը և մոտեցումները, որոնց մասին նշվել է նախորդ գլխում, պետք է ընդունվեն և կիրառվեն նաև մեր պետության կողմից՝<sup>43</sup>:

### **Հայաստանում գործող իրավական ակտերը մարդու իրավունքների կրթության վերաբերյալ**

Մարդու իրավունքների կրթության վերաբերյալ դրույթներ բովանդակող իրավական ակտերի վերիանման նպատակով իրականացվել է էլեկտրոնային իրավական-տեղեկատվական ամենալիակատար բազայի՝ ԻՐՏԵԿ համակարգի հետազոտություն: ԻՐՏԵԿ-ն ընդգրկում է, սկսած 1991 թվականից, Հայաստանում ընդունված ամեն տեսակի իրավական ակտեր, ինչպես նաև այն միջազգային պայմանագրերն ու փաստաթղթերը, որոնց միացել է Հայաստանը<sup>44</sup>: Նման ակտերի գոյության վերաբերյալ տեղեկատվություն է ձեռք բերվել նաև մարդու իրավունքների ոլորտում գործող իրավաբանների և պետական պաշտոնյաների հետ հարցազրույցների ընթացքում:

<sup>42</sup> Տե՛ս 28-րդ հղումը, էջ 25-124:

<sup>43</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի՝ մարդու իրավունքների կրթության վերաբերյալ որոշումներն ու առաջարկությունները (15-րդ, 16-րդ, 17-րդ հղումներ), և ԵԱՀԿ-ի համապատասխան փաստաթղթերը. (24-րդ, 25-րդ և 26-րդ հղումներ):

<sup>44</sup> Տե՛ս [www.irtek.am](http://www.irtek.am)

## **Աղուսյակ 1: Մարդու իրավունքների կրթության վերաբերյալ դրույթներ բովանդակող ՀՀ իրավական ակտերի ցանկ**

### **ՀՀ օրենքներ**

«Կրթության մասին» ՀՀ օրենքի (1999) 4-րդ(2), 5-րդ(1), 11-րդ, 17-րդ(1), 18-րդ (2(2)) հոդվածներ:  
«Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի (2004) 11-րդ(1), 11-րդ (6) հոդվածներ  
«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին»  
ՀՀ օրենքի (2005) 10-րդ (4(1)) հոդված:  
«Կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենք (2001):

### **ՀՀ կառավարության որոշումներ**

ՀՀ կառավարության # 226-Ն որոշումը «Միջնակարգ կրթության չափորոշիչները հաստատելու մասին» (2000):  
ՀՀ կառավարության # 900-Ն որոշումը «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը հաստատելու և ՀՀ կառավարության 2000 թվականի մայիսի 8-ի # 226-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» (2004):  
ՀՀ կառավարության # 24 որոշումը «Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին» (2001)  
ՀՀ կառավարության # 1324-Ն որոշումը «ՀՀ կառավարության լիազորած պետական մարմին ճանաչելու և մանկատներում երեխաների խնամքի ու դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» (2004):

### **ՀՀ կրթության և գիտության նախարարության որոշումներ**

ՀՀ կրթության և գիտության նախարարության # 258-Ծ հրամանը «Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2001-2002 ուսումնական տարվա տիպային ուսումնական պլանները հաստատելու մասին» (2001)

Չնայած հարցազրույցների ընթացքում բոլոր հարցվողները նշել են, որ մարդու իրավունքների կրթությունը որևէ կերպ չի արտացոլվում ազգային օրենսդրության մեջ, բացի դպրոցի ուսումնական պլանից, որն ընդգրկում է պետական պարտադիր առարկաները իրավունքի ոլորտում<sup>45</sup>, ԻՐՏԵԿ-ի հետազոտման արդյունքում հաջողվեց բացահայտել մի շարք իրավական ակտեր, որոնք բովանդակում են մարդու իրավունքների կրթությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող դրույթներ (տե՛ս Աղուսյակ 1):

Ի լրումն նշված իրավական ակտերի՝ մարդու իրավունքների կրթության և իրազեկության ոլորտի վերաբերյալ որոշ դրույթներ են ընդգրկում նաև կանանց, հակաթրաֆիքինգի, երեխաների իրավունքների և կաշառակերության դեմ պայքարի ազգային ծրագրերը, որոնք մանրամասն կքննարկվեն սույն գեկույցի հետագա բաժիններում:

<sup>45</sup> «Իրավունք» առարկայաշարը բաղկացած է մարդու իրավունքներ, քաղաքացիական կրթություն և պետություն ու իրավունք առարկաներից:

## Առաջարկություններ

- Ինչպես ենթադրվում էր, ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանում մարդու իրավունքների կրթությունն օրենսդրութեամբ ամրագրված է միայն կրթության ոլորտի իրավական ակտերում, մինչդեռ չափազանց կարևոր է ննան դրույթների ընդգրկումը նաև այլ օրենքներում և իրավական ակտերում: Օրինակ՝ «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքը (1996 թ.) պետք է ընդգրկի հատուկ դրույթներ նրանում ամրագրված իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվության տարածման, երեխաների իրավունքների մասին հասարակության իրազեկության, մասնագիտական խնբերի կրթության մասին: Ննան դրույթներ պետք է զետեղել նաև «Փախստականների մասին» ՀՀ օրենքում (1999 թ.), «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում (1993 թ.), «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքում (2005 թ.), «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում (2003 թ.) և շատ ուրիշ օրենքներում:

## Կրթության բնագավառը Հայաստանում՝ TC "The Education Sector in Armenia" Վ C V "1" }

Հայաստանում կրթության բնագավառը հիմնականում կարգավորվում է 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթներով,<sup>46</sup> «Կրթության մասին» ՀՀ օրենքով (1999 թ.), «Կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագրիր հաստատելու մասին» ՀՀ օրենքով (2001),<sup>47</sup> ինչպես նաև առանձին կրթական ծրագրերի մասին օրենքներով<sup>48</sup>:

Կրթական հիմնական ծրագրերն ուղղված են հանրակրթական և մասնագիտական կրթությանը:

Հանրակրթական համակարգի հիմնական բաղադրիչներն են. 1) նախադպրոցական կրթությունը երեքից վեց տարեկան երեխաների համար, 2) միջնակարգ կրթությունը, որն ընդգրկում է տարրական ընդհանուր 1-3-րդ դասարանները, իմանական ընդհանուր՝ մինչև 8-րդ դասարանը և միջնակարգ (լրիվ) ընդհանուր՝ 10-11-րդ դասարանները, 3) անապահով ընտանիքների, ինձնքից զուրկ երեխաների և հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների կրթությունը: 2004 թ. ընդունված «Հանրակրթության պետական կրթակարգը» առաջարկում է անցում կրթության 12-ամյա ձևին<sup>49</sup>:

<sup>46</sup> ՀՀ Սահմանադրության (1995 թ.) 35-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ բոլոր քաղաքացիները ունեն կրթության իրավունք: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցությախն իիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:

<sup>47</sup> «Կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագրիր հաստատելու մասին» ՀՀ օրենք (2001 թ.):

<sup>48</sup> «Բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքը, 2004 թ., «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, 2005 թ.:

<sup>49</sup> Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ / ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Երևան, 2004:

Ըստ ՀՀ «Կրթության մասին» օրենքի՝ հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է բոլորի համար, բացառությամբ հատուկ կրթության բնագավառի սովորողների<sup>50</sup>:

Մասնագիտական կրթությունն ընդգրկում է նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հետքուհական կրթությունը<sup>51</sup>:

Կրթական համակարգը, բացի պետականից, ընդգրկում է նաև ոչ-պետական ուսումնական հաստատություններ կրթական բոլոր մակարդակների համար, որոնց գործունեությունը կարգավորվում է նույն իրավական և քաղաքական նորմերով, ինչ պետական հաստատություններինը:

Հայաստանում, սկսած 1997 թվականից, կրթական համակարգն ապրում է բարեփոխումների ժամանակաշրջան: Հանրակրթության ոլորտում հիմնական բարեփոխումնային ծրագրերից է Հանաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված «Կրթության ֆինանսավորման և կառավարման ծրագիրը» (1997-2002 թթ.)<sup>52</sup>: Այն հիմնականում ուղղված էր կրթության կառավարման ապակենտրոնացմանը, կրթական հաստատությունների ինքնակառավարման և կառավարման համար անհրաժեշտ իրավական հիմքերի ստեղծմանը, կրթական համակարգի ժողովրդավարացմանը, ուսումնական ծրագրերի բարեփոխմանը, դասագրքերի հրատարակմանը և շրջանառությանը:

Մասնագիտական կրթության ոլորտը նույնպես ենթարկվել է բարեփոխումների՝ ուղղված նախնական մասնագիտական կրթության համակարգի արդյունավետության բարձրացմանը (ՀՀ օրենսդրության մեջ օգտագործվում է «ռացիոնալացում» տերմինը), միջին մասնագիտական կրթության բնագավառում մասնագիտական ծրագրերի ընդլայնմանն ու ինքնակառավարման զարգացմանը և բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում հավատարմագրման գործընթացներին<sup>53</sup>:

«Կրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է կրթության ոլորտի պետական քաղաքականության սկզբունքները, ինչպես նաև կրթության հումանիտար բնույթը, հանաճարդկային արժեքների, անձի կյանքի և առողջության առաջնայնությունը, քաղաքացիական ինքնագիտակցության զարգացումը<sup>54</sup>:

## **Մարդու իրավունքների կրթությունը նախադպրոցական համակարգում { TC "Human Rights Education at the Pre-school Level" ¶ C ¶ "1" }**

Հայաստանում նախադպրոցական կրթությունը ընդհանուր կրթության բաղադրիչներից է և իրականացվում է մասունքներում՝ մեկուկեսից երեք տարեկան երեխաների համար ու մանկապարտեզներում՝ երեքից վեց տարեկան երեխաների համար: Գոյություն ունեն նաև մասուր-մանկապարտեզներ, որոնք միավորում են

<sup>50</sup>Տե՛ս՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ (7) հոդվածը:

<sup>51</sup>Նույն տեղում:

<sup>52</sup>Տե՛ս՝ 47-րդ հղումը:

<sup>53</sup>Նույն տեղում:

<sup>54</sup>«Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված:

այս երկու տարիքային խմբերը<sup>55</sup>: Ըստ ՀՀ վիճակագրական ծառայության տվյալների՝ 2003 թվականին գործել են 682 պետական<sup>56</sup> և 21 մասնավոր նախադպրոցական կրթական հաստատություններ,<sup>57</sup> ուր հաճախել է համապատասխան տարիքային խմբի երեխաների մոտավորապես 46,1 տոկոսը<sup>58</sup>:

«Կրթության նասին» ՀՀ օրենքում նշվում է, որ նախադպրոցական կրթությունը, ի լրումն մի շարք այլ նպատակների, կոչված է դնելու «ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման» հիմքերը<sup>59</sup>:

ՀՀ հանրակրթության պետական կրթակարգը սահմանում է նախադպրոցական կրթության չափորոշիչների ձևավորման սկզբունքները, սակայն հատուկ ուշադրություն չի դարձնում մարդու իրավունքների կրթության անհրաժեշտությանը նախադպրոցական կրթության ոլորտում,<sup>60</sup> չնայած նշվում է երեխաների խոսքի ազատությունը՝ որպես նախադպրոցական կրթության սկզբունքներից մեկը:

Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներ դեռևս գոյություն չունեն, ձևավորման փուլում են, ներկայումս նշակվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի կենտրոնի կողմից: Այդ կենտրոնի ներկայացուցիչը հարցազրույցի ընթացքում բացատրեց, որ ձևավորվող չափորոշիչները կը նդգրկեն մարդու իրավունքների կրթության վերաբերյալ դրույթներ՝ երեխաների իրավունքների և հանդուրժողականության, ոչ խտրական վերաբերմունքի ձևավորման և նման ուրիշ բաղադրիչներ:

### **Սարդու իրավունքների կոթության գնահատումը նախադպրոցական կրթության համակարգում { TC "Assessing Human Rights Education in Pre-School Education" №C V "2" }**

Այն հարցին, թե արդյոք մարդու իրավունքների կրթությունը պետք է ընդգրկվի նախադպրոցական կրթության ուսումնական ծրագրում, համարյա բոլոր պատասխանողները՝ միջազգային դոնոր և միջկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները, տեղական և արտասահմանյան ՀԿ-ները և պետական պաշտոնյաները, ինչպես նաև մարդու իրավունքների փորձագետները նշեցին, որ նախադպրոցական կրթության մեջ պետք է անպայման ընդգրկվեն մարդու իրավունքների կրթության տարրեր: Սարդու իրավունքների կրթության կարևորությունը այս տարիքում նրանք բացատրեցին այն նշանակալի դերով, որ այն կարող է ունենալ երեխայի ինքնագիտակցության ձևավորման և շրջապատի մարդկանց ու երևույթների նկատմանք հարգանքի, ուրիշների և սեփական իրավունքների գիտակցման գործում: Համարյա բոլոր հարցվողները նշեցին, որ մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքների հաղորդումն այս տարիքում պետք է իրագործել ոչ թե առանձին առարկաների ձևով, այլ խաղերի՝

<sup>55</sup>Տե՛ս «Կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (2001 թ.):

<sup>56</sup>Հայաստանի վիճակագրական տարեգիրը, 2004:

<http://www.armstat.am/StatData/2004/6%20Education.pdf>

<sup>57</sup>Ոչ պետական նախադպրոցական կրթական հաստատությունների թիվը նշված չէ 2004թ. վիճակագրական տարեգրքում, ուստի օգտագործվել են 2001 թվականի «Կրթության զարգացման պետական ծրագրի» տվյալները:

<sup>58</sup>Նախադպրոցական կրթական հաստատություններ հաճախող երեխաների թիվը 1991 թվականի համեմատությանք կտրուկ նվազել է, 39 տոկոսից մինչև 19,1 տոկոս:

<sup>59</sup>«Կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը նախադպրոցական կրթության մասին:

<sup>60</sup>Տե՛ս Հանրակրթության պետական կրթակարգ, 49-րդ հղում:

որպես հաղորդակցման ընդհանուր գործընթացի բաղկացուցիչ մասի՝ այդպիսով «սերմանելով մարդասիրություն» և զարգացնելով հոգատար վերաբերմունք մարդկանց, կենդանիների և շրջակա բնության նկատմամբ:

Մարդու իրավունքների որոշ տեղական փորձագետների պատասխանները կարելի է դիտել մարդու իրավունքների կրթության ոչ ճիշտ ըմբռնման ցուցանիշ: Օրինակ՝ փորձագետներից մեկը նշեց, որ երեխաներին պետք է սովորեցնել ազատ մտածել, բայց միաժամանակ «նրանք չպետք է մոռանան ծնողների իրավունքների մասին ևս»: Նա նաև զգուշացրեց, որ «կեղծ հեռուստահաղորդումները», որոնց ընթացքում ցուցադրում են երեխաների, որոնք խոսում են իրենց իրավունքների մասին, «ոչ մի դրական ազդեցություն չեն կարող ունենալ»: Մի այլ փորձագետ այն կարծիքին էր, որ «երեխան պետք է իմանա, որ ինքն այս կամ այն կարծիքը հայտնելու իրավունքն ունի: Դա արդեն ճանապարհի սկիզբն է. օրինակ՝ երեխան պետք է նույնիսկ գիտակցի, որ եթե մանկապարտեզի վարձը բարձրացրել են 100-ից 130 դրամ, ինքը պետք է պայքարի դրա դեմ»:

Ընդամենը երկու-երեք տեղացի հարցվողներ և մեկ հարցվող միջազգային կազմակերպությունից դեմ արտահայտվեցին նախադպրոցական կրթության մեջ մարդու իրավունքների կրթության ներդրմանը՝ բերելով այնպիսի փաստարկ, ինչպիսին է տարիքի անհամապատասխանությունը տեղեկատվություն և գիտելիքներ ստանալու համար: Նրանցից ոմանք այն կարծիքին էին, որ «երեխաները պետք մեծանան անհոգ և երջանիկ, ու կարիք չկա նրանց ծանրաբեռնել մարդու իրավունքներով»:

Երբ զրույցի ընթացքում խոսք եղավ նախադպրոցական կրթության համակարգում մարդու իրավունքների կրթության ներդրման ինարավոր խոչընդոտների մասին, հարցվողները հիմնականում տվեցին միօրինակ պատասխաններ: Գրեթե բոլորը նշեցին, որ չեն տեսնում որևէ էական խոչընդոտ, բացի պատրաստակամության բացակայությունից: Մի քանի տեղացի հարցվողներ խոչընդոտների շարքը դասեցին նաև հայկական ազգային մտածողությունը և երեխայի դաստիարակության ավանդական, մեզ հատուկ եղանակները:

Միջազգային դոնոր և միջկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների, տեղական և արտասահմանյան ՀԿ-ների ու պետական պաշտոնյաների, ինչպես նաև մարդու իրավունքների փորձագետների հետ անցկացրած հարցազրույցներից և առկա երկրորդային տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ նախադպրոցական կրթական համակարգում մարդու իրավունքների կրթության ծրագրեր ընդհանրապես չեն եղել՝ չհաշված «Վաղ մանկության զարգացման ծրագրի» շրջանակներում ՄԱԿ-ի Մանկական իիմնադրամի կողմից մարդու իրավունքների վերաբերյալ մի քանի պաստառների և օրացույցների տարածումը որոշ մանկապարտեզներում:

Նախադպրոցական կրթության մեջ մարդու իրավունքների կրթության ներգրավումը շատ երկրներում տարածված գործելակերպ է, հատկապես վերջին շրջանում ժողովրդավարացման ուղին բռնած երկրներում, որտեղ ժողովրդավարական մշակույթի և ավանդույթների խիստ պակաս կա: Նման քաղաքականության հաջողակ իրականացնողներից է Խորվաթիան: Խորվաթիայի

մարդու իրավունքների կրթության ազգային ծրագիրը<sup>61</sup> խիստ կարևորում է մարդու իրավունքների կրթության դերը նախադպրոցական տարիքում՝ պնդելով. «Ժողովրդավարական հասարակությունում կյանքի իիմքերը դրվում են երեխայի ամենավաղ հասակում, քանզի այն, ինչ մենք ձեռք բերում այդ տարիքում, տանում ենք մեզ հետ ողջ կյանքում...: Ինչի պակասը որ ունենում ենք, այլևս չի փոխհատուցվում ամբողջ հետագա կյանքի ընթացքում»<sup>62</sup>: Նախադպրոցական համակարգում մարդու իրավունքների կրթության ներգրավումը պետք է դիտարկել որպես բոլոր ուսումնական միջոցառումների և ծրագրերի հիմնական սկզբունք:

Դայաստանում նախադպրոցական կրթության համակարգում մարդու իրավունքների կրթության ընդգրկումը ցանկալի է, սակայն պետք է նշել, որ կան մի քանի լուրջ խոչընդոտներ, թեև դրանք չեն նշվել հարցվողներից և ոչ մեկի կողմից:

Առաջին խոչընդոտն այն է, որ նախադպրոցական կրթական հաստատությունների նյութական կացությունը զգալիորեն վատթարացել է վերջին 15 տարիների ընթացքում: Նախադպրոցական հաստատություններից շատերը գործում են չափազանց վատ շենքային պայմաններում և հիմնական անհրաժեշտ հարմարությունների խիստ պակաս ունեն: 1996 թվականից նախադպրոցական հաստատությունների վերահսկումը փոխանցվեց տեղական ինքնակառավարման մարմիններին, և ֆինանսավորումը հիմնականում սկսեց իրականացվել սահմանափակ ու աղքատիկ համայնքային բյուջեների հաշվին: Ֆինանսավորման կրծատումը հանգեցրեց նախադպրոցական ինքնարկների աշխատակազմի ցածր վարձատրության և նախադպրոցական կրթության համար անբավարար, խղճուկ հարմարությունների: Երեխաների դաստիարակության ընթացքում մարդու իրավունքների գաղափարների և արժեքների սերմանման կարևոր սկզբունքներից և ռազմավարություններից է այնպիսի միջավայրի ստեղծումը, որն առաջացնում է ջերմության, ապահովության և բավարարվածության զգացումներ, մի քան, որ շատ դժվար է ապահովել առկա պայմաններում:

Երկրորդ հիմնական խոչընդոտը նախադպրոցական կրթական հաստատությունների մանկավարժական և վարչական աշխատակազմի անհրաժեշտ մասնագիտական հմտությունների և գիտելիքների պակասն է: Ուսուցչի և դաստիարակի դերը, անձնային և մասնագիտական որակները կարևոր են, քանզի երեխան վաղ հասակում հաճախ նմանակում և ընդօրինակում է նրան: Դանապատասխան կրթական նյութերի և դիդակտիկ պարագաների բացակայությունը ևս էական խոչընդոտ է նախադպրոցական տարիքում մարդու իրավունքների կրթության համար:

#### Առաջարկություններ՝ TC "Recommendations" կ կ լ 2"

- Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը, որ ներկայումս մշակվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, պետք

<sup>61</sup> «Մարդու իրավունքների կրթության ազգային ծրագիր», Զագրեբ 1999, Մարդու իրավունքների կրթության ազգային ծրագրերի ժողովածու (ներառյալ մարդու իրավունքների միջոցառումների ազգային ծրագրերի համապատասխան քաղվածքները), [չխմբագրված տարբերակ], ՍԱԿ-ի մարդու իրավունքների հարցերի գերագույն հանձնակատարի գրասենյակ, ժմկ, 2001:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 21, պար. 2.

է նախադպրոցական կրթության ծրագրում ընդգրկի մարդու իրավունքների կրթության բաղադրիչներ:

- ՀՅ կրթության և գիտության նախարարությունը պետք է նախաձեռնի նախադպրոցական կրթական հաստատությունների աշխատողների վերապատրաստում: Հայաստանում ՍԱԿ-ի Մանկական հիմնադրամը և Երեխաների իրավունքներով զբաղվող ուրիշ կազմակերպություններ կարող են համագործակցել և մասնագիտական աջակցություն ցույց տալ:
- Օգտագործելով ՍԱԿ-ի Մանկական հիմնադրամի և Երեխաների իրավունքների հարցերով զբաղվող տեղական կազմակերպությունների ռեսուրսները՝ անհրաժեշտ է մշակել և հրատարակել մեթոդական ձեռնարկներ և այլ օժանդակ նյութեր նախադպրոցական հաստատությունների աշխատողների համար: Արդեն կան մի քանի պաստառներ Երեխաների իրավունքների վերաբերյալ՝ պատրաստված ՍԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի կողմից, և մուլտֆիլմների շարք՝ նկարահանված Ամերիկյան իրավաբանների ընկերակցության և «Իրավական նախաձեռնություն կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի համար» կազմակերպության հայկական մասնաճյուղի ջանքերով, որոնք կարող են օգտագործվել նախադպրոցական կրթության ծրագրում:
- Քանի որ նախադպրոցական հաստատությունները կոորդինացվում և ֆինանսավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, կարևոր է ապահովել այդ ծրագրերի կառավարման և ֆինանսավորման աշխատանքների պատշաճ և համակարգված վերահսկումը կառավարության կողմից:
- Տեղական ինքնակառավարման մարմինները և համայնքները պետք է համակարգված ձևով իրականացնեն ոլորտի պահանջների գնահատումը:

### **Մարդու իրավունքների կրթությունը միջնակարգ կրթության ոլորտում**

Ներկայում Հայաստանում կան տարրական, հիմնական և լրիվ միջնակարգ կրթական ծրագրերով 1443 դպրոցներ, ներառյալ 30 ոչ պետական և 54 հատուկ կրթության պայմանների կարիք ունեցող Երեխաների համար դպրոցները<sup>63</sup>: Ըստ ՀՅ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի տվյալների՝ հանրակրթական դպրոցներ հաճախող Երեխաների թիվը, պայմանավորված աղքատության աճով, աստիճանաբար նվազում է<sup>64</sup>:

Միջնակարգ կրթության ոլորտում որոշակի հաջողություններ են նկատվում կրթության կառավարման ապակենտրոնացման, բազմաթիվ առարկաների գծով ուսումնական ծրագրերի վերանայման, դասագրքերի իրատարակության և

<sup>63</sup> Տվյալները տրամադրել է ՀՅ գիտության և կրթության նախարարությունը, դրանք, ի դեպ, չեն համապատասխանում վիճակագրական ծառայության տվյալներին:

<sup>64</sup> ՀՅ Երեխաների իրավունքների պաշտպանության գործողությունների ազգային ծրագիր. 2004-2015: Հաստատված է ՀՅ կառավարության որոշմամբ, 2003թ. դեկտեմբերի 18-ին:

աշակերտներին դասագրքերով համատարած ապահովելու գործում: Հանրակրթության ոլորտը կարգավորող իրավական դաշտը նույնպես աստիճանաբար բարեփոխվում է. ստեղծվել և հաստատվել են միջնակարգ կրթության պետական և առանձին առարկաների չափորոշիչներ:

Հանրակրթության ոլորտը, ի լրումն «Կրթության մասին» օրենքի և «Կրթության զարգացման պետական ծրագրի», կարգավորվում է «Հանրակրթության պետական կրթակարգով»,<sup>65</sup> «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչներով»<sup>66</sup>: Վերջին երկու փաստաթղթերը, ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթության ազգային ինստիտուտի փոխտնօրենի, համարվում են «հանրակրթության սահմանադրությունը», քանզի դրանք հիմք են ծառայում պետական ուսումնական պլանների, առանձին առարկաների ծրագրերի և չափորոշիչների մշակման և ընդունման համար: Հանրակրթության պետական չափորոշիչները պետք է ներառեն 1) նախադպրոցական կրթության պետական, 2) միջնակարգ կրթության պետական, 3) հատուկ կրթության պետական և 4) առանձին առարկաների չափորոշիչները:

Ներկայումս ձևավորվել է միայն միջնակարգ կրթության պետական չափորոշիչը և հաստատվել ՀՀ կառավարության կողմից,<sup>67</sup> գործում են հատուկ կրթության և նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների մշակմաբ գրադպուտ աշխատանքային խմբեր և հանձնաժողովներ<sup>68</sup>: Ինչ վերաբերում է առարկաների չափորոշիչներին, շատ առարկաների համար դրանք դեռևս չեն ստեղծվել, ներառյալ ներկայումս ավագ դպրոցում դասավանդվող «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք» առարկաները:

Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթության ոլորտում քաղաքականության սկզբունքները և նշում, որ հանրակրթությունը պետք է իրականացվի ազգային և համամարդկային արժեքների հիման վրա, իսկ միջնակարգ հանրակրթական դպրոցի շրջանավարտը պետք է «իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, լինի օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող և հասարակական կյանքում գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի», «հարգի համանարդկային արժեքները»<sup>69</sup>:

Միջնակարգ հանրակրթական համակարգում մարդու իրավունքների կրթության ընդգրկման առաջին քայլը տարրական դպրոցի ուսուցիչների համար նախատեսված մարդու իրավունքների ձեռնարկի կիրառումն էր դպրոցում, որը կոչվում է «Բարև, ես եմ: Իմ իրավունքներն ու պարտականությունները»<sup>70</sup>: Այն հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից<sup>71</sup>: Ձեռնարկը

<sup>65</sup> Հաստատված է ՀՀ կառավարության որոշմամբ, 2004 թ. հունիսի 1-ին:

<sup>66</sup> Ներկայումս ՀՀ կառավարության 2000թ. (#226 Ն) որոշմամբ հաստատված պետական չափորոշիչները դեռևս գործում են, սակայն ըստ ՀՀ կառավարության 2004թ. #900-Ն որոշման՝ 2006թ. սեպտեմբերի 1-ից նախկին որոշումը կվորցնի իր ուժը և գործողության մեջ կորվի նույն որոշմամբ հաստատված միջնակարգ կրթության պետական չափորոշիչը:

<sup>67</sup> ՀՀ կառավարության # 900 որոշում (2004):

<sup>68</sup> Չափորոշիչները ձևավորվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի կենտրոնի կողմից:

<sup>69</sup> Տե՛ս 49-րդ հղումը:

<sup>70</sup> Բարև, ես եմ: Իմ իրավունքներն ու պարտականությունները: Լրացրության ուսումնական ձեռնարկ 1-3-րդ դասարանների համար: Փախստականների հարցերի նորվեգական խորհուրդ: Երևան, 2000:

<sup>71</sup> ՀՀ կրթության և գիտության նախարարության #425-Ն հրաման:

ստեղծվել է Փախստականների հարցերի նորվեգական խորհրդի Հարավային Կովկասի տարածաշրջանային ծրագրի շրջանակներում: Զեռնարկը համապատասխան նյութերի և մեթոդական հաճճարարականների ժողովածու է տարրական դպրոցի համար և ներկայումս որպես օժանդակ ձեռնարկ օգտագործվում է մեծ թվով դպրոցներում: Փախստականների հարցերի նորվեգական խորհրդի ներկայացուցիչը հարցազրույցի ընթացքում նշեց, որ նախնական մտադրությունը 5-7-րդ դասարանների համար մարդու իրավունքների ձեռնարկի հրատարակումն է եղել, սակայն փորձագետները խորհուրդ են տվել սկսել ավելի վաղ դասարաններից:

2000 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը որոշեց այսպես կոչված «իրավունք առարկայաշարը», «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք» առարկաներով, ընդգրկել հանրակրթական դպրոցի պետական ծրագրում<sup>72</sup>: Այս առարկաները, սկսած 2001 թվականից, ընդգրկվեցին 8-10-րդ դասարանների պետական պարտադիր առարկաների շարքում<sup>73</sup>: «Միջնակարգ դպրոցում «իրավունք առարկայաշարի» մուտքը պայմանավորված է մեր երկրում իրավական պետության կառուցման և հասարակության ժողովրդավարացման գործընթացներին նպաստելու, ներդաշնակ զարգացող, ինքնուրույն գործելակերպ և քաղաքացիական ինքնազիտակցություն ունեցող սերունդ դաստիարակելու անհրաժեշտությամբ»<sup>74</sup>: Այս առարկաների դասագրքերը հրատարակվել են<sup>75</sup> Հանաշխարհային բանկի «Կրթության որակի և համապատասխանության ծրագրի» շրջանակներում,<sup>76</sup> որը բաղկացած է իինգ քաղադրիչներից, ներառյալ «քարմագված և նորօրյա պահանջներին հարմարեցված հանրակրթության ուսումնական ծրագրի» մատուցումը<sup>77</sup>: «Իրավունք առարկայաշարի» դասավանդման համար մեթոդական ուղղություն ցույց տվող կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրվող միակ ձեռնարկը 70 էջանոց փոքրիկ գրքույկ է՝ նախատեսված բոլոր երեք առարկաների համար<sup>78</sup>:

<sup>72</sup> ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցների և ոլորտի այլ մասնագետների հետ ունեցած բազմաթիվ հարցազրույցների արդյունքում ԹՀՀԿ-Ն չկարողացավ պարզել, թե եղել է արդյոք որևէ հրաման կամ այլ փաստաթուղթ, բացի 2001թ. պետական ուսումնական պլանից, որի հիման վրա երեք առարկաները մուտքը են գործել պետական դասացուցակ: Նման փաստաթուղթ չկա նաև ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական հանակարգում, որը պարունակում է Հայաստանում երթև ընդունված ամեն տեսակի իրավական ակտերը:

<sup>73</sup> «Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2001-2002թթ. ուսումնական տարվա տիպային ուսումնական պլանները հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարության # 258-Մ հրաման:

<sup>74</sup> «Իրավունք առարկայաշարի վերաբերյալ մեթոդական նամակ», տե՛ս նույն տեղում, էջ 30:

<sup>75</sup> «Մարդու իրավունքներ» դասագրքի հեղինակներն են Հովհաննես Ստեփանյանը (հրավաբանական գիտությունների թեկնածու) և Նազիկ Հարությունյանը (մանկավարժական գիտությունների թեկնածու): «Քաղաքացիական կրթության» դասագիրքը հեղինակել է «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության գործադիր տնօրեն Արմենուիի Հովհաննիսյանը:

<sup>76</sup> Դասագրքերի հրատարակության համար հայտարարված մրցույթը շահել է «Տիգրան Մեծ» տպագրատունը:

<sup>77</sup> Տես՝ Համաշխարհային բանկի պաշտոնական կայքը.

<http://www.worldbank.org.am/external/default/main?pagePK=64027221&priPK=64027220&theSitePK=301579&menuPK=301610&Projectid=P074503>

<sup>78</sup> Հարությունյան Ն., Վաղարշյան Ա. Իրավունք. մարդու իրավունքներ, քաղաքացիական կրթություն, պետություն և իրավունք: 8-10-րդ դասարաններ, մեթոդական ձեռնարկ: Երևան, «Տիգրան Մեծ», 2004:

Միջնակարգ հանրակրթական դպրոցում յուրաքանչյուր առարկայի համար պետական ծրագրով տարեկան նախատեսվում է 34 դասաժամ (շաբաթական մեկ դասաժամ): Հատուկ կրթությամբ դպրոցի համապատասխան դասարանի աշակերտների համար մարդու իրավունքներ առարկան պարտադիր չեն, այն դեպքում, եթե քաղաքացիական կրթությունը ընդգրկված է նման դպրոցների ծրագրում (օրինակ՝ տեսողական, լսողական և խոսակցական դժվարություններ ունեցող երեխաների հատուկ դպրոցներում)<sup>79</sup>:

## **Միջնակարգ հանրակրթության ուսուցում մարդու իրավունքների կոթության այլ ծրագրեր**

Բացի «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» առարկաներից, որոնք 8-րդ և 9-րդ դասարաններում դասվում են պետական պարտադիր առարկաների շարքը, միջնակարգ դպրոցներում եղել են նաև երկու փորձնական բնույթի ծրագրեր: Բացի դրանից, մի քանի դուրս կազմակերպություններ տարբեր դպրոցներում ֆինանսավորել են մարդու իրավունքների կրթության զանազան ոչ մեծ ծրագրեր: Օրինակ՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը ֆինանսավորել է ավելի քան մեկ տասնյակ նման ծրագրեր, որոնցից մի քանիսը շարունակվել են մի քանի տարի (տե՛ս Հավելված Դ-Ա):

2003-2004 թվականներին «Փրոցեքք Հարմոնի» կազմակերպության ջանքերով և ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի ֆինանսավորմամբ «Զանգ» ծրագրի փորձարկումը<sup>80</sup> հանրապետության տարբեր մարզերի 70 դպրոցներում բավական հաջողված ծրագիր էր, որի նպատակն էր «իրավական սոցիալականացման» գործընթացի խթանումը, աշակերտներին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գիտելիքների մատուցումը, գործնական առաջադրանքների, տարբեր հանդիպումների և ոստիկանության աշխատակիցների հետ անցկացվող քննարկումների միջոցով պատահիներին իրավական տեղեկատվությամբ և քաղաքացիական հնտություններով զինելը: Ծրագրի շրջանակներում իրատարակվել է ձեռնարկ ուսուցիչների և աշակերտների հետ աշխատող ոստիկանության աշխատակիցների համար<sup>81</sup>: Ձեռնարկը տեսական նյութերի, իրավական փաստաթղթերի և գործնական խնդիրների ժողովածու է: Ձետեղված նյութերն ուղեկցվում են գործնական առաջադրանքներով, իրադրություններով, ընդգրկված թեմաների դասավանդման մեթոդական ցուցումներով: «Փրոցեքք հարմոնին» մտադիր է իրատարակել ձեռնարկի երկրորդ, բարեփոխված տարբերակը:

Երկրորդ փորձնական ծրագիրը, որի մասին նշվել էր, ԱՄՆ Պետդեպարտամենտի կրթական և մշակութային գործերի բյուրոյի կողմից տրված դրամաշնորհով, Հայաստանի քաղաքացիական կրթության ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնի և Վերապատրաստման ու զարգացման ինստիտուտի ջանքերով միջնակարգ դպրոցում իրականացված քաղաքացիական կրթության և

<sup>79</sup> Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2004-2005 թթ. ուսումնական տարվա տիպային ուսումնական պլաններ: ՀՀ կրթության և գիտության նախարարության տեղեկագիր, թիվ 1-2, 2004:

<sup>80</sup> Ծրագիրը երկարացվել է և շարունակվում է 2005-ին:

<sup>81</sup> Ուլրյան Ն. և Ուրիշներ Իրավական խճանկար: Ձեռնարկ ուսուցիչների և անչափահասների հետ աշխատող ոստիկանների համար: Երևան, «Ասողիկ», 2004:

ժողովրդավարության հիմնարար արժեքների ուսուցման ընթացիկ ծրագիրն է՝ սկսված 2003 թվականից: Այն ընդգրկում է հանրապետության 80 դպրոցներ: Ծրագրի շրջանակներում վեց ուսուցիչներ վերապատրաստվել են Միացյալ Նահանգներում և աջակցել աշակերտի<sup>82</sup> և ուսուցչի<sup>83</sup> ձեռնարկների մշակմանը: Դրանք հրատարակել է ՀՀ կրթության և գիտության նախարարությանն առընթեր Կրթության ազգային ինստիտուտը և տարածել ծրագրին մասնակից դպրոցներում: Ուսուցիչների հետ խմբային քննարկումների ընթացքում երկու ուսուցչ, որոնք ծանոթ էին ծրագրին, բարձր գնահատական տվեցին թե՛ դասագրքին, թե՛ ուսուցչի ձեռնարկին և առաջարկեցին դրանք բաժանել բոլոր դպրոցներին: Ձեռնարկներում ներկայացված են դասավանդման արդյունավետ մեթոդներ, ներառյալ իրավիճակային, խաղային և գործնական առաջադրանքները, որոնք հեշտությամբ կարող են ծառայել որպես օժանդակ նյութ քաղաքացիական կրթություն և մարդու իրավունքներ առարկաների դասավանդման համար: Կրթության և գիտության նախարարությունը Միջազգային հետազոտությունների և փոխանակման խորհրդի (Այրեքս) աջակցությամբ նախատեսում է նոր ձեռնարկի հրատարակում, որը հնարավորություն կտա բոլոր առարկաների ուսուցիչներին դասավանդումն իրականացնելու ժողովրդավարության և մարդու իրավունքների սկզբունքների հիման վրա:

## Ուսուցիչների և վարչական աշխատակազմի վերապատրաստումները

Ուսուցիչների՝ մարդու իրավունքների գծով վերապատրաստման երեք խոշոր ծրագրեր են իրականացվել Փախստականների հարցերի նորվեգական խորհրդի, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության և Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի կողմից:

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և վարչական անձնակազմի առաջին ծրագիրը Հայաստանում իրականացվել է Փախստականների հարցերի նորվեգական խորհրդի կողմից: Նախապես՝ 1997 թվականին, կազմակերպվել է երկու սեմինար պատմության ուսուցիչներից և իրավաբաններից բաղկացած փոքր խմբերի համար: Տարրական դպրոցի ուսուցիչների համար նախատեսված «Բարև, ես եմ: Իմ իրավունքներն ու պարտականությունները» ձեռնարկի հրատարակումից հետո Փախստականների հարցերի նորվեգական խորհրդության կրթական բարեփոխումների կենտրոնի աջակցությամբ և Կրթության ու գիտության նախարարության հրամանով իրականացրեց ուսուցիչների լայնածավալ վերապատրաստումներ՝<sup>84</sup>: Վերապատրաստման ծրագրի նպատակը մասնակիցներին մարդու իրավունքներին և մարդու իրավունքների կրթությանը ծանոթացնելն էր և տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված առարկաների դասավանդման ընթացքում մարդու իրավունքների թեմաների և

<sup>82</sup> Խաչատրյան Ս. և այլք. Քաղաքացիական կրթություն. Ժողովրդավարության հիմնարար արժեքներ: Ուսումնական ձեռնարկ հանրակրթական դպրոցի 8-րդ (9-րդ) դասարանի համար: Երևան, 2004:

<sup>83</sup> Խաչատրյան Ս. և այլք. Ուսուցչի ձեռնարկ. Քաղաքացիական կրթություն. Ժողովրդավարության հիմնարար արժեքներ: Երևան, 2004:

<sup>84</sup> Տես 71-րդ հղումը:

սկզբունքների կիրառումը<sup>85</sup>: Ըստ Փախստականների հարցերի նորվեգական խորհրդի ներկայացուցչի տրամադրած տեղեկատվությամ՝ ծրագրի շրջանակներում 1999-2003 թվականների ընթացքում վերապատրաստվել են մոտ 5000 ուսուցիչներ, դպրոցների տնօրեններ,<sup>86</sup> դպրոցներում աշխատող բուժքուրեր և տնտեսվարներ: Վերապատրաստման ծրագիրն ընդգրկում է հիմնական տեղեկություններ մարդու իրավունքներ հասկացության վերաբերյալ, արծարծում է մարդու իրավունքների կրթության կարևորությունը և մարդու իրավունքների դասավանդման տարբեր մեթոդներ<sup>87</sup>:

Ըստ Փախստականների հարցերի նորվեգական խորհրդի՝ կենտրոնական իշխանությունների, հատկապես կրթության և գիտության նախարարության հետ սերտ համագործակցությունը նպաստել է ծրագրի նպատակների հաջող իրականացմանը<sup>88</sup>: Նշվել է նաև ծրագրի ընթացքում նոր մեթոդների կիրառման նկատմամբ ուսուցիչների վերաբերմունքի և մոտեցումների տարբերությունը՝ պայմանավորված տարիքային և սեռային գործոններով. Երիտասարդ կին ուսուցիչները ավելի պատրաստական են գտնվել նոր մեթոդների յուրացման և կիրառման հարցում, քան ավելի տարեց տղանարդ ուսուցիչները, որոնք ավելի պահպանողական և թերահավատ են գտնվել<sup>89</sup>: Խմբային քննարկումներին տարբեր քաղաքներից և գյուղերից մասնակցած 50 ուսուցիչներից ընդամենը երեքն էին տեղյակ և մասնակցել էին Փախստականների հարցերի նորվեգական խորհրդի կազմակերպած վերապատրաստման ծրագրին: Նրանք նշեցին ծրագրի այնպիսի թերություններ, ինչպիսիք են ծրագրի կարճատևությունը և չափազանց հագեցած ընթացքը, ինչպես նաև չափից ավելի կենտրոնացումը մեթոդների վրա:

Մարդու իրավունքների ոլորտում ուսուցիչների համար նախատեսված երկրորդ խոշոր վերապատրաստման ծրագիրն իրականացրել է «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը 1998-2004 թվականներին ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ և Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության ֆինանսական միջոցներով<sup>90</sup>: «Պատանեկան նվաճումները» նախապես իրականցրել է ուսուցանողների ուսուցում 53 ազգային կենտրոնների համար, որին մասնակցել են հիմնականում համրակրթական դպրոցների պատմության ուսուցիչներ: Ուսուցանողների մոտ 80 տոկոսը վերապատրաստվել է Միացյալ Նահանգներում, այնուհետև՝ 2001-2004 թթ. Հայաստանում նրանց միջոցով իրականացվել են «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք» առարկաները դասավանդել պատրաստվող ուսուցիչների զանգվածային վերապատրաստումներ: Յուրաքանչյուր առարկայի համար վերապատրաստումը տևել է մոտ հինգ ամիս՝ ներառելով դասընթացը՝ շաբաթական երեք օր, քննություններ, շաբաթ և կիրակի օրերին անցկացվող սեմինարներ՝ տարբեր մասնագետների մասնակցությամբ, այցելություններ

<sup>85</sup> Մարդու իրավունքների դասավանդման ծրագիրը տրամադրել է Փախստականների հարցերի նորվեգական խորհրդի ներկայացուցիչը:

<sup>86</sup> Փախստականների հարցերի նորվեգական խորհրդի ներկայացուցիչը հարցազրույցի ընթացքում նշել է, որ վերապատրաստվել են Երևանի 42, Շիրակի մարզի 153,, Գեղարքունիքի 117 և Սյունիքի 149 տնօրեններ և ուսուցիչներ:

<sup>87</sup> Brochmann, H. and K. E. Midttun, NRC, "Human Rights Education and Peace Building" in *Current Issues in Comparative Education*, 2(1), 2001, at: <http://www.tc.columbia.edu/cice/articles/hbem121.htm>

<sup>88</sup> Նույն տեղում:

<sup>89</sup> Նույն տեղում:

<sup>90</sup> <http://www.usaid.gov/am/activitypages/jaa2003.html>

Ազգային ժողով, Սահմանադրական դատարան և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ: Ուսուցիչների վերապատրաստման դասընթացի ծրագրի հետազոտումը ցույց տվեց, որ այն կազմակերպվել է «իրավունք բլոկի» առարկաների առարկայական ծրագրերի և դասագրքերի հիման վրա:

«Պատանեկան նվաճումները» վերապատրաստման ծրագրի ավարտից հետո էլ շարունակում է աջակցություն ցույց տալ ուսուցիչներին՝ տրամադրելով զանազան նյութեր ու թարմ տեղեկատվություն և կազմակերպելով տարբեր միջոցառումներ:

Խնճային քննարկումների ընթացքում ուսուցիչները երախտագիտություն և գոհունակություն հայտնեցին ծրագրի առնչությամբ՝ նշելով, որ սեմինարները բավական արդյունավետ են եղել, և տրամադրված մեթոդական ցուցումներն ու նյութերը՝ շատ օգտակար: Հայաստանում «Պատանեկան նվաճումներ» կազմակերպության ծավալած գործունեության վերաբերյալ դրական կարծիք են հայտնել նաև միջազգային և տեղական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ ու փորձագետներ:

«Պատանեկան նվաճումներ» կազմակերպության ներկայացուցիչները մատնանշեցին մի քանի հանգամանքներ, որոնք խոչընդոտել են վերապատրաստման ծրագիրը, ներառյալ դպրոցների տնօրենների՝ ծրագրում «իրենց բարեկամներին» ընդգրկելու փորձերը, որոնք չեն համապատասխանել ծրագրի պահանջներին, և կառավարության «օպտիմալացման» քաղաքականությունը, որի հետևանքով կրճատվել են վերապատրաստում անցած ուսուցիչներ:

Ուսուցիչների վերապատրաստման երրորդ խոշոր ծրագիրն իրականացվում է Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի կողմից Վանաձորի Մարդու իրավունքների դպրոցում, որը գործում է 1996 թվականից: Կենտրոնը նախապես մարդու իրավունքների գծով վերապատրաստման դասընթացներ է կազմակերպել ոչ միայն ուսուցիչների, այլև լրագրողների, իրավաբանների, ՀԿ-երի ներկայացուցիչների և ուսանողների համար, բայց հանրակրթական դպրոցում «իրավունք» առարկայաշարի ներդրումից սկսած՝ ծանրացել է միայն այդ առարկայաշարը դասավանդող ուսուցիչների վերապատրաստման վրա: Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը կրթության և գիտության նախարարության համաձայնությամբ ստանձնել է 2002-2006 թվականների ընթացքում 400 ուսուցիչների վերապատրաստման աշխատանքը, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ ուսուցչի ձեռնարկների և այլ օժանդակ նյութերի հրատարակությունը<sup>91</sup>:

Մարդու իրավունքների դպրոցը կազմակերպում է միամյա դասընթացներ՝ բաղկացած երեք ընթացիկ քննաշրջաններից (յուրաքանչյուրի տևողությունը՝ 30 օր), և 11-ամսյա հեռակա ուսուցման ծրագիր: Մասնակիցներն ընտրվում են մրցակցային հիմունքներով և պարտադիր պայմանների բավարարման սկզբունքով, որոնցից մեկն էլ նախկինում «Պատանեկան նվաճումների» կողմից հրականացված վերապատրաստման ծրագրի մասնակցությունն է<sup>92</sup>: Մարդու

<sup>91</sup> Մինչ օրս վերապատրաստվել են մոտ 280 ուսուցիչներ: 2001 թվականի հունվարի 24-ին Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի և ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական բարեփոխումների կենտրոնի կողմից ստորագրվել է «Մտադրությունների արձանագրություն» :

<sup>92</sup> Մարդու իրավունքների դպրոցում ընդունելության պահանջների վերաբերյալ մանրամասն տես՝ <http://www.acrpc.am/eng/downloads/Guidelines-eng.doc>

իրավունքների դպրոցը ֆինանսական աջակցություն է ստացել մի քանի դոնոր կազմակերպություններից, ներառյալ Զարգացման համագործակցության միջեկեղեցական կազմակերպությունը, «Քորդեյդը» և Փախստականների հարցերի դանիական խորհուրդը:

Քննարկումներին մասնակցած ուսուցիչներից չորսը, որոնք ներկայումս սովորում են Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի Մարդու իրավունքների դպրոցում, գոհունակությամբ նշեցին կազմակերպիչների համակարգված մոտեցումը դասընթացին և ծրագրի արդյունավետությունը՝ պայմանավորված մյուս ծրագրերի համեմատ ուսուցման ավելի երկար ընթացքով:

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի վերապատրաստման ծրագրի թեմատիկ այլանը ներառում է «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք» առարկաների թեմաները, ինչպես նաև ծավալուն մաս այս երեք առարկաների դասավանդման վերաբերյալ<sup>93</sup>:

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի վերապատրաստման դասընթացը, ի տարբերություն «Պատանեկան նվաճումների» և Փախստականների հարցերի նորվեգական խորհրդի ծրագրերի, ընտրովի ուսուցման հնարավորություն է ընձեռում. մասնակիցներն իրենք են ընտրում այն թեմաները, որոնք ցանկանում են ավելի խորությամբ ուսումնասիրել:

### **Հանրակրթական դպրոցում մարդու իրավունքների կրթության գնահատում՝ TC "Assessing Human Rights Education in General Schools" Վ C Վ "2"՝**

Հանրակրթական դպրոցում մարդու իրավունքների կրթության գնահատման նպատակով առանձնացվել է «իրավունք բլոկի» երկու առարկա՝ «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն», որոնք ուսումնասիրվել և վերլուծվել են ԹՀՀԿ-ի կողմից, ներառյալ դասագրքերը, առարկայական ծրագրերը և մեթոդական ձեռնարկները<sup>94</sup>:

Դպրոցը նշանակալի դեր է խաղում անձի մտավոր, բարոյական և սոցիալական հմտությունների զարգացման գործում: Մարդու իրավունքները պետք է դասվանդվեն ոչ միայն առանձին առարկայի ձևով, կրթությունը պետք է իրականացվի մարդու իրավունքների սկզբունքների հիման վրա: Մարդու իրավունքների կրթությունը պետք է արտադրողական կրթության մաս լինի, օրինակ՝ այնպիսի միջոցառումների ձևով, ինչպիսին է կամավոր հիմունքներով համայնքային ծառայությունը: Ներկայումս հանրակրթական դպրոցում դասավանդվող «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» առարկաները կարող են այսուհետ և ուսուցանվել ավագ դպրոցում դասագրքերի բարելավումից և որոշ փոփոխություններից հետո: Սակայն, ինչպես հաճախ նշվել է նաև հարցազրույցների ընթացքում, մարդու իրավունքների առարկաները անհմաստ կլինեն, եթե մյուս առարկաները հանրակրթական դպրոցում դասավանդվեն «ավտորիտար եղանակով»: Դպրոցի ընդհանուր մթնոլորտը պետք է խթանի յուրաքանչյուր աշակերտի՝ ազատորեն արտահայտելու սեփական

<sup>93</sup> Վերապատրաստման թեմատիկ ծրագիրը կարող եք գտնել. <http://www.acrpc.am/eng/Course-programme.html>

<sup>94</sup> Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի խնդրանքով «Պետություն և իրավունք» բաղադրիչը չի ընդգրկվել այս գնահատման մեջ:

տեսակետներն ու համոզմունքները և պաշտպանի աշակերտների արժանապատվությունն ու անձնական կյանքի անձեռնմխելիությունը։ Յարկ է, որ մեծահասակներն ամեն ինչ անեն՝ բացահայտելու երեխայի ներուժը, ոչ թե վախենան նրանց շատ լիազորություններ տալուց։

Ի վերջո, «Մարդու իրավունքների կրթության գերազույն նպատակը իրավահավասար և պատասխանատու քաղաքացիներից կազմված ապահով, կայուն և խաղաղ համայնքի կառուցումն ու պահպանումն է, որտեղ յուրաքանչյուր ոք իր ազատությունը չափում է մյուսների ազատությամբ»<sup>95</sup>։

### **Հանրակոթական դարոցում մարդու իրավունքների կրթության գնահատումը ուսուցիչների կողմից**

Հետազոտության շրջանակներում իրականացվել են վեց խնբային քննարկումներ Յայաստանի տարբեր քաղաքների և գյուղերի «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» առարկաների ուսուցիչների հետ՝ առարկայական ծրագրերի, պետական դասացուցակի և ժամաքանակի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների և ուսուցիչների համար անցկացված վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև դպրոցում մարդու իրավունքների կրթության հնարավոր խոչընդոտների վերաբերյալ նրանց կարծիքը և վերաբերնունքը պարզելու համար։

Բոլոր ուսուցիչներն այն կարծիքին էին, որ մարդու որոշ իրավունքներ հակասում են հայկական մշակույթին, ավանդույթներին և ազգային մտածողությանը, ինչպես օրինակ՝ սեռական փոքրամասնությունների իրավունքները, կրոնի/դավանանքի ազատությունը և կրոնը փոխելու իրավունքը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը։ Մայրաքաղաքի ուսուցիչները նվազ քննադատաբար էին մոտենում այս հարցին, քան մյուս քաղաքների և գյուղերի ուսուցիչները, շատ ուսուցիչներ հայկական ավանդույթները վեր էին դասում մարդու իրավունքների սկզբունքներից։ Մի քաղաքում ուսուցիչներից մեկը մտահոգված էր, որ կանանց իրավունքների մասին խոսելը կիանգեցնի հայկական ընտանիքների փլուզմանը։ «Եթե մարդու իրավունքները կործանում են ազգային ավանդույթները, ապա դրանք չեն կարող արդարացված համարվել», - ասում էր նա։

Գրեթե բոլոր ուսուցիչները նշել են, որ «մարդու իրավունքները» ամենասիրված առարկաներից մեկն է իրենց դպրոցում, և նույնիսկ այն աշակերտները, որոնք մշտապես ցածր գնահատականներ են ստանում մյուս առարկաներից, շատ բարձր առաջադիմություն են ցուցաբերում «մարդու իրավունքներ» առարկայի ուսուցման ընթացքում։ Այնուամենայնիվ շատ ուսուցիչներ, հատկապես գյուղական դպրոցներից, դժգոհեցին տպագիր օժանդակ նյութերի, դիդակտիկ պարագաների զգալի պակասից և համակարգիչների ու ինտերնետի բացակայությունից։

Ուսուցիչները կարևորում էին դպրոցում մարդու իրավունքների դասավանդումը և բազմաթիվ օրինակներ էին բերում աշակերտների վարվեցողության և մտածողության վրա «մարդու իրավունքներ» առարկայի գործած դրական ազդեցությունը ցույց տալու նպատակով։ Օրինակ՝ նրանք նշում

<sup>95</sup> Տես՝ ծանոթագրություն 61

էին, որ նկատելի փոփոխություն է տեղի ունեցել աշակերտների հայագրներում հաշմանդամների առնչությամբ: Եղել են դեպքեր, երբ աշակերտները փորձել են օգնել և աջակցել հաշմանդամներին, մինչդեռ նախկինում կարծես վախենում էին հաշմանդամներից: Աշակերտները փոխել են վերաբերմունքը նաև իրենց այն համադասարանցիների հանդեպ, ովքեր հարում են որևէ կրոնական փոքրամասնության: Ուսուցիչները պնդում էին, որ մարդու իրավունքների դասավանդման նման ազդեցությունը տարածվել է նաև աշակերտների ծնողների և տատիկների ու պապիկների վրա, որոնք նույնպես կարդում են «մարդու իրավունքներ» և «քաղաքացիական կրթություն» առարկաների դասագրքերը:

Շատ ուսուցիչներ հավաստում էին, որ իրենք հաճախ են բանավիճում մյուս առարկաների ուսուցիչների և դպրոցի տնօրինության հետ, քանի որ վերջիններս դժգոհում են, որ իրենց իրավունքների վերաբերյալ գիտելիքների հարստացման, ինչպես նաև ինտերակտիվ մեթոդներով անցկացվող դասաժամերին ընտելանալու արդյունքում աշակերտներն իրենց «լավ չեն պահում» մնացած դասերին: Նման խնդիրներ են առաջացել նաև որոշ ընտանիքներում, և մի քանի ծնողներ գանգատվել են ուսուցիչներին՝ սեփական իրավունքների հարգման պահանջների կապակցությամբ: Ուսուցիչներից մեկը պատմեց, թե ինչպես մի գյուղում ծնողները իրաժարվել են վերցնել «մարդու իրավունքներ» առարկայի դասագիրքը և պահանջել են, որ առարկան հանվի դասացուցակից՝ մտավախություն հայտնելով, որ երեխաներն իրենց իրավունքների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերման հետևանքով անհնազանդ կդառնան և հայկական ավանդական ընտանիքում պրոբլեմներ կստեղծեն:

Ուսուցիչների մեջ մասը նշել է, որ 8-րդ դասարանի «Մարդու իրավունքներ» դասագիրքը գրված է մատչելի լեզվով և շատ հեշտ յուրացվում է աշակերտների կողմից: Որոշ ուսուցիչներ նշում էին, որ դասագիրքը չափազանց պարզունակ է 8-րդ դասարանի համար և ավելի հարմար է 6-րդ կամ 7-րդ դասարանների աշակերտների համար: Դասագրքի թերությունների շարքում ուսուցիչները նատնանշում էին Հայաստանի վերաբերյալ օրինակների և լուսանկարների պակասը, որոնք հնարավորություն կընձեռեին աշակերտներին ավելի հեշտությամբ ընկալելու նյութը: Նշվում էր նաև պահանջանակ դասագրքում գետեղված տեքստերի և Հայաստանի իրականության անհամապատասխանությունը, մարդու իրավունքների առկա խնդիրների անբավարար լուսաբանումը (օրինակ՝ փախստականների և սոցիալ-տնտեսական իրավունքները), ինչպես նաև հնացած, ժամանակավեպ տեղեկատվության առկայությունը դասագրքում:

«Քաղաքացիական կրթություն» առարկայի դասագրքի վերաբերյալ կարծիքները հակասական էին. որոշ ուսուցիչներ դժգոհում էին, որ դասագիրքը շատ ակադեմիական է և դժվար ընկալելի 9-րդ դասարանցիների համար, մինչդեռ մի մասը պնդում էր, որ դասագիրքը շատ հաջողված է: Ընդհանուր առմանք ուսուցիչներն առանձնացնում էին մեծ թվով հնացած, փոփոխման ենթակա տեղեկատվության օրինակներ և նշում, որ պետք է թարմացնել թե՝ բովանդակությունը, թե՝ լուսանկարները:

Բոլորը, ներառյալ գյուղական դպրոցների ուսուցիրները, հավաստում էին, որ իրենք «մարդու իրավունքներ» և «քաղաքացիական կրթություն» առարկաները դասավանդում են ինտերակտիվ մեթոդով: Ուսուցիչներից շատերը նույնիսկ գնահատական չեն դնում աշակերտների պատասխաններին, բացառությամբ ամփոփիչ թեստերի: Մեծ թվով ուսուցիչներ օգտագործում են «Պատանեկան

նվաճումների», ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի և ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության (ՀՏՎ) տրամադրած պաստառները, նաև իրենք են հորդորում աշակերտներին նոր պաստառներ ստեղծել և հաճախ իրենց դպրոցներում կազմակերպում են լավագույն պաստառի մրցույթներ: Համակարգչային դասարաններ ունեցող դպրոցների ուսուցչների խոսքերով, հաճախ «մարդու իրավունքների» դասաժամները անցկացվում են համակարգչային լսարաններում՝ օգտագործելով մարդու իրավունքների վերաբերյալ ինտերնետային ռեսուրսները: Շատ դպրոցներում «մարդու իրավունքներ» և «քաղաքացիական կրթություն» առարկաների շրջանակներում կազմակերպվում են դատավարություններ և ընտրություններ, նաև «ՄԱԿ-ի մոդել» դերախաղը:

Հատուկենտ ուսուցիչներ, որոնք «իրավունք» առարկայաշարի՝ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված ձեռնարկը ձեռք բերելու դրան ծանոթանալու հնարավորություն էին ունեցել, բնավ բավարարված չէին և նշում էին, որ այն չի պարունակում նանրամասն մեթոդական ցուցումներ, ցույց է տալիս միայն «ինչ անել», բայց ոչ «ինչպես անել», և ընդհանուր առմամբ չի ծառայում իր նպատակներին: Ուսուցիչները շեշում էին նոր ձեռնարկի ստեղծնան անհրաժեշտությունը, ծայրահեղ դեպքում բոլոր ուսուցիչներին Հայկական սահմնադրական իրավապաշտպան կենտրոնի<sup>96</sup> և Կրթության ազգային ինստիտուտի կողմից իրատարակված ձեռնարկները տրամադրելու նպատակահարմարությունը:

Ուսուցիչները համակարծիք էին, որ «մարդու իրավունքներ» և «քաղաքացիական կրթություն» առարկաներին հատկացված ժամաքանակը (շաբաթական մեկ դասաժամ) չի բավականացնում առարկայական ծրագրերում նշված բոլոր թեմաների դասավանդման համար, հատկապես եթե դասերն անց են կացվում ինտերակտիվ մեթոդի կիրառմամբ, ինչը լրացնուիչ ժամանակ է խլում: Շատ ուսուցիչներ պնդում էին, որ անհնար է 45 րոպեի ընթացքում համապատասխան ձևով ձևափոխել դասասենյակը, կախել պաստառները, պատրաստել մնացած օժանդակ նյութերը և կազմակերպել դասը, ուստի անհրաժեշտ է կամ ավելացնել այս առարկաներին հատկացված ժամաքանակը, կամ տրամադրել հատուկ հարմարեցված լսարաններ, ինչպիսիք, ըստ մի քանի ուսուցիչների, գոյություն ունեն որոշ դպրոցներում: Ուշագրավ է, որ Մարտունի քաղաքի ուսուցիչներին հաջողվել էր, գրավոր դիմում ներկայացնելով Գեղարքունիքի մարզպետարան, լրացնուիչ դասաժամներ ստանալ «իրավունք բլոկի» բոլոր երեք առարկաների համար: Արդեն երեք տարի է՝ մարզի 98 դպրոցներում տվյալ առարկաներին շաբաթական 2-ական ժամ է հատկացվում:

Եթե ուսուցիչներին հարցրեցինք, թե արդյոք իրենք հետևո՞ւմ են մարդու իրավունքների ոլորտում տեղի ունեցող միջազգային և տեղական հրադարձություններին, և հնարավո՞ր է արդյոք հայերեն համապատասխան նյութեր ձեռք բերել նման տեղեկատվության համար, ինչպես օրինակ՝ տարբեր պայմանագրային մարմիններին Հայաստանի ներկայացրած գեկույցները և դրանց հետևող եզրափակիչ արձանագրություններն ու առաջարկները, ԱՄՆ Պետդեպարտամենտի, «Ամերիկայի ինտերնեյշնը» և այլ կազմակերպությունների կողմից հրատարակվող տարեկան գեկույցները, մարդու իրավունքների ոլորտում տարբեր իրադարձությունների, ներառյալ վեհաժողովների և հանդիպումների, ինչպես նաև Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի

<sup>96</sup> Մանուկյան Գ. և այլք. Մարդու իրավունքներ: Զերնարկ ուսուցչի համար: Վանաձոր, 2002:

գործունեության վերաբերյալ տեղեկություններ, նրանք պատասխանեցին, որ եթե նույնիսկ ժամանակ ունենային, որ չունեն, անչափ դժվար կլիներ հայերեն կամ ռուսերեն նման նյութեր գտնել, եթե մանավանդ ինտերնետը հասանելի չէ, ինչպես ուսուցիչներից մեծ մասի պարագայում: Դամարյա բոլոր ուսուցիչները նշում էին, որ մարդու իրավունքների ոլորտի հիմնական տեղեկատվությունը ստանում են հեռուստացույցից և թերթերից: Քննարկումներից մեկի ժամանակ ուսուցիչներից մեկն առաջարկեց քվեարկել՝ պարզելու համար, թե ներկա գտնվողներից քանիսն են քաջատեղյակ նման հարցերին: Արդյունքում պարզվեց, որ 13 ուսուցիչներից միայն մեկն էր «աչքի անցկացրել» «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը:

Ուսուցիչների հետ անցկացրած վեց քննարկումների տպավորություններից մեկն այն է, որ հաճախ իրենք իսկ ուսուցիչներն են խճճվում երեխաների իրավունքներին վերաբերող հարցերում, չգիտեն, թե ինչ իրավունքներ ունեն երեխաները, ինչը դասավանդել, և ինչը՝ ոչ: Տիպական է ուսուցիչների հետևյալ ակնարկը. «Դասագրքում կա մի դրույթ, ըստ որի՝ երեխաները անձնական կյանքի անձեռնխելիության իրավունք ունեն, այսինքն՝ նրանք կարող են փակվել սենյակում և զբաղվել ինչով ուզում են: Իմ կարծիքով սա շատ վտանգավոր է, և նման բաներ չպետք է ուսուցանվեն»: Ուսուցիչներից մեկը ուրիշը պատմեց մի իրադրության մասին. աշակերտը հարցել է, թե արդյոք ուսուցիչն իրավունք ունի՞ խփելու աշակերտին: «Ես հասկացա, որ չեմ կարող նրան որոշակի պատասխան տալ. եթե ասեմ «ոչ», ապա նա կարող է այլևս ինձ չենթարկվել, եթե ասեմ «այո», կիակասեմ այն ամենին, ինչ դասավանդում եմ իմ դասերի ընթացքում»:

### **«Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» առարկաների դասագրքում TC "Human Rights and Civic Education Textbooks" № C Վ "3"}**

Դասագրքերի գնահատումը իրականացվել է հետևյալ չափանիշների հիման վրա. համապատասխանությունը առարկայական ծրագրին, բովանդակությունը՝ ներառյալ ճշգրտությունը և հավաստիությունը, լեզվի մատչելիության աստիճանը, մանկավարժական մեթոդը, ձևավորումը, պատկերագրդման համապատասխանությունը և նյութերի որակը<sup>97</sup>: Այս չափանիշներն են ուղեցույց եղել նաև ուսուցիչների հետ խնճային քննարկումների ընթացքում, երբ ուսուցիչներին խնդրել ենք գնահատել դասագրքերը:

Երկու դասագրքերի՝ «Մարդու իրավունքների» և «Քաղաքացիական կրթության» մասնագիտական վերլուծությունը իրականացվել է դասագրքերի ընդհանուր և մասնավորապես մարդու իրավունքների նյութերի գնահատման ընդունված չափանիշների հիման վրա<sup>98</sup>: (Տես՝ ստորև գետեղված աղուսյակը մարդու իրավունքների վերաբերյալ տեքստի գնահատման չափանիշների վերաբերյալ)<sup>99</sup>:

<sup>97</sup> Tibbitts F. "Evaluation in the Human Rights Education Field: Getting Started" HREA, 1997. [http://erc.hrea.org/Library/research\\_evaluation/evaluation-guide.pdf](http://erc.hrea.org/Library/research_evaluation/evaluation-guide.pdf) կայքում:

<sup>98</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>99</sup> Նույն տեղում, էջ 16:

## **ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱՍԱՅՄԱՆ ԹԻԲԻԹՍԻ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- 1) Անդրադարձը մարդու իրավունքների տեղական, ազգային և միջազգային փաստաթղթերին և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներին:
- 2) Տվյալ մշակույթին համապատասխանող օրնակների օգտագործումը:
- 3) Տարբեր սեռերի, էթնիկ խնճերի, փոքրամասնություն կազմող մշակութային խնճերի անդամների ներկայացուցչական ներգրավումը շարադրանքի և պատկերազարդման մեջ:
- 4) Ստերեոտիպերից խուսափումը լեզվական և պատկերազարդման հնարքներում:
- 5) Մարդու իրավունքների տեղական հիմնահարցերի շոշափումը:
- 6) Քրաժարումը ժարգոնային լեզվի օգտագործումից:
- 7) Դասարանի նյութական պայմանների նկատմամբ անմիջական առնչությունը:

«Մարդու իրավունքների» դասագրքի՝ որպես առաջին փորձի, որակը և բովանդակությունը ընդհանուր առմամբ կարելի է բավարար գնահատել: Այն մատչելի և ոյուրընկալելի է 8-րդ դասարանցու համար: Դասագրքում գետեղված թեմաների վերաբերյալ կան մեծ թվով հետաքրքիր լուսանկարներ, սակայն նպատակահարմար է դրանք էլ ավելի շատացնել, հատկապես հայկական իրականությունից բխող լուսանկարներով:

Ինչ վերաբերում է գրքի բովանդակությանը, ապա փորձ է արվել անդրադառնալու մարդու իրավունքների տեսական, փիլիսոփայական և իրավական սկզբանադրյուրներին, ներառյալ մարդու իրավունքների վերաբերյալ ազգային և միջազգային փաստաթղթերը: Չնայած տեղական կարևորության որոշ խնդիրներ քննարկվում են դասագրքում (օրինակ՝ փախստականների, ազգային և կրոնական փոքրամասնությունների, հաշմանդամների իրավունքները և համապատասխան ազգային իրավական հիմնական ակտերը), այնուամենայնիվ գրքի որոշ գլուխներում տեղին և համապատասխան օրինակների պակաս է զգացվում, և ուսուցիչները պետք է որոշակի ջանքեր գործադրեն աշակերտներին այդ խնդիրների առնչությամբ արդիական օրինակներ նատուցելու համար: Պետք է նշել, որ դասագրքերը և առարկայական ծրագրերը չեն անդրադառնում մարդու իրավունքների այնպիսի կողմիտ խախտումներին, որոնք ընդունված է համարել ոճրագործություն մարդկության հանդեպ, ինչպես օրինակ՝ ցեղասպանությունը և էթնիկ խնճերի ոչնչացումը, խնդիրներ, որոնք հատուկ կարևորություն ունեն և առանձնակի ուշադրության պետք է արժանացնել՝ հաշվի առնելով հայոց ցեղասպանության պատմությունը:

Դասագրքում արծարծվում են մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմները՝ հիմնականում դատական, միջազգային ու տարածաշրջանային, ներառյալ Արդարադատության միջազգային դատարանը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Այնուամենայնիվ շահեկան կլիներ դասագրքում ընդգրկել նաև անձնական գանգատների, բողոքների միջազգային մեխանիզմների և Միջազգային քրեական դատարանի վերաբերյալ տեղեկություններ, որպեսզի ցույց տրվեր միջազգային մասշտաբով մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության առավել արդյունավետ և գործող միջոցների ստեղծման միտումները, և ընդգծվեր, որ բոլոր երկրները, այդ թվում և

Հայաստանը, բազմաթիվ իրավական և քաղաքական պարտավորություններ ունեն մարդու իրավունքների ոլորտում: Յարկ էր շեշտել նաև միջազգային իրավունքի գերակայությունը՝ Հայաստանում, այսինքն՝ միջազգային փաստաթղթերի գերակայությունը ազգային օրենսդրության նկատմամբ:

«Մարդու իրավունքներ» դասագրքի ամենահիմնական թերություններից մեկն այն է, որ նրանում բավարար ուշադրություն չի հատկացվում մարդու իրավունքների գլոբալ խնդիրների շոշափման միջոցով մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ աշակերտների գայյնության մակարդակի և իրազեկության բարձրացմանը: Դասագրքում կարելի էր ընդգրկել տարբեր երկրներում տեղ գտած մարդու իրավունքների սխստենատիկ խախտումների մասին օրինակներ, հիշատակել բազմաթիվ երկներում առկա ծայրահեղ աղքատության և սովոր դեպքեր, պատմական անարդարություններ և ռասայական, էթնիկ տարբերությունների հիման վրա իրականցվող բռնություններ՝ այդպիսով երեխայի մեջ առաջացնելով անարդարության դեմ ընդգույնան և վրդովմունքի զգացումներ: Նման օրինակները կարող են խթանել երեխաներին ավելի ակտիվ գործել և նպաստել միմյանց և շրջապատող անձանց իրավունքների դեմ պայքարին, քանզի «...առանց այս զգայական շոշափման և դառնության զգացումի չի լինի որևէ գործողություն հանուն մարդու իրավունքների»<sup>100</sup>:

9-րդ դասարանի «Քաղաքացիական կրթության» դասագիրքը բավական հաջողված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների որոշակի իրավունքների մասին գիտելիքների հաղորդման, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակություն հասկացության, ինչպես նաև Հայաստանի քաղաքական համակարգի լուսաբանման առումով: Այսպես թե այնպես, երկու դասագրքերն էլ թարմացման կարիք ունեն, քանզի մարդու իրավունքների միջազգային և ազգային ասպարեզներում շատ իրադարձություններ և զարգացումներ են տեղի ունեցել դրանց հրատարակումից հետո, ներառյալ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հիմնադրումը, ազգային օրենսդրության զարգացումը և փոփոխությունները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով, նոր քրեական և աշխատանքային օրենսգրքերի ընդունումը:

### **Ուսուցիչ ձեռնարկների գնահատում**

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ստեղծված և «իրավունք բլոկի» առարկաների համար միակ երաշխավորված լրացուցիչ նյութ հանդիսացող ձեռնարկը ուսուցչին չի տրամադրում բավարար քանակությամբ հավելյալ տեղեկատվություն և մեթոդական օժանդակություն դասագրքերում զետեղված թեմաների արդյունավետ դասավանդման համար: Ձեռնարկը, ըստ էռլրյան, պարունակում է միայն մեկ էջանոց նկարագրություն և ցուցումներ «իրավունք բլոկի» երեք առարկաների դասավանդման համար նախատեսված մեկ մեթոդի՝ բանավեճերի օգտագործման վերաբերյալ: Ձեռնարկում անհրաժեշտ է ավելի շատ ուշադրություն դարձնել մեթոդական բաժնին, քանզի մեկ էջը բավական չէ և մեթոդի նկարագրման, և դասարանում դրա կիրառման նմուշների քննարկման համար:

<sup>100</sup> Mihr A. *Human Rights Education: Methods, Institutions, Culture and Evaluation*, 2004, 5-րդ հոդված, էջ 6:

«Պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը մեթոդական ձեռնարկի հետ կապված իրավիճակի բարելավման նպատակով վերջերս ՀՀ կրթության և գիտության նախարարության իմացությամբ և ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմանբ նախաձեռնեց «իրավունք բլոկի» «Քաղաքացիական կրթություն» առարկայի նոր մեթոդական ձեռնարկի իրատարակումը, որը 2005-2006 ուսումնական տարվա ընթացքում կտարածվի դպրոցներում: Ձեռնարկը համապարփակ և անբողջական է իր բովանդակությամբ, և գործնականում շատ օգտակար նյութ կլինի քաղաքացիական կրթության ուսուցիչների համար, սակայն այն լրացուցիչ, օժանդակ ձեռնարկ է և չի փոխարինելու ներկայունս օգտագործվողին:

Մարդու իրավունքներ առարկայի համար ձեռնարկ է իրատարակել Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը, որը ֆինանսավորվել է հոլանդական «Քորդեյյ» կազմակերպության և հաստատվել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից: Ձեռնարկի մեկական օրինակ բաժանվել է բոլոր դպրոցներին: Այն հանգամանալից անդրադառնում է մարդու իրավունքների հիմնահարցերին, ազգային և միջազգային իրավական դաշտին և մեխանիզմներին, այնպիսի թեմաների, որոնք մանրամասն չեն լուսաբանվել դասագրքերում: Ձեռնարկը ներկայացնում է նաև մարդու իրավունքների դասավանդման մի քանի հետաքրքիր մեթոդներ: Այնուամենայնիվ, ավելորդ չէ նշել, որ «Իրավունք հասկացությունը» գլխում կա այսպիսի պնդում. «...իրավունքի ճշմարիտ աղբյուրն աստվածաշունչն է»:

### **Դանուակոթական միջնակարգ դպրոցում մարդու իրավունքների կրթության գնահատում**

Մարդու իրավունքների կրթության ներգրավումը Հայաստանի հանրակրթական միջնակարգ դպրոցի պետական ծրագրում անկասկած նշանակալից քայլ է մարդու իրավունքների մշակույթի կերտման և մարդու իրավունքների հիմնարար արժեքների նկատմանը հարաճուն հարգանքի ուղղությամբ: Դպրոցի ուսուցիչները և այս նախաձեռնության հեղինակներն ու իրականացնողները տարակուսանք չունեն այս քաղաքականության նշանակալի և դրական ազդեցության առնչությամբ: Այնուամենայնիվ շատ փորձագետներ, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ և կառավարական որոշում կայացնող անձինք այնքան էլ լավատեսորեն չեն տրամադրված, ինչպես «առաջին գծում» գտնվող ուսուցիչները:

Նախորդ գլխում նշված մարդու իրավունքների կրթության երկու մեծ փորձնական ծրագրերը պաշտոնապես գնահատվել են:

«Պատանեկան նվաճումներ» կազմակերպությունը կատարել է ժամանակային համեմատական հետազոտություն 2001-2004 թվականների ընթացքում ժողովրդավարացման գործնթացի և քաղաքացիական հասարակության ձևավորման վրա «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» առարկաների ազդեցությունը պարզելու նպատակով: Հետազոտությունը հիմնված է 8-րդ և 9-րդ դասարանների 1000 աշակերտների հետ անցկացված հարցման վրա, որն իրականացվել է առարկայի դասավանդման սկզբունք և վերջունք, որպեսզի հնարավոր լինի որոշել աշակերտների գիտելիքների մակարդակի փոփոխությունը մարդու իրավունքների, ժողովրդավարության և

քաղաքացիական ինքնագիտացության վերաբերյալ<sup>101</sup>: Արդյունքները ցույց են տվել, որ ուսումնական տարվա ընթացքում Երևանից հեռու գտնվող բնակավայրերի աշակերտների գիտելիքները մնացած աշակերտների համեմատությամբ ավելի նկատելի աճ են ունեցել: Օրինակ Արագածոտնի մարզի հեռավոր գյուղերի աշակերտների գիտելիքները աճել են 80 տոկոսով: «Պատանեկան նվաճումները» ածի նման տարբերությունը բացատրում է նրանով, որ հեռավոր գյուղերում պատանիները և նրանց ընտանիքները, բացի դասագիրք ընթերցելուց, ուրիշ անելիք չունեն, մինչդեռ Երևանում բնակվող աշակերտներն օգտվում են տեղեկատվության և ժամանցի բազմաթիվ աղբյուրներից, մի հանգամանք, որ նվաճեցնում է դասագրքերի հանդեպ ուշադրությունը<sup>102</sup>: Մեկ այլ ուշագրավ արդյունք. իգական սերի աշակերտների գիտելիքները, համեմատած տղաների, ավելի մեծ վերելք են ունեցել: Դրա բացատրությունը, սակայն, «Պատանեկան նվաճումների» կողմից չի տրվում: Տրամագիրեն հակառակ արդյունքներ են գրանցվել աշակերտների քաղաքացիական ինքնագիտակցության և ակտիվության աստիճանի տեսանկյունից, որոնք դրսկորվել են տեղական ինքնակառավարման մարմինների, ԶԼՄ-ների ներկայացուցիչների, քաղաքական գործիքների հետ հանդիպումներով և համագործակցությամբ, նամակների ու հողվածների հրատարակմամբ և համայնքային միջոցառումներին կամավոր մասնակցությամբ: Երևանի և այլ խոշոր քաղաքների միջնակարգ դպրոցների աշակերտների քաղաքացիական ինքնագիտակցության և ակտիվության նակարդակը տոկոսային հարաբերությամբ ավելի մեծ աճ է ունեցել, քան գյուղերի և հեռավոր բնակավայրերի աշակերտներինը:

Մոտ 1000 աշակերտների հարցում է անցկացրել նաև «Փրոցեքք Հարմոնի» կազմակերպությունը՝ իր «Զանգ» ծրագրի ազդեցությունը որոշելու նպատակով: Վեց հարցից բաղկացած հարցաշարի հիման վրա անցկացված հարցման արդյունքները ցույց են տվել, որ ծրագրում մասնակցած աշակերտների վերաբերնունքը օրենքի և ոստիկանության աշխատակիցների նկատմամբ էական դրական փոփոխություն է ունեցել:

Հայաստանի դպրոցական համակարգում «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» առարկաների դրական ազդեցության մասին ոչ միայն այս հետազոտություններն են վկայում, այլև տվյալ առարկաների ուսուցիչների փորձը և դիտարկումները: Քննարկումների ընթացքում գրեթե բոլոր ուսուցիչները բերում էին աշակերտի վերաբերմունքի և մտածելակերպի վրա այս նոր առարկաների ուղղակի ազդեցության մասին վկայող փաստեր և օրինակներ, ինչպես օրինակ՝ տարեցների և հաշմանդամների նկատմամբ հարգանքի աճը, կրոնական փոքրամասնություններին պատկանող երեխաների հանդեպ վերաբերնունքի դրական փոփոխությունը:

**Կար ժամանակ, երբ աշակերտները հասուն վերաբերմունք ունեին կրոնական աղամաներին հարող իրենց դասընկերների նկատմամբ: Բայց հիմա, երբ մենք**

<sup>101</sup> Մանուկյան Ա. Ուսումնասիրվում է «Իրավունք» առարկայաշարի ազդեցությունը;- Կրթություն, 2004, 1-15 հունիսի, էջ 5:

<sup>102</sup> Թեստերի սկզբնական արդյունքների, ինչպես նաև քաղաքների և գյուղերի դպրոցներում օգտագործված մեթոդների տարբերության հետազոտումը կարող էր ավելի համոզիչ բացատրության հիմք դառնալ:

**ասում ենք, որ յուրաքանչյուր ոք ունի դավանանքի ազատություն, նրանք սկսել են հաղորդակցվել նման երեխաների և մեծահասակների հետ:**

**Աշակերտները չափազանց հետաքրքրված են քվեարկության իրավունքով. նրանք գնում են տուն և իրենց տատիկներին ու պապիկներին են սովորացնում:**

**Նրանք լուսավորում են իրենց ծնողներին ընտրությունների վերաբերյալ:**

**Կար ժամանակ, երբ ուսուցիչներն ու տնօրենները կարող էին խուզարկել աշակերտների պայուսակները, իհմա՝ այս առարկաներ անցնելուց հետո, դա այլևս հնարավոր չէ:**

**Նախկինում երեխաներն իրենց իրավունքների և առհասարակ մարդու իրավունքների մասին ոչինչ չգիտեին: Դիմա այս առարկաների շնորհիվ շատ փոփոխություններ են տեղի ունեցել: Առարկաները մեծ հետաքրքրություն են առաջացնում: Իրազեկ դառնալով իրենց իրավունքներին՝ աշակերտները կարծես քաղաքակրթվում են: Դա դժվարին ճանապարհ է, բայց արդյունքներն արդեն նկատելի են:**

**Ուսուցիչների հետ անցկացված քննարկումներից**

Ի տարբերություն ուսուցիչների, մարդու իրավունքների փորձագետները, ՀԿ-ների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև կառավարական որոշ կառույցների աշխատակիցներ նույնքան լավատեսորեն ու դրական չեն տրամադրված, ինչը ակնհայտ էր դպրոցներում մարդու իրավունքների կրթության վերաբերյալ նրանց ակնարկներից:

Ընդհանուր առնամբ նշված անձանց շրջանում երկու գերիշխող տեսակետ գոյություն ունի դպրոցական համակարգում մարդու իրավունքների ընդգրկման վերաբերյալ: Նրանցից ոմանք դեմ են մարդու իրավունքների վերաբերյալ առանձին առարկաների դասավանդմանը՝ անդելով, որ բոլոր առարկաներն էլ անհրաժեշտ է դասավանդել մարդու իրավունքների սկզբունքների վրա հիմնվելով, կամ մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքներ կարող են տրամադրվել այլ առարկաների միջոցով, ինչպիսիք են պատմությունը, գրականությունը և փիլիսոփայությունը: Մյուս տեսակետն այն է, որ մարդու իրավունքներն առանձին առարկայի ձևով պետք է դասավանդվեն, բայց ոչ այնպես, ինչպես արվում է ներկայիս պետական ծրագրով և դասագրքերով:

**Մարդու իրավունքները դպրոցական ծրագրում ընդգրկելը սխալ էր... Ոչ միայն Մարդու իրավունքների համբողիանուր հոչակագիրը, այլև մարդու իրավունքների փիլիսոփայական և բարոյական հիմքերը պետք է ուսուցանվեն: Դասագրքերը շատ բարդ են և անորակ: Անհրաժեշտ է ուսուցիչներին ավելի լավ վերապատրաստել:**

**Մարդու իրավունքների ՀԿ**

**Ես շատ բարձր եմ գմահատում հանրակրթական դպրոցում մարդու իրավունքների ներգրավման գործում քաղաքացիական հասարակության, հատկապես «Պատանեկան նվաճումների» դերը: Բայց մտավախություն ունեմ, վտանգ կա, որ այս առարկան պարզապես դառնա այն հասարակագիտական առարկաներից**

**մեկը, որոնք սովորաբար արհամարվում են:** Մարդու իրավունքների ոլորտը ամենադիմամիկներից է, բայց դպրոցական դասագործերը չեն արտացոլում այդ դիմամիկան:

Կառավարության՝ մարդու իրավունքների գծով փորձագետ

**Դասագործերը պետք է փոխվեն:** Մարդու իրավունքները պետք է ընդգրկվեն բոլոր առարկաների մեջ: Խնդիրն այն է, որ մարդու իրավունքները պետք է դիտել ոչ միայն իրավական, այլև փիլիսոփայական և մշակութային հասկացություն:

Մարդու իրավունքների ՀԿ

### Առաջարկություններ

- Անհրաժեշտ է իրականացնել «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» առարկաների դասագործերի պաշտոնական գնահատում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:
- Բոլոր մնացած դասագործերը պետք է վերանայվեն, որպեսզի պարզվի, թե ինչպես կարող են դրանք հարստացվել մարդու իրավունքների վերաբերյալ թեմաներով: Մարդու իրավունքների կրթության բաղադրիչներ նայունի լեզվի, պատմության և այլ առարկաների միջոցով պետք է ընդգրկել բոլոր դասարանների ծրագրերում:
- Բոլոր առարկաները պետք է դասավանդվեն մարդու իրավունքների սկզբունքների հիման վրա, և դասավանդման նման մոտեցումը պետք է խրախուսվի համալսարանական կամ նաև ազգային մանկավարժական կրթության հենց սկզբնական մակարդակում:
- «Իրավունք առարկայաշարի» ուսուցիչներն ավելի շատ տեղեկատվություն են պահանջում. սկզբի համար գոնե կարելի է նրանց տրամադրել Հայաստանում մարդու իրավունքների կրթությամբ գրադարձ կազմակերպությունների և ինտերնետային ռեսուրսների մեկ էջանոց ցուցակ: (Բոլոր քննարկումներից հետո ԹՀՀԿ գիտաշխատողները ուսուցիչների խնդրանքով հենց սա էլ արել են):
- Գոյություն ունեցող պարտադիր և օժանդակ ձեռնարկները ուսուցիչների համար պետք է բաժանել «իրավունք բլոկի» առարկաների բոլոր ուսուցիչներին: Շատ ուսուցիչներ անտեղյակ են գոյություն ունեցող ձեռնարկներին:
- Անհրաժեշտ է մշակել և իրատարակել «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» առարկաների նոր և համապարփակ ձեռնարկներ, որոնք պարունակեն մանրամասն մեթոդական ցուցումներ առարկայական ծրագրի յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ:
- Անհրաժեշտ է «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» նոր ձեռնարկների իրատարակման ընթացքում օգտագործել Հայաստանի

տարբեր դպրոցների այն որակյալ ուսուցիչների փորձը, որոնք կարողացել են մարդու իրավունքների դասավանդման տարածված մեթոդները հաջողությամբ հարմարեցնել տեղական կարիքներին ու պայմաններին: Նոր ձեռնարկը պետք է նաև մեծ տեղ հատկացնի մարդու իրավունքների կրթության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՄԱԿ-ի Մանկական իիմնադրամի և ոլորտում հայտնի այլ կազմակերպությունների կողմից մշակված նյութերին:

- ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պետք է վերահսկողություն իրականացնի մարդու իրավունքների կրթության ոլորտում, ներառյալ շարունակական և սիստեմատիկ գնահատումները և նյութերի թարմացումը:
- ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պետք է միջոցներ ձեռնարկի դասագրքերում զետեղված մարդու իրավունքների ազգային և միջազգային զարգացումների մասին տեղեկատվության թարմացման համար: Այդ նպատակով կարող են պարբերաբար հանդիպումներ կազմակերպվել ուսուցիչների հետ կամ հրատարակվել և բաժանվել պարբերականներ:
- Պետք է մշակել և հրատարակել մարդու իրավունքների բառարաններ և որպես ձեռնարկների հավելվածներ՝ բաժանել բոլոր ուսուցիչներին:
- Համապատասխան իշխանությունների կողմից պետք է պարբերաբար իրականացվեն «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» առարկաների ուսուցիչների վերապատրաստումներ:

## **Մարդու իրավունքների ուսուցանումը հատուկ դպրոցներում**

Հայաստանում հատուկ ուսուցումն իրականացվում է 46 գիշերօթիկ դպրոցներում, որտեղ սովորում են հատուկ ուսուցման կարիք ունեցող և չափազանց աղքատ ընտանիքների երեխաները: 1998 թվականից սկսած՝ ուսուցման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները, ներառական ուսուցման ծրագրի շրջանակներում, սովորել են նաև վեց հանրակրթական դպրոցներում<sup>103</sup>:

Հատուկ ուսուցման դպրոցներից շատերը գիշերօթիկ են անբարենպաստ պայմաններում ապրող երեխաների համար: Այդպիսի դպրոցներ հաճախող աշակերտների թիվը, 1991 թվականից սկսած, աճել է, մինչդեռ հատուկ ուսուցման և հոգեբանական ծառայութունների կարիք ունեցող երեխաների թիվը նույն ժամանակահատվածում նվազել է<sup>104</sup>. Հատուկ ուսուցման ոլորտում շատ խնդիրներ են ծառացել, քանի որ չկան անհրաժեշտ հարմարություններ ուսուցման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համապատասխան խնամքը ապահովելու համար:

Վերջին տարիներին հատուկ ուսուցման սեկտորը և՝ օրենսդրական, և՝ համակարգային բարեփոխումների է ենթարկվել: 2005 թվականի մայիսին ընդունվել է «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է պետական քաղաքականության սկզբունքներն ու նպատակները հատուկ ուսուցման ոլորտում: Օրենքն անդրադառնում է նաև ներառական ուսուցմանը: Նշված է, որ ներառական ուսուցումը նախատեսվում է միայն համապատասխան հարմարություններով՝ հագեցած հաստատություններում, որոնք էական նշանակություն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցումն ապահովելու համար: Եվ այդ հաստատությունների ցանկը պետք է հաստատվի պետական համապատասխան կառույցի կողմից<sup>105</sup>:

Հատուկ ուսուցման ոլորտում այսօր ՀՀ կառավարության առջև երկու կարևոր խնդիր է ծառացած: Առաջին խնդիրը վերաբերում է գիշերօթիկ հաստատություններում ուսուցման որակի բարելավմանը և ներառում է հատուկ ուսուցման ոլորտի պետական չափորոշիչների հաստատման, զուգընթաց ծրագրային փոփոխությունների, համապատասխան դասագրքերի, ձեռնարկների և այլ նյութերի ստեղծման անհրաժեշտությունը: Երկրորդ խնդիրը վերաբերում է ընդհանուր ուսուցման քաղաքականության խորացմանը, որը, ըստ ՀՀ գիտության և կրթության նախարարության պաշտոնյաների, պահաջում է հիմնավոր ներդրումներ, քանի որ բոլոր սարքավորումներն ու կառույցները պետք է փոխվեն և համապատասխանեցվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցումն ապահովելու նպատակին:

Ներկայում հատուկ ուսուցման պետական չափորոշիչը մշակում է հատուկ հանձնաժողովը: Նրա աշխատանքը հիմնված է մի քանի սկզբունքների վրա,

<sup>103</sup> Ծրագիրը նախաձեռնել է հայկական “Հույսի կամուրջ” հասարակական կազմակերպությունը ՍԱԿ-ի Մանկական հիմնադրամի, «Օքսֆամի» և ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ:

<sup>104</sup> Երեխայի իրավունքների պաշտպանության ՀՀ ազգային ծրագիր, 2004-2015

<sup>105</sup> «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը (2005), 12-րդ հոդված:

որոնք են՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին հասարակության մեջ ներգրավելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, գնահատման այլընտրանքային համակարգի և ուսումնական ծրագրերի ստեղծում, որոնք համապատասխանեցված լինեն հատուկ ուսուցման կարիք ունեցող երեխաների կարիքներին<sup>106</sup>:

Հատուկ ուսուցման դպրոցների ներկայիս ուսումնական ծրագիրը չի նախատեսում «Մարդու իրավունքներ» առարկայի դասավանդում, սակայն ներառում է «Քաղաքացիական կրթությունը»:

### **Մարդու իրավունքների դասավանդման գնահատումը հատուկ դպրոցներում**

Եթե հատուկ դպրոցներում սովորող լսողական, տեսողական և հենաշարժային վնասվածքներով, ինչպես նաև այլ խնդիրներ ունեցող երեխաները ընդունակ են յուրացնելու «Քաղաքացիական կրթություն» առարկան, ապա «Մարդու իրավունքները» ևս կարող են ընդգրկվել հատուկ կրթությամբ դպրոցների ծրագրում: Դարկ է հատկապես հաշվի առնել այն հանգամանքը, որ այդ երեխաները պատկանում են Հայաստանի հասարակության ամենախոցելի խավերից մեկին և պետք է լինեն մարդու իրավունքների ուսուցման հիմնական նշանակետերից մեկը: Հասարակական գործիչները և տարբեր փորձագետներ փորձեցին բացատրել այս հանգամանքը՝ ասելով, որ ներկայիս «Մարդու իրավունքներ» դասագիրքը չի համապատասխանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, և անհրաժեշտ է զգուշությամբ ընտրված մեթոդական և զգայուն մոտեցումների վրա հիմնված նյութեր մշակել: Համենայն դեպքում ոչ ոք չնշեց, որ «Ներառական» դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները ներկայիս «Մարդու իրավունքներ» դասագրքի և ուսումնական նյութերի հետ կապված խնդիրներ են ունենում:

### **Առաջարկություններ**

- Մարդու իրավունքների կրթության նպատակով մշակել, հրատարակել և տարածել համապատասխան դասագրքեր հատուկ կրթական ծրագրերում ընդգրկված աշակերտների համար:
- Անհրաժեշտ է մշակել հատուկ դպրոցների համար նախատեսված մարդու իրավունքների ուսուցման նոր ծրագրեր՝ համապատասխան մեթոդների և նյութերի կիրառմամբ, որոնք կօգնեն կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին լիովին գիտակցել իրենց իրավունքները և ներգրավվել հասարակության մեջ:
- Անհրաժեշտ է բարեփոխել հատուկ ուսուցման ներկայիս օրենսդրությունն ու չափորոշիչները:
- Անհրաժեշտ է հատուկ կրթությամբ ծրագրերով դպրոցներում պարբերաբար անցկացնել դասավանդող և չդասավանդող անձնակազմի վերապատրաստում մարդու իրավունքների գծով:

<sup>106</sup> “Ծանոթագրություն 49, էջ 46

## **Մարդու իրավունքների ուսուցումը հետդարձական շրջանում**

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն ուսուցումն իրականացվում է համալսարաններում, ինստիտուտներում, ակադեմիաներում, կոնսերվատորիայում և այլ ուսումնական հաստատություններում, ինչպիսիք են ռազմական և ոստիկանության ակադեմիաները:

Հայաստանում նախնական և միջին մասնագիտական ուսուցումն իրականացվում է մասնագիտական և միջին մասնագիտական հաստատություններում: Մասնագիտական կրթությունը նախատեսում է առնվազն 8-ամյա կրթություն, մինչդեռ միջին մասնագիտական կրթությունը ենթադրում է 10-ամյա կամ 11-ամյա կրթություն՝ կախված դպրոցի<sup>107</sup>: Մասնագիտական կրթության տևողությունը 6 ամսից մի տարի է<sup>108</sup>, մինչդեռ միջին մասնագիտական կրթության վկայական ստանալու համար անհրաժեշտ է սովորել 2-5 տարի:

Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում մասնագիտացումների ցանկն ընդգրկում է<sup>109</sup> այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են տեքստիլ արդյունաբերությունը, տրանսպորտը և հաղորդակցությունը: Միջին մասնագիտական կրթությունն ընդգրկում է իրավաբանություն, սոցիալական աշխատանք, թարգմանչական գործ, հայոց և օտար լեզուների դասավանդում, կառավարում և ֆինանսներ ու մի շարք ուրիշ մասնագիտություններ

Բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացվում է համալսարաններում և ինստիտուտներում, ինչպես նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի ինստիտուտներում: Սրանք բարձրագույն կրթության հաստատություններ են, որոնք շնորհում են բակալավրի, մագիստրոսի, գիտությունների թեկնածուի և դոկտորի աստիճաններ:

### **Նախնական և միջին մասնագիտական կրթություն**

Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտը կարգավորվում է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2005 թվականի հուլիսին<sup>110</sup>: Նախկինում այս ոլորտը կարգավորվում էր միայն ՀՀ «Կրթության մասին» օրենքով: 2001 թվականին ընդունված «Միջին և բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչներն» ընդգրկում են նախնական և միջին մասնագիտական կրթության չափորոշիչների միայն սկզբունքները, սակայն բուն չափորոշիչները դեռևս չեն նշակվել կրթության և գիտության նախարարության կողմից<sup>111</sup>:

<sup>107</sup> Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (2005), 3-րդ հոդված:

<sup>108</sup> Նույն տեղում, 8-րդ հոդված:

<sup>109</sup> ՀՀ կառավարական #1646 Ն որոշում, 2002թ., 26 սեպտեմբերի:

<sup>110</sup> Տես 48-րդ հոդում:

<sup>111</sup> ՀՀ կառավարական #24 որոշում, 2001թ. 16 հունվարի:

Ներկայում Յայաստանում կան 28 արհեստագործական և տեխնիկական քոլեջներ, բոլորն էլ՝ պետական<sup>112</sup>: Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է 111 քոլեջներում, որոնցից 30-ը մասնավոր են<sup>113</sup>:

Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչների մշակման սկզբունքները նախանշում են նախնական և միջին մասնագիտական կրթության պահանջները<sup>114</sup>: Բացի դրանից, չափորոշիչներ են մշակվել առանձին մասնագիտությունների համար, սակայն, ինչպես հայտնում է ՀՀ կրթության և գիտության նախարարության նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության բաժնի վարիչը, դեռևս չի մշակվել իրավաբանական մասնագիտության չափորոշիչը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին օրենքի նպատակներից մեկը ազգային, բարոյական և համընդհանուր արժեքների ոգով ուսուցման կազմակերպումն է<sup>115</sup>: Նախնական մասնագիտական և տեխնիկական քոլեջներում դասավանդվում են այն բոլոր առարկաները, որոնք պետական դասացուցակով նախատեսված են ավագ դպրոցի 8-րդ և 9-րդ դասարանների համար, ներառյալ «Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք» առարկաները: Միջնակարգ մասնագիտական քոլեջներում պարտադիր է «իրավունքի իիմունքներ» առարկան, որն ընդգրկում է սահմանադրական, աշխատանքային, քրեական, վարչական և ընտանեկան իրավունքներին վերաբերող հարցեր:

<sup>112</sup> Տվյալները տրամադրել է ՀՀ գիտության և կրթության նախարարության նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության բաժինը:

<sup>113</sup> Նույն տեղում:

<sup>114</sup> Տես 111-րդ հղումը:

<sup>115</sup> Տես 48-րդ հղումը, հոդված 10 (4(1)):

## **Բարձրագույն մասնագիտական կոթություն**

«Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը նշում է, որ ուսումնական հաստատությունները ինքնակառավարվող են և կարող են կազմակերպել կրթական գործընթացներ, մշակել և կիրառել առարկայական ծրագրեր առաջարկվող մասնագիտությունների համար, ինչպես նաև հրատարակել դասագրքեր, ձեռնարկներ և այլ նյութեր<sup>116</sup>: Ներկայումս Դայաստանի բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում կա 103 համալսարան և ինստիտուտ, որոնցից 26-ը պետական են, և բոլորը պետք է համապատասխանեն աստիճանների պետական ճանաչման պետական նվազագույն պահանջներին: Կան 4 մասամբ պետական, 64 մասնավոր և 9 բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնք հանդիսանում են Դայաստանից դուրս գտնվող համալսարանների մասնաճյուղեր<sup>117</sup>:

Բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչը սահմանում է ուսումնական ծրագրերի բովանդակության և շրջանավարտների որակական պահանջների նվազագույն պահանջները<sup>118</sup>: Ըստ «Բարձրագույն մասնագիտական և հետքուհական կրթության մասին» օրենքի՝ բարձրագույն մասնագիտական կրթության նպատակներից մեկը ուսանողներին ազգային, բարոյական և համընդհանուր մարդկային արժեքների ոգով դաստիարակելն է<sup>119</sup>:

Ի լիումն բարձրագույն մասնագիտական կրթության ընդհանուր չափորոշիչ՝ փորձագետներից, ինստիտուտների և համալսարանների, ինչպես նաև կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչներից կազմված հատուկ հանձնաժողովների կողմից մշակվել են առանձին չափորոշիչներ 230 մասնագիտությունների համար: Ըստ կրթության և գիտության նախարարության՝ փիլիսոփայության, իրավագիտության, պատմության չափորոշիչներն ընդգրկում են մարդու իրավունքների տարրեր: Չափորոշիչները ներկայացնում են նվազագույն պահանջներ, իսկ համալսարաններն ու ինստիտուտները իրավասու են ընդլայնել դրանց շրջանակները:

Օրինակ՝ իրավագիտության չափորոշիչն ընդգրկում է «Մարդու իրավունքների իիմունքներ» առարկան, որի համար պահանջվում է 51 դասաժամ, և այն պետք է անդրադառնա հետևյալ թեմաներին:

- մարդու իրավունքների էությունը, մարդու իրավունքների ծագումն ու զարգացումը,
- մարդու իրավունքների դասակարգումը. անձնական (քաղաքացիական), քաղաքական, տնտեսական իրավունքներ, ազատություններ և պարտավորություններ,
- տարրեր կատեգորիաների անձանց (կանաց, երեխաների, ազգային փոքրամասնությունների, փախստականների, կրոնական

<sup>116</sup> «Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (2004), 8-րդ հոդված:

<sup>117</sup> «Դեռախոսահամարների տեղեկատու. ՀՀ գործող բարձրագույն մասնագիտական և ուսումնական հաստատություններ» / ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Երևան, 2004:

<sup>118</sup> Դաստաված է ՀՀ կառավարության 2001թ. # 24 որոշմամբ:

<sup>119</sup> Տես 116-րդ հոդված, հոդված 11 (6):

փոքրանասնությունների, հաշմանդամների, ծերերի, կալանավորների) իրավունքները,

- մարդու իրավունքների պաշտպանության ներքին մեխանիզմները,
- մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներն այլ երկրներում,
- մարդու իրավունքների պաշտպանության իրավական մեխանիզմները,
- մարդու իրավունքների պաշտպանության համընդիանութ կառույցները,
- մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային կառույցները,
- մարդու իրավունքների և հումանիտար իրավունքի փոխկապակցվածությունը:

ԹՀՀԿ-ն փորձել է կապ հաստատել բոլոր 103 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ պարզելու համար, թե որ բուհերում են դասավանդվում մարդու իրավունքների վերաբերյալ առարկաներ<sup>120</sup>: 97 հաստատություններից, որոնց հետ հաջողվել է կապ հաստատել, 37-ում դասավանդվում են մարդու իրավունքների վերաբերյալ առարկաներ: ԹՀՀԿ-ն հարցազրույցներ է անցկացրել այդ բուհերի համապատասխան աշխատակիցների հետ (Տես Հավելված Գ):

Տես միայն այն հանգամանքը, որ բուհում դասավանդվում է մարդու իրավունքներ առարկան, չի նշանակում, որ այն մատչելի է բոլոր բաժինների ուսանողներին: 37 բուհերից 24-ում, որտեղ դասավանդվում է մարդու իրավունքներ առարկան, ներառյալ Երևանի պետական համալսարանը, դասավանդվում է միայն իրավաբանական ֆակուլտետում: Միայն Երկու համալսարանում է մարդու իրավունքներ առարկան պարտադիր բոլոր ֆակուլտետների համար: Տրամադրվող դասաժամների քանակը խիստ տարբեր է: օրինակ՝ Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանում տրամադրվում է 36 ժամ (չնայած այն մասնագիտացված անքիններ ունեցող երկու համալսարաններից մեկն է), իսկ Երևանի պետական համալսարանում՝ 40 ժամ, մինչդեռ Կիրառական բիոտեխնոլոգիաների ինստիտուտում մարդու իրավունքների դասավանդման համար հատկացվում է 76 ժամ:

Երկու բուհ՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը և Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանը, ունեն իրավագիտության և մանկավարժության ֆակուլտետ, որի շրջանավարտները Հայաստանի դպրոցներում կդասավանդեն «Մարդու իրավունքներ» առարկան:

36 հաստատություններից 22-ում առարկան դասավանդվում է գործող իրավաբանների կամ իրավաբանական կրթություն ունեցող դասախոսների կողմից: Կան դասախոսներ նաև պատմական, սոցիոլոգիական, փիլիսոփայական և տնտեսագիտական կրթությամբ: Կան համալսարաններ, որտեղ մարդու

<sup>120</sup> «Հեռախոսահամարների տեղեկատու. ՀՀ գործող բարձրագույն մասնագիտական և ուսումնական հաստատություններ» / ՀՀ կրթության և գիտության նախարարություն: Երևան 2004: Հեռախոսահամարների տեղեկատուն ընդգրկում է 103 հաստատություններ: «Թուրքիանջյան» հասարակական ուսումնասիրությունների կենտրոնը ցանկին ավելացրել է ՀՀ պետական կառավարման ակադեմիան, Ռուսիկանության ակադեմիան, Ավիացիայի ինստիտուտը, Ռազմական ակադեմիան: Տեղեկատուի մեջ տեղ գտած հաստատություններից երեքի հեռախոսահամարները սխալ էին, և հնարավոր չէր դրանք գտնել որևէ այլ աղբյուրից: Մյուս երեքի դեպքում բազմիցս զանգերի ոչ որ չպատասխանեց:

իրավունքներ առարկայի դասավանդումը սկսվել է դեռևս 1995-1996 թվականներին, <sup>121</sup> սակայն մեծ մասը առարկան սկսել է դասավանդել 2000 թվականից սկսած:

## **Դասախոսների վերապատրաստում**

Ի տարբերություն հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման, բուհերում մարդու իրավունքների համար չեն կազմակեավել վերապատրաստման ընդգրկուն և շարունակական դասընթացներ: Դատուկենտ ծրագրերից է 2004թ. սկսված և մինչ այժմ ընթացող վերապատրաստման դասընթացը՝ կազմակերպված «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության կողմից և Երևանի պետական համալսարանի աջակցությամբ: 2004 թվականին Հայաստանի տարբեր մարզերի 9 բարձրագույն կրթական հաստատությունների 54 դասախոսներ ընդգրկվել են միանյա ինտենսիվ վերապատրաստման ծրագրում: 10 դասախոս վերապատրաստում է անցել նաև Միացյալ Նահանգներում:

Փախստականների հարցերի նորվեգական խորհուրդը Խ. Աբովյանի անվ հայկական պետական մանկավարժական համալսարանի 50 դասախոսների համար անցկացրել է մարդու իրավունքների կարճաժամկետ դասընթացներ: Հայաստանում ՄԱԿ-ի Փախստականների հարցերի գերագույն հանձնակատարի գրասենյակը 2004 թվականին կազմակերպել է Երկօրյա սեմինար մարդու իրավունքների ոլորտում դասավանդող 10 պետական հավատարմագրում ստացած բուհերի դասախոսների համար:

Բարձրագույն կրթական հաստատությունների դասախոսների համար կազմակերպվող մարդու իրավունքների դասընթացների կարևորությունը և անհրաժեշտությունն անընդմեջ շեշտվել է դասախոսների հետ հարցազրույցների ընթացքում: Գիտության և կրթության նախարարության բարձրագույն մասնագիտական կրթության վարչությունը ևս շեշտեց դասախոսների համար դասընթացների անհրաժեշտությունն ու կարևորությունը՝ նշելով, որ իրենք տեղյակ չեն վերը նշված դասընթացների իրականացումից:

**Կարևոր է մարդու իրավունքների կրթությունը սկսել մասնագիտացված համալսարաններում: Քանի դեռ ապագա մասնագետները և դասատուները լավ պատրաստականություն չունեն, ոչինչ հնարավոր չի լինի փոխել մյուս մակարդակներում:**

**ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր/Հայաստան**

**Մեր կրթական համակարգը շատ պահպանողական է և չափազանց դանդաղկոտ: Օրինակ՝ պետք է լիներ հակառակը. սկզբում մարդու իրավունքների մասնագետներ պատրաստվեին բուհերում, հետո առարկան մտցվեր դպրոցական ծրագիր: Ինստիտուտները և համալսարանները շահագրգուված չեն նոր ծրագրերի և գաղափարների հարցում:**

**Բարձրագույն ուսումնական հաստատության դասախոս**

<sup>121</sup> Հրազդանի Լևոն Օրբելու անվան համալսարան, Հրազդանի հումանիտար ինստիտուտ, Սուրբ Թերեզայի անվան գրության քույրերի բժշկական համալսարան, Երևանի «Նավասարդ» համալսարան:

Դասավանդման որակը շատ ցածր է: Գլխավոր խոչընդուռը համալսարանների դասախոսական անձնակազմն է: Տարեց դասախոսները չեն ուզում լքել համալսարանը և հնարավորություն տալ երիտասարդ մասնագետներին՝ փայլուն կրթությամբ և թարմ գաղափարներով, դասավանդելու և ինչ-որ բան փոխելու:

#### Միջազգային ՀԿ

Մեր կրթական համակարգի հիմնական թերությունն այն է, որ կրթությունը կտրված է գիտությունից: Կրթական ծրագրերը գոյություն ունեն միայն կայացած, կարծրացած ինչ-որ նյութ հաղորդելու համար: Դետապնդվում է ցանկացած մտքի քրիչը... Դասարակական գիտությունը հատկապես վատթար վիճակում է:

Կառավարության մարդու իրավունքների գծով փորձագետ

#### **Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում մարդու իրավունքների կրթության գնահատում**

##### **{ TC "Assessing Human Rights Education in Higher Education" \f C \l "2" }**

Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտն ամենաանտեսվածն է Հայաստանում: Այդ ոլորտում իսպառ բացակայում են առարկայական ծրագրերը, չափորոշիչները, ձեռնարկները և մեթոդաբանական նյութերը:

Բարձրագույն կրթության մակարդակում մարդու իրավունքների վերաբերյալ առարկաներ տրամադրող 37 հաստատություններից 22-ը համաձայն են, որ իրենց բուհերում անհրաժեշտ է ավելի խորությամբ ուսումնասիրել մարդու իրավունքները: Երեք բուհերի ներկայացուցիչներ նշեցին, որ մարդու իրավունքները՝ որպես պարտադիր առարկա, պետք է դասավանդվեն բոլոր ֆակուլտետներում:

Խոր հարցազրույցներ են անցկացվել Երևանի պետական համալսարանի, Վ. Բրուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Հայաստանի ֆրանսիական համալսարանի, ՀՀ կառավարման ակադեմիայի, «Նավասարդ» ինստիտուտի, Կիրառական բիոտեխնոլոգիայի ինստիտուտի, Երևանի տնտեսահրավական համալսարանի և Հայաստանի ամերիկյան համալսարանի մարդու իրավունքների դասախոսների հետ: Դասախոսները նշեցին մարդու իրավունքների կրթության ոլորտում առկա երեք հիմնական խնդիրներ՝ մարդու իրավունքների վերաբերյալ առարկաների համար նախատեսված դասաժամերի անավարար քանակը, որոշ դասախոսների ցածր մասնագիտական նակարդակը (մի դասախոս նշեց, որ որոշ հաստատություններում մարդու իրավունքներ դասավանդողները չունեն համապատասխան մասնագիտական գիտելիքներ) և վերապատրաստման դասընթացների սակավությունը մարդու իրավունքների դասախոսների համար:

ԹՀՀԿ-ն ձեռք է բերել և վերլուծել մարդու իրավունքների իինգ առարկաների ծրագրեր: Ընդհանուր առմամբ, բոլոր ծրագրերն ընգրկում են մարդու իրավունքների հիմնական թեմաները, տեսությունները և մոտեցումները, մարդու իրավունքների զարգացման գործընթացը, մարդու իրավունքների պաշտպանության հիմնական միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերը և մեխանիզմները, ներառետական մեխանիզմները և օրենսդրական դաշտը, փոքրամասնությունների և խոցելի խնբերի իրավունքները, ինչպես նաև այլ թեմաներ: Սակայն ծրագրերում տեղ չեն գտել այնպիսի առանցքային

հիմնահարցեր, ինչպիսիք են մարդու իրավունքների զանգվածային կոպիտ խախտումները, մարդկության հանդեպ ոճրագործությունները և դրանց առնչվող միջազգային քրեական իրավունքի հիմնահարցերը, Միջազգային քրեական դատարանի վերաբերյալ տեղեկությունները, անձեռնմխելիության և իրավասության հետ կապված մի շարք խնդիրներ և այլն<sup>122</sup>. Ծրագրերը հարկավոր մանրամասնությամբ չեն ընդգրկում նաև խոշտանգումներին և անմարդկային, դաժան վերաբերմունքի թեմային, ինչը նույնական համարվում է մարդու իրավունքների առանցքային հարցերից մեկը:

Գրեթե բոլոր ծրագրերում ճիշտ չի ներկայացվում կոլեկտիվ կամ խմբային իրավունքներ հասկացությունը՝ վերագրելով դրանք կանանց, հաշմանդամներին, ծերերին, երեխաներին և այլ խոցելի խնբերի, անտեսելով իրական կոլեկտիվ իրավունքները, ներառյալ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, զարգացնան և բնապահպանական իրավունքները:

Ծրագրերում ընդգրկված գրականության ցանկը թերի է, ներառում է միայն մարդու իրավունքների սահմանափակ թվով փաստաթղթեր: Օգտագործվող հիմնական փաստաթղթերն են Մարդու իրավունքների միջազգային բիլը, Միացյալ Նահանգների իրավունքների բիլը, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների Եվրոպական կոնվենցիան, ՄԱԿ-ի կանոնադրությունը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությունը և քաղաքացիական ու քրեական օրենսգրքերը: Ծրագրում գրեթե ընդգրկված չէ մարդու իրավունքների վերաբերյալ վերլուծական և տեսական գրականություն, քանզի իրականում այդպիսի հայերեն շատ քիչ նյութեր կան: Գրականության հիմնական մասը կազմում են սահմանադրական իրավունքի վերաբերյալ ռուսերեն նյութերը: Առհասարակ մարդու իրավունքների կրթության բուհական մակարդակի հետազոտման ընթացքում նկատվեց, որ շատ տարածված է սահմանադրական իրավունքը և մարդու իրավունքներն ու իրավունքի ճյուղերը նույնազնելու միտունը:

Հարցազրույցներ են անցկացվել երեք մասնագիտացված կրթական հաստատությունների հետ՝ Ոստիկանության ակադեմիայի, Ռազմական ակադեմիա և Ավիացիայի իստիտուտի հետ։ Վերջին երկուսը նարդու իրավունքների հատուկ դասընթացներ չունեն, սակայն պարտադիր անցնում են մարդասիրական իրավունք (Վարքականուններ զինված հակամարտությունների ժամանակ)։ Ոստիկանության ակադեմիայում դասվանդվում է «Մարդու իրավունքներ և ոստիկանություն» հատուկ դասընթաց, որն ընդգրկում է հետևյալ թեմաները։ Մարդու իրավունքներ և ոստիկանություն դասընթացի նպատակներն ու խնդիրները, ոստիկանության կազմակերպման ու գործունեության կարգը սահմանող ներպետական ու միջազգային ակտերը, ոստիկանությունն ու անձի անձեռնմխելիության իրավունքը, դատական վերահսկողությունը քրեական դատավարության մինչդատական փուլերուն, մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը և ոստիկանությունը, ոստիկանությունը և ազատ տեղաշարժման իրավունքը, մտքի, խղճի, կրոնի և կարծիքի ազատ արտահայտման իրավունքը և ոստիկանությունը։

Հարցազրույցների ընթացքում մարդու իրավունքների փորձագետները, ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև

<sup>122</sup> Đ3 lão ó»õ³ eå³ ÝáõÄl³ Ý Ñ»i l3 åí 3 l çñ3 í 3 l3 Ý EÝ1çñÝ»ñÁ 13 e3 í 3 ý1í áoÙ »Ý áñå»e 3 e3 ýóçÝ 3 e3 nñl 3 Đ3 l3 e3 3 ýç 3 Ù»ñçl³ Ý Ñ3 Ù3 e3 nñ3 ýç çñ3 l 3 µ3 ý3 l3 ý y3 l3 áoÙ:

որոշ պետական պաշտոնյաներ խիստ բացասական կարծիքներ հայտնեցին բարձրագույն կրթության համակարգում մարդու իրավունքների կրթության վերաբերյալ: Նշվեց, որ Հայաստանի բարձրագույն կրթության հիմնական բացքողումը կրթության կտրվածությունն է գիտությունից: Հնչեցին նաև բողոքներ, որ դասավանդման որակը շատ ցածր է՝ պայմանավորված հատկապես այն հանգամանքով, որ համալսարանների աշխատողների մեծամասնությունը կազմում են խորհրդային ժամանակաշրջանի դասախոսները՝ պահպանողական մտածողությամբ, որոնք արգելափակում են փայլուն կրթությամբ և թարմ գաղափարներով տոգորված երիտասարդ մասնագետների մուտքը բուհեր: Հարցվողները բուհական համակարգում մարդու իրավունքների կրթության խոչընդոտներից են համարում նաև ավանդական դասավանդման մեթոդների և մարդու իրավունքների հակասությունը:

Ծահագրգիռ անձինք նշեցին, որ բուհերում հաճախ մարդու իրավունքներ են դասավանդում այնպիսի անձինք, որոնք չեն կրում համապատասխան արժեքներ և անձնային որակներ կամ էլ մասնագետ չեն: Նշվեց նաև, որ մարդու իրավունքների տեսանկյունից անհրաժեշտ է բուհական մակարդակում ընդգրկել մանկավարժական կրթությունը, որպեսզի դպրոցներում «իրավունք բլոկի» առարկաների դասավանդման համար ապահովվեն մասնագիտական կրթությամբ համապատասխան կադրեր:

Պետության կողմից բուհական համակարգի նկատմամբ սիստեմատիկ ուշադրության և վերահսկողության բացակայությունը նույնպես նշվեց որպես ոլորտի զարգացման խոչընդոտ: Այլ խոչընդոտների շարքում կարելի է նշել մարդու իրավունքներ դասավանդողների մասնագիտական վերապատրաստման, ուսումնական ձեռնարկների և հայերեն ակադեմիական նյութերի բացակայությունը: Ծահագրգիռ կողմերը շեշտեցին, որ գրականության սղությունը խնդիրներ է առաջացնում հատկապես հասարակական գիտությունների ոլորտում, քանի որ Հայաստանը չունի արմատացած ակադեմիական ավանդույթներ այդ ոլորտում:

## Առաջարկություններ { TC "Recommendations" \f C \l "2" }

- Անհրաժեշտ է մշակել այլընտրանքային մոտեցում Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում մարդու իրավունքների դասավանդման նկատմամբ: Ներկայումս բոլոր բուհերի մարդու իրավունքների դասավանդման ծրագրերը գործեն նույն են տարբեր մասնագիտությունների համար, օրինակ՝ իրավաբանների, փիլիսոփաների և մարդու իրավունքների ուսուցիչների: Մարդու իրավունքներն առնչվում են մի շարք ակադեմիական առարկաների, և նպատակահարմար է յուրաքանչյուր մասնագիտության դեպքում շեշտը դնել մարդու իրավունքների համապատասխան դաշտի վրա: Օրինակ՝ իրավաբանները պետք է հիմնականում ուշադրություն դարձնեն մարդու իրավունքների, որպես միջազգային իրավունքի ճյուղի, և դրանց իրավական կողմի ուսումնասիրմանը, մինչդեռ փիլիսոփաները, քաղաքագետները և սոցիոլոգները առավելապես կարող են դրսնորել միջջուղային մոտեցում մարդու իրավունքների առարկայի նկատմամբ:
- Մարդու իրավունքներ դասավանդողները պետք է ունենան համապատասխան կրթություն և փորձ: Այս խնդրին կարելի է մասամբ ժամանակավոր լուծում տալ՝ օգտագործելով գոյություն ունեցող ներուժը (ներկայումս Հայաստանում ավելի քան մեկ-երկու տասնյակ անձինք կամ՝ մասնագիտացված մարդու իրավունքների գծով արևմտյան միջազգային ճանաչում ունեցող համալսարաններում) և կազմակերպելով դասընթացներ մարդու իրավունքներ դասախոսների համար:
- Պետք է բարելավել մարդու իրավունքների դասավանդման համար նախատեսված նյութերի որակը և քանակը՝ խթանելով մարդու իրավունքների հանրածանաչ ակադեմիական գրքերի և այն փաստաթղթերի թարգմանությունը, որոնք մինչ այժմ չեն թարգմանվել (օրինակ՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի և ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների ընդհանուր մեկնաբանությունները, եզրափակիչ դիտողությունները և առաջարկությունները):
- Բարձրագույն կրթական հաստատություններն իրավունք ունեն տպագրել և հրատարակել ձեռնարկներ և այլ նյութեր: Յետևաբար անհրաժեշտ է մարդու իրավունքների վերաբերյալ տպագրության պատրաստվող նյութերի սիստեմատիկ փորձագիտական մոնիթորինգ իրականացնել:

## Մարդու իրավունքների կոթությունը հիմնական մասնագիտական խմբերի և պետական ծառայողների համար

Այս բաժնում տեղ են գտել տարբեր մասնագիտական խմբերի՝ ոստիկանության աշխատակիցներին, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակազմին, դատավորներին, իրավաբաններին, քաղաքացիական ծառայողներին և այլ մասնագիտական խմբերին ու պետական ծառայողներին ուղղված մարդու իրավունքների կոթության և վերապատրաստման ծրագրերի լուսաբանումն ու գնահատումը:

### Ոստիկանություն (TC "Police" \f C \l "2")

ՀՀ ոստիկանության աշխատակազմի համար կազմակերպվել են մի քանի դասընթացներ՝ տարբեր տևողությամբ և հաճախականությամբ: 2002 թվականին տեղի է ունեցել եռօրյա դասընթաց ընտանեկան բռնության վերաբերյալ, որը ներառում էր ուսուցանողի ուսուցում քաղադրիչը և ֆինանսվորվել էր ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտի կողմից<sup>123</sup>: 2005 թվականի մարտին Եվրոպայի խորհրդի Ոստիկանության և մարդու իրավունքների ծրագիրը հայկական ոստիկանության հետ համագործակցությամբ կազմակերպվել է մարդու իրավունքների իր առաջին դասընթացները Հայաստանում: Ոստիկանության ակադեմիայի 15 ուսուցանողներ և ծառայողական վերապատրաստում իրականացնողներ վերապատրաստվել են ազգային և միջազգային փորձագետների կողմից մեկ շաբաթ տևած դասընթացում: Դասընթացի հիմնական նպատակն էր հարստացնել մասնակիցների գիտելիքները մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի վերաբերյալ: Հատուկ ուշադրություն է հատկացվել մարդու իրավունքների առնչությամբ ոստիկանության գործնական խնդիրներին և վարքականոններին<sup>124</sup>: Ոստիկանության աշխատողների մի մասը վերապատրաստվել է նաև «Փրոցեք Հարմոնի» կազմակերպության «Զանգ» ծրագրի (անշափահասների իրավունքների վերաբերյալ) շրջանակներում, որի մասին խոսվել է վերը՝ սույն գեկույցի նախորդ գլուխներում:

### Մարդու իրավունքների պաշտպանի հնստիտուտի աշխատակազմ (TC "Staff of the Ombudsman Office" \f C \l "2")

Հայաստանում 2004 թվականին հիմնված մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի աշխատակազմն անցել է մի քանի վերապատրաստման դասընթացներ, ներառյալ երկօրյա սեմինար երեխաների իրավունքների և փախստականների իրավունքների վերաբերյալ՝ կազմակերպված ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Փախստականների հարցերի գերազույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի և ՍԱՀԾ հայաստանյան գրասենյակի կողմից, երկօրյա դասընթացը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վերաբերյալ՝ կազմակերպված Եվրոպայի խորհրդի հայկական գրասենյակի կողմից, և մարդու իրավունքների խախտումների նկատմամբ վերահսկողության վերաբերյալ դասընթացը՝ կազմակերպված Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան մասնաճյուղի կողմից: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի չորս անդամներ

<sup>123</sup> Մարդանասն տես՝ <http://www.usdoj.gov/criminal/icitap/TextUpcoming.html>

<sup>124</sup> Տես՝ Եվրոպայի խորհրդի կայքը.

[http://www.coe.int/T/E/Human\\_Rights/Police/1\\_Activities/1.1\\_Current\\_activities/default.asp](http://www.coe.int/T/E/Human_Rights/Police/1_Activities/1.1_Current_activities/default.asp)

մասնակցել են ԵԱՀԿ-ի ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի փոխանակության ծրագրին և չորս շաբաթ անցկացրել Լեհաստանում ու Լիտվայում՝ ուսումնասիրելով տեղական փորձը բողոքների մեխանիզմի վերահսկողության, ընթացակարգային հարցերի, տեղեկատվության կառավարման և մի շարք այլ ոլորտներում:

Մարդու իրավունքների պաշտպանը նկատեց, որ իր աշխատակազմի համար կազմակերպված որոշ դասընթացների համար ինքն առաջարկել է իրավիրել պետական տարբեր կառույցների ներկայացուցիչների, որպեսզի «մարդու իրավունքների պոտենցիալ չարաշահողները և պաշտպանները» հնարավորություն ունենան միևնույն լսարանում ուսանել միևնույն նորմերը:

#### Դատավորներ (TC "Judges" \f C \l "2")

Դատավորների համար դասընթացները հիմնականում կազմակերպվում են ՀՀ դատարանների նախագահների խորհրդին կից դատական վերապատրաստման կենտրոնի կողմից: Կենտրոնը ստեղծվել է 1994 թվականին<sup>125</sup> և իր գործունեության ընթացքում ֆինանսվորվել է տարբեր դոնոր կազմակերպություններից, բայց ոչ պետական բյուջեից<sup>126</sup>: Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն/«Իրավական նախաձեռնություն կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի համար» կազմակերպության հետ համագործակցելով՝ կենտրոնը 2001 թվականին անցկացրել է Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների Եվրոպական կոնվենցիայի վերաբերյալ Երկօրյա դասընթաց հանրապետության բոլոր դատավորների համար: 2002 թվականից սկսած՝ կենտրոնը, Եվրոպայի խորհրդի հայաստանյան տեղեկատվական գրասենյակի հետ համագործակցելով, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների Եվրոպական կոնվենցիայի վերաբերյալ ԵԽ-ի և Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողովի համատեղ ծրագրի շրջանակներում վերապատրաստել է մոտ 180 դատավորների<sup>127</sup>: Այդ ծրագիրը շարունակվում է մինչ օրս: Որոշ դատավորներ վերապատրաստվել են փախստականների իրավունքների գծով՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերի գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում:

Հայաստանում դատավորների համար սիստեմատիկ, լայնածավալ և մասնագիտական վերապատրաստման ծրագրեր, ըստ Էռլյան, գոյություն չունեն:

#### Իրավաբաններ (TC "Legal Professionals" \f C \l "2")

Իրավաբանները հնարավորություն են ունեցել մասնակցելու մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք դասընթացների, այդ թվում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության կողմից փաստաբանների համար կազմակերպված միանյա դասընթացը, Երիտասարդ իրավաբանների միության կողմից իրականացված և ԱՄՆ Միջազգային օրորակալության կողմից ֆինանսավորվող ծրագիրը մարդու իրավունքների և Եվրոպական իրավունքի վերաբերյալ իրավաբանների և իրավաբանության ուսանողների

<sup>125</sup> Կենտրոնը ստեղծվել է «ՀՀ դատարանակազմության մասին» օրենքի 27-րդ (11) հոդվածի շրջանակներում:

<sup>126</sup> Տես՝ Դատական Բարեփոխումների ինդեքս Հայաստանի համար. Հատոր 2-րդ, 2004թ., էջ 11, Ամերիկյան Իրավաբանների ընկերակցություն

<sup>127</sup> Դատավորների վերապատրաստման կենտրոնի տնօրենի հետ հարցազրույցից:

համար, ինչպես նաև Յայ իրավաբանների ընկերակցության կողմից իրավաբանների համար կազմակերպվող դասընթացները:

Գոյություն չունեն սիստեմատիկ իրավաբանական դասընթացներ իրավագիտության ոլորտի մասնագետների համար, որոնք վերաբերեին մարդու իրավունքներին և ազգային ու միջազգային իրավունքի գործընթացներին:

### Քաղաքացիական ծառայողներ (TC "Civil Servants" կ և C կ "2")

ՀՀ քաղաքացիական ծառայության մասին օրենքում նշվում է, որ քաղաքացիական ծառայողները, առնավազն երեք տարին մեկ անգամ, պետք է պետության կողմից ֆինանսավորվող ծառայողական վերապատրաստման դասընթացներ անցնեն<sup>128</sup>: Մինչ օրս մարդու իրավունքների վերաբերյալ որևէ դասընթաց չի կազմակերպվել քաղաքացիական ծառայողների համար: Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ստանդարտ ծրագրը բովանդակում է թեմաներ քաղաքացիական ծառայության օրենսդրության և կառավարման սահմանադրական սկզբունքների վերաբերյալ<sup>129</sup>: Միայն կրտսեր պաշտոնների քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրում են տեղ գտել նաև թեմաներ Յայաստանի ժողովովարության և քաղաքացիական հասարակության ձևավորման մասին (կարծես ավելի բարձր դասերի քաղաքացիական ծառայողները նման գիտելիքների կարիք ինչ-ինչ պատճառներով չունեն), սակայն չկա որևէ անդրադարձ մարդու իրավունքներին:

Քաղաքացիական ծառայության խորհրդի ներկայացուցիչը հարցազրույցի ընթացքում շեշտեց, որ անհրաժեշտ է մարդու իրավունքների կրտությունը ներառել քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրում, իրենք պատրաստ են համագործակցել այն կազմակերպությունների հետ, ովքեր կօժանդակեն այդ հարցում:

### Այլ մասնագիտական խմբեր և պետական ծառայողներ

1998 թվականից սկսած՝ Յայաստանում ՄԱԿ-ի Փախստականների հարցերի գերազույն հանձնակատարի գրասենյակը Միգրացիայի միջազգային կազմակերպության գրասենյակի հետ միասին իրականացրել է սահմանապահների վերապատրաստում՝ կազմակերպելով փախստականների իրավունքների և արտագործի խնդիրների վերաբերյալ դասընթացներ (մեկ շաբաթվա տևողությամբ դասընթացներում տարեկան վերապատրաստվել է 100 հոգի): Յայաստանում ՄԱԿ-ի Փախստականների հարցերի գերազույն հանձնակատարի գրասենյակը կազմակերպել է դասընթացներ նաև պետական մարմինների այն աշխատակիցների համար, ովքեր առնչվուն են փախստականների խնդիրներին, ներառյալ ՀՀ փախստականների և միգրացիայի վարչության աշխատակիցների, ինչպես նաև 20 լրագրողների և 30 սոցիալական աշխատողների ու տեղական ինքնակառավարման պաշտոնյանների համար:

ՄԱԿ-ի Մանկական իիմնադրամը և Փախստականների հարցերի նորվեգական խորհուրդը 2000 թվականին իրականացրել են կանաց և անչափահասների ազատազրկման կենտրոնների աշխատակազմերի վերապատրաստում մարդու իրավունքների գծով: 2003 թվականին Յայաստանի քրեակատարողական

<sup>128</sup> «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված, 04.12.2001:

<sup>129</sup> ԹՀՀԿ-ն ծեռք է բերել ծրագրի պատճենը վերլուծության համար:

համակարգի ավելի քան 470 աշխատող վերապատրաստվել է՝ գիտելիքներ ստանալով Եվրոպական և միջազգային չափանիշների և ազատազրկված անձանց իրավունքների սկզբունքների վերաբերյալ, ինչպես նաև մասնակցել է սոցիալ-հոգեբանական խնդիրների վերաբերյալ հատուկ դասընթացների՝ կազմակերպված ՀՀ արդարադատության նախարարությանն առընթեր Արդարադատության ինստիտուտի կողմից, ԵԱՀԿ-ի և Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի ֆինանսավորմամբ:

Հայաստանում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի շրջանակներում<sup>130</sup> ՀՀ աշխատանքի և հասարակական ուսումնասիրությունների ազգային ինստիտուտն<sup>131</sup> անցկացրել է գենդերային խնդիրների և երեխաների իրավունքների վերաբերյալ մեկշաբարյա վերապատրաստման դասընթացներ մանկատների 716 ներկայացուցիչների, սոցիալական ծառայության գործակալության տարածաշրջանային գրասենյակների, բժշկասոցիալական փորձաքննության գործակալության աշխատակիցների, միայնակ տարեցների սպասարկման կենտրոնի աշխատակիցների համար: Ինստիտուտն այժմ դասընթացները շարունակում է տարբեր նարգերում:

Ըստ Հայաստանում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագրի՝ Աշխատանքի և հասարակական ուսումնասիրությունների ազգային ինստիտուտը հանդիսանում է լրագրողների համար դասընթացների կազմակերպման պատասխանատու, որոնց նպատակն է. «Ապահովել կանանց խնդիրների հետ կապված թեմաների լուսաբանումը, ինչպես նաև զանգվածային լրատվական միջոցների հաշվետվությունները և հրապարակումները, որոնք ուղղված են կանանց և տղամարդկանց դրական կերպարների մարմնավորմանը»:<sup>132</sup>

Հարավային Կովկասի «Գենդեր և քաղաքականություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը 2004 թվականին կազմակերպել է գենդերային հիմնահարցերի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի աշխատակազմի, տարբեր նախարարությունների, Ազգային ժողովի և այլ կառավարական հիմնարկների պետական ծառայողների համար:

ՀՀ պաշտպանության նախարարության կրթության և դաստիարակության վարչությունը կազմակերպել է մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացման տարբեր միջոցառումներ՝ նախատեսված աշխատակազմի և զինվորականների համար, ներառյալ տարեկան սեմինարները բարձրաստիճան պաշտոնյաների համար: Վերապատրաստման դասընթացներից մի քանի անցկացվել են ՀՀ զինվորական դատախազության և ռազմական ոստիկանության հետ համագործակցությամբ:

<sup>130</sup> «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 645-Ն որոշում, 2004թ., 8-ը ապրիլի:

<sup>131</sup> Ինստիտուտը հանդիսանում է պետական ոչ առևտրային հիմնարկ:

<sup>132</sup> Տես 130-րդ հղումը:

## Հիմնական մասնագիտական խմբերի և պետական ծառայողների համար մարդու իրավունքների կրթության գնահատում

Մասնագետների և պետական ծառայողների համար նախատեսված դասընթացները չեն ապահովում տվյալ խմբերի սիստեմատիկ, համակարգված, արդյունավետ և շարունակական կրթությունը մարդու իրավունքների ոլորտում: Եպիզոդիկ բնույթի սեմինարները և կլիր սեղանները կարող են սուկ մարդու իրավունքների կրթության գործընթացի սկիզբ հանարվել: Մասնագիտական խմբերի կարիքները և կարճաժամկետ դասընթացները գնահատելու անհրաժեշտությունը զգալի է:

Հարկ է նվազեցնել մարդու իրավունքների խախտումների հավանականությունը իրավա-քրեակատարողական համակարգի աշխատակազմի կողմից, ներառյալ խոշտանգումները և անմարդկային, նվաստացնող վերաբերմունքը<sup>133</sup>: Խոշտանգումների և անմարդկային կամ դաժան վերաբերմունքի և պատժի կանխնան եվրոպական հանձնաժողովն իր 2004 թվականի հաշվետվության մեջ կոչ է արել Հայաստանի իշխանություններին.

«Ներմուծել մարդու իրավունքների գաղափարները մասնագիտական գործնական վերապատրաստման դասընթացների մեջ՝ վտանգավոր, ռիսկային իրավիճակների հաղթահարման համար, ինչպես օրինակ՝ քրեական անբաստանյալների հարցաքննումների դեպքում: Դա ավելի արդյունավետ կլինի, քան մարդու իրավունքների վերաբերյալ առանձին դասընթացները: Վերապատրաստումը պետք է իրականացվի ոստիականության բոլոր մակարդակներում և շարունակական ընթացք ունենա: Դրա նպատակը պետք է լինի արծարծել հետևյալ երկու կարևոր կետերը. առաջին՝ դաժան և անմարդկային վերաբերմունքի բոլոր ձևերը արժանապատվության ուժահարում են թե՛ տուժածի, թե՛ իրականացնողի համար և որպես այդպիսին՝ չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքներին ու Հայաստանի կողմից վավերացրած միջազգային փաստաթղթերին: Երկրորդ՝ դաժան և անմարդկային վերաբերմունքը միանգամայն աննպատակահարմար մեթոդ է հանցագործությունների դեմ պայքարի ընթացքում վստահելի տեղեկություններ ստանալու համար<sup>134</sup>.

**Մասնագիտական խմբերը դասընթացներին մասնակցում են մեծ պատրաստակամությամբ, սակայն որևէ արդյունք չկա, քանի որ բարձրաստիճան պաշտոնյաները չեն մասնակցում, և դա հանգեցնում է դեկավարի և իր ենթականների միջև կոնֆլիկտային իրավիճակների:**

**Կառավարության մարդու իրավունքների գծով փորձագետ**

<sup>133</sup> Տես՝ ԱՄՆ Պետդեպարտամենտի 2004թ. հաշվետվությունը Հայաստանի վերաբերյալ <http://www.state.gov/g/drl/rls/hrpt/2004/41668.htm> կայքում և «Ամնեստի Ինտերնեյշնը» կազմակերպության 2005թ. գեկույցը <http://web.amnesty.org/report2005/arm-summary-eng> կայքում:

<sup>134</sup> Տես՝ Խոշտանգումների և անմարդկային կամ դաժան վերաբերմունքի կամ պատժի կանխնան եվրոպական հանձնաժողովի հաշվետվությունը [http://www.cpt.coe.int/documents/arm/2004-25-inf-eng.htm#\\_Toc38861425](http://www.cpt.coe.int/documents/arm/2004-25-inf-eng.htm#_Toc38861425) կայքում:

**Տարբեր մասնագիտական խմբեր պետք է մարդու իրավունքների վերաբերյալ հիմնավոր գիտելիքներ ստանան իրենց մասնագիտական կրթության նախնական մակառուակում, որաեւ այու կոթության բաղադրիչ մի մաս:**

**Միջկառավարական կազմակերպության ներկայացուցիչ**

**Տարբեր խմբերի համար մարդու իրավունքների դասավանդման ձևաչափը մեծ մասամբ կարծաժամկետ սեմինար է՝ թուրքիկ քննարկումներով և ընդմիջումով: Ես չեմ կարծում, որ դա արդյունավետ է, քանի որ սիստեմատիկ և շարունակական բնույթ չունի:**

### **Տեղական փորձագետ**

**Գրեթե բոլոր շահագրգիռ կողմերը հարցազրույցի ընթացքում հայտնել են իրենց տեսակետը տարբեր մասնագիտական խմբերի համար նախատեսված մարդու իրավունքների ծրագրերի վերաբերյալ:**

**Ես կարծում եմ, որ բոլոր խմբերը պետք է տեղյակ լինեն իրենց իրավունքներին, հակառակ դեպքում հակամարտությունը անխուսափելի է: Առաջին հերթին, իհարկե, այն մարդիկ, ովքեր իշխանական լծակների են տիրապետում:**

### **Կառավարության մարդու իրավունքների գծով փորձագետ**

**Առաջին հերթին լրագրողները պետք է վերապատրաստում անցնեն մարդու իրավունքների գծով, քանի որ նրանք հաճախ են խախտում այդ իրավունքները՝ գրելով հոդվածներ, որոնց միակ նպատակը սենսացիա առաջացնելն է:**

### **Կառավարության մարդու իրավունքների գծով փորձագետ**

**Առաջին հերթին ոստիկանության աշխատակիցները պետք է դասընթացներ անցնեն մարդու իրավունքների գծով: Ես նաև կարծում եմ, որ եթե ՀՀ ոստիկանությունում աշխատեին ավելի մեծ թվով կանայք, ապա համակարգն ավելի արդյունավետ կգործեր:**

**Մարդու իրավունքների հայկական ՀԿ**

### **Առաջարկություններ՝ TC "Recommendations" կը C կ/ "2" ։**

- Անհրաժեշտ է անհապաղ կազմակերպել արդարադատությունը իրականացնող պաշտոնյաների, իրավապահ մարմինների և քենակատարողական ծառայողների վերապատրաստում մարդու իրավունքների ոլորտում:**
- Դատավորները և դատախազները պետք է շարունակական իրավական կրթություն ստանան, ինչի մի մասը պետք է կազմի մարդու իրավունքների գործնական կիրառության նպատակով հմտությունների և գիտելիքների**

հաղորդումը ներպետական և միջազգային համակարգերում: Նման կրթությունը պետք է ունենա հետևողական և համակարգված բնույթ և իրականացվի ինչպես նախածառայողական, այնպես էլ ծառայողական վերապատրաստումների շրջանակներում:

- Մարդու իրավունքների կրթությունը պետք է լինի բացարձակ առաջնահերթություն բոլոր քաղաքացիական ծառայողների համար՝ ընդգրկվելով քաղաքացիական ծառայողների կանոնավոր վերապատրաստման ծրագրում:
- Բանակում, ներքին գործերում, գինվորական տարբեր կառույցներում անհրաժեշտ է կազմակերպել դասընթացներ մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի գծով:
- Այլ մասնագետների համար, ինպիսիք են օրինակ՝ լրագրողները, իրավաբանները, բժիշկները և ուրիշ մասնագիտական խմբերի ներկայացուցիչներ, մարդու իրավունքների հիմնական կրթությունը պետք է ներառված լինի մասնագիտական կրթական ծրագրերի մեջ, և վերապատրաստման դասընթացներ պետք է անցկացվեն արդեն աշխատող մասնագետների համար:
- Հայաստանում աստիճանաբար ձևավորել հետազոտությունների առաջարկների վերանայմանը գրաղվող ինստիտուցիոնալ հանձնաժողովներ, որպեսզի կանխվեն մարդու իրավունքների հնարավոր խախտումներն այնպիսի հետազոտությունների և ուսումնասիրությունների ընթացքում, որոնց ուսումնասիրության առարկան մարդիկ են:

### **Մարդու իրավունքների կրթությունը խոցեի խմբերի համար**

Խոցելի խմբերի համար մարդու իրավունքների կրթական ծրագրերը շատ ավելի ավելի սակավաթիվ են, քան մասնագիտական խմբերի ծրագրերը, և գլխավորապես իրականացվել են հասարակական գիտակցությունը բարձրացնող միջոցառումների ձևով, որոնք կազմակերպել են ՀԿ-ները սահմանափակ ֆինանսական միջոցներով՝ տրամադրված հայաստանյան դոնոր կազմակերպությունների և ՄԱԿ-ի գործակալությունների կողմից:

Սուկ մի քանի կազմակերպություններ են մարդու իրավունքների շարունակական դասընթացներ և վերապատրաստում առաջարկում մասնակիցների փոքրաթիվ խմբերի համար: Հիշատակության արժանի դասընթացներից է 2001 թվականից երիտասարդության համար գործող քաղաքացիական կրթության վեցշաբաթյա դասընթացը՝ կազմակերպված Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտի կողմից<sup>135</sup>: Ծրագրով ֆինանսավորվել է «Օքսֆամի» և «Նովիթի» կողմից, նպատակն է երիտասարդության իրազեկության բարձրացումը մարդու իրավունքների, ժողովրդավարական կառավարման, սոցիալական արդարության բնագավառներում: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան<sup>136</sup>

<sup>135</sup> Տես Միժի վեբկայքը [www.idhr.am](http://www.idhr.am)

<sup>136</sup> Ավելի մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ հետևյալ ինտերնետային հասցեից՝ <http://www.zenskestudie.edu.yu/wgsact/armenia/ar-awue.html>

1997-1999 թթ. Երևանից դուրս ապրող կանանց համար վարում էր ութշաբաթյա դասընթաց կանանց և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ:

Այս ծրագրերին զուգընթաց մարդու իրավունքների կրթության և իրազեկության բարձրացնան մի շարք միջոցառումներ են իրականացվել, այդ թվում 2002 թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից ֆինանսավորված և Մարդու իրավունքների ուժողովրդավարության ազգային կենտրոնի կողմից իրականացված երեխաների իրավունքների իրազեկության քարոզարշավը՝ ընտրված դպրոցների 5-10-րդ դասարանների աշակերտների շրջանում, ինչպես նաև Հայաստանի փախստականների համար թրաֆիքին վերաբերյալ իրազեկության բարձրացնան արշավը՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերի գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի, Միացյալ Թագավորության դեսպանատան հովանավորությամբ և իրականացված «Առաքելություն Հայաստան»<sup>137</sup> և «Ա. Դ. Սահարովի անվան մարդու իրավունքների հայկական կենտրոն» ՀԿ-ների կողմից:

2004 թվականին Հայաստանի հելսինկյան կոմիտեն Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի և Եվրոհամանձնաժողովի կողմից ֆինանսավորված «Գիտելիքից՝ գործողություն» ծրագիր է իրականացրել, որի նպատակն է լայն հասարակությանը հաղորդել մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար գիտելիքներ: Նպատակային խմբերի 266 մասնակիցների շարքում ներգրավվել են էթնիկ փոքրամասնություններն ու սոցիալապես անապահով խավերը: Սեմինարների ավարտին Հելսինկյան կոմիտեն հարցում է իրականացրել մասնակիցների շրջանում, և արդյունքում համեմատության եզրեր չի գտել նախկին սեմինարներին նրանց մասնակցության արդյունքում ծեռք բերված (հարցվողների 33 տոկոսը նախկինում մասնակցել են մարդու իրավունքների վերաբերյալ այլ սեմինարների) և ներկա գիտելիքների միջն:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մարզերում տարեկան մի քանի անգամ համոլիպումներ է կազմակերպում տարբեր խմբերի, այդ թվում հաշմանդամների, տարեցների, գործազուրկների և սոցիալապես անապահով խավերի հետ՝ բարձրացնելու համար նրանց իրազեկությունը իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ:

#### Խոցելի խմբերին ուղղված մարդու իրավունքների կրթության ծրագրերի գնահատում

Խոցելի խմբերին ուղղված մարդու իրավունքների կրթության շատ քիչ ծրագրեր են իրականացվել, որոնք գիտավորապես ընդգրկել են կանանց, երեխաներին և փախստականներին: Մարդու իրավունքների կրթության գրեթե ոչ մի ծրագիր չի իրականացվել տարեցների, ԶԻԱՀ-ով վարակվածների (վերջինների համար նախատեսված ծրագրերն ունենում են գործնական ուղղվածություն, ինչպես ծառայությունների և անանուն հեռախոսագծերի մատուցումը) և հաշմանդամների համար (հաշմանդամ անձանց ուղղված ծրագրերը նույնպես

<sup>137</sup> «Առաքելություն Հայաստանը» մարդու իրավունքների պաշտպանությամբ գրադպու ամենակտիվ ՀԿ-ներից է: Մանրամասն տես՝ [www.mission.am](http://www.mission.am)

գործնական են, կան մի շարք արդյունավետ գործող ՀԿ-ներ<sup>138</sup>, որոնք իրական օգնություն են ցույց տալիս հաշմանդամներին և հնարավորություններ ստեղծում հասարակության մեջ ներգրավվելու համար):

Հարցազրույցների ընթացքում մի քանի մասնագետներ նշել են. «Ավելի հեշտ է օգնել և օժանդակել խոցելի խմբերին, քան նրանց պատմել իրենց իրավունքների մասին»: Որոշ կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք մարդու իրավունքների իրազեկության բարձրացնան միջոցառումներ են կազմակերպել խոցելի խմբերի համար, բացատրել են, որ բարձր իրազեկությունը ծնուն է բարձր պահանջներ:

**Խոցելի խմբերի հետ աշխատելիս՝ իրենց իսկ իրավունքների վերաբերյալ գիտելիքները բարձրացնելու համար, չպետք է մոռանալ նրանց խոցելիությունը: Կարծում եմ, այս առաջադրանքում հոգեբաններն էլ պետք է ներգրավվեն:**

Մարդու իրավունքների պաշտպանության հայկական ՀԿ

**Փախստականները խնդրահարույց մասնակիցներ են. նրանք խրված են հոգսերի մեջ, ավելի շատ սոցիալ-տնտեսական օժանդակություն են ակնկալում, ուստի յուրաքանչյուր հանդիպում ավարտվում է փաստարկներով ու պահանջներով: Ծառ դժվար է խոցելի խմբերի իրազեկությունը բարձրացնելը, այն պետք է արվի խիստ նրբանկատ ձևով:**

**ՍԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերի գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակ**

Մի շարք հարցվողներ փաստում են, որ Հայաստանում ամենախոցելի խմբերը սոցիալապես անապահով մարդիկ են, նաև ծայրահեղ աղքատները, որոնք ոչ միայն զրկված են իրենց իհմնական պահանջներու բավարարելու միջոցներից, այլև տեղեկատվություն և կրթություն ստանալու իրավունքներից: Մյուսները այնպիսի խոցելի խմբեր են մատնացույց արել, ինչպիսիք են գյուղական բնակչությունը, գիշերօթիկ դպրոցների սաները, ծնողազուրկները, կալանավորները և հոգեկան խանգարումներ ունեցողները:

**Ես առանձնահատուկ խոցելի խումբ եմ համարում Հայաստանի հեռավոր, լեռնային գյուղերում ապրող մարդկանց, որոնք զրկված են տեղեկատվություն ստանալու իրավունքից և ինտերնետից: Նրանք ավելի վատքար վիճակում են, քան Ռոբինզոն Կրուզոն: Նրանք անիրազեկ են:**

**Կառավարության մարդու իրավունքների գծով փորձագետ**

### Առաջարկություններ

- Ակնհայտ է, որ խոցելի խմբերի մարդու իրավունքների կրթությանն առնչվող խնդիրները առանձնահատուկ վերաբերմունք ու նրբանկատություն են

<sup>138</sup> Օրինակ՝ «Հույսի կամուրջ», «Աստղիկ», «Փյունիկ» և այլ ՀԿ-ներ:

պահանջում, սակայն դրանք չպետք է խանգարեն՝ իրազեկելու այդ խմբերին իրենց իրավունքների մասին, և, որ ամենակարևորն է, տեղեկացնել այդ իրավունքները պահանջելու գործնական, իրավական, վարչական և դատական մեխանիզմներին:

- Խոցելի խմբերի իրավունքները պետք է ամրագրվեն ազգային օրենսդրությունում և ներառն պաշտպանության երաշխավորված մեխանիզմներ:

### **Մարդու իրավունքների կրթությունը յայն հասարակության համար**

Յայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ լայն հասարակության իրազեկության քարոզարշավները իհմնականում իրականացվել են լրատվական հայտարարությունների, տեղեկատվական թերթիկների ու բրոշյուրների, ֆիլմաշարերի, հեռուստառադիտիադրումների, ֆիլմային փառատոնների, թեժ հեռախոսագծերի, ինտերնետի և մարդու իրավունքների իհմնական փաստաթղթերի թարգմանության, տպագրման ու տարածման միջոցով:

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը աջակցել է մի կարևոր նախագծի, որը ներառում է մարդու իրավունքների տարբեր հայեցակետերի վերաբերյալ 22 ֆիլմի և թոք-շոուի արտադրություն՝ ցուցադրելու համար Յայաստանի հանրային հեռուստաընկերության ալիքով՝ 31-ով, նաև 32-ով և հայաստանյան տարբեր քաղաքների տեղական հեռուստաընկերությունների ալիքներով։ Նախագիծը սկսվել է 1999 թ. և դեռևս ընթացքի մեջ է։ Թեմաները վերաբերում են կալանավորների, զինվորների, կանանց, երեխաների, բանտարկյալների, ազգային փոքրամասնությունների իրավունքներին, ինչպես նաև մարդկանց առևտություն։ ԵԱՀԿ-ն նաև երևանում ու մարզերում հասարակական հանդիպումներ է կազմակերպել մասնագետների մասնակցությամբ, որոնք պատասխանել են հարցերին։ ԵԱՀԿ-ի ֆիլմաշարերը ապացուցել են իրենց կարևոր նշանակությունը մարդու իրավունքների կրթությամբ զբաղվող այլ կազմակերպությունների կողմից շարունակական գործածության համար<sup>139</sup>։

2004-2006 թթ. ՄԱԶԾ-ի «Մարդկանց առևտություն դեմ պայքարի ծրագիր» Օժանդակություն հզորությունների զարգացմանը և աջակցություն տուժյալներին»<sup>140</sup> շրջանակների քաղադրամասերից մեկը համազգային հասարակական իրազեկության արշավների և վերապատրաստման նախաձեռնությունների իրականացումն էր։ Նախագծի իրականացնողներից մեկը՝ Միավորված մեթոդիստների օգնության կոմիտեն, ի լրումն այլ ծառայությունների, ստեղծել է ինտերնետային էջ<sup>141</sup> և հեռախոսային ծառայություն մարդկանց առևտությալ վերաբերյալ<sup>142</sup>։

2005 թվականին ՄԱԶԾ-ի մեկ այլ՝ «Յայաստանում մարդու իրավունքների խթանման և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացման ծրագրի» շրջանակներում ստեղծվել և

<sup>139</sup> ՅԿ-ների շատ ներկայացուցիչներ նշում են, որ օգտագործել են ԵԱՀԿ-ի ֆիլմերը իրենց դասընթացների ընթացքում

<sup>140</sup> Նախագիծը սկսվել է 2004-ի մարտին և կավարտվի 2006-ի մարտին։

<sup>141</sup> [www.antitrafficking.am](http://www.antitrafficking.am)

<sup>142</sup> Մանրամասն տես «ԱՄՔՈՐ»-ի կայքում, <http://www.amcor.am/traffic.htm>

տպագրվել է տեղեկատվական պաստառ և գործույկ,<sup>143</sup> նաև Մարդու իրավունքների պաշտպանի ինտերնետային էջ է բացվել<sup>144</sup>: 2004 թվականին ՄԱԶԾ/ Հայաստանը աջակցել է նաև երկու ՀԿ-ի՝ «Լիզա» հիմնադրամին և «Art Film Gallery»-ին՝ նախաձեռնելու կանանց և գենդերային հարցերին նվիրված առաջին միջազգային կինոփառատոնը:

1996-ին Հայաստանի ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը ձեռնարկել է երեխաների իրավունքներին նվիրված հեռուստառադիրշարք, որը հեռարձակվել է Հայաստանի հանրային, Ն 2, «Հայրենիք» հեռուստաալիքներով, նաև Հայաստանի հանրային և «Վան» ռադիոկայաններով: ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը նաև պաստառ՝ է տպագրել երեխաների իրավունքների վերաբերյալ:<sup>145</sup>

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը մարդու իրավունքների գրադարանների միասնական ցանց է հիմնել Վանաձորում, Շրագդանում, Դիլիջանում, Արտաշատում և Գավառում, որում գործում են գրականության և տեղեկատվության էլեկտրոնային ու փոստային համակարգեր: Գրադարանային ցանցն ունի ավելի քան 3800 անուն, 12 000 կտոր հայերեն, անգլերեն, ռուսերեն գիրք ու ամսագիր և մոտ 800 մշտական ընթերցողներ Հայաստանի բոլոր շրջաններից<sup>146</sup>: 1996 թ. սկիզբ առաջ նախագծին աջակցել են 50 միջազգային կազմակերպություններ և օտարերկրյա կառավարություններ:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակի շրջանակներում բազմաթիվ կազմակերպություններ թարգմանել և տարածել են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և եվրոպական հիմնական փաստաթղթերը (ամբողջական ցուցակը տես Հավելված Բ-ում):

### Լայն հասարակության համար մարդու իրավունքների կրթության գնահատում

ԹՀՀԿ-ն ծավալուն հարցազրույցների ընթացքում խնդրել է մարդու իրավունքների փորձագետներին, միջազգային դոնոր և միջկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներին, տեղական ՀԿ-ներին ու կառավարական պաշտոնյաներին, ինչպես նաև նպատակային խմբային քննարկումների նախակից մարդու իրավունքների ուսուցիչներին ու շահառումներին գնահատել և իրենց տեսակետը հայտնել հայերեն և հայ հանրությանը մատչելի մարդու իրավունքների պաշտպանության փաստաթղթերի ու այլ նյութերի վերաբերյալ:

Հարցվածներից շատերը համոզված են, որ Հայաստանում լայն հասարակության համար նախատեսված մարդու իրավունքների մասին նյութերի լուրջ պակաս կա, եղած նյութերն էլ շատերին մատչելի չեն: Հարցվողները նաև նշել են, որ գոյություն ունեցող տեղեկատվությունը գրված չէ պարզ և ընթանելի լեզվով՝ մեկնաբանություններով և բացատրություններով:

<sup>143</sup> Տպագրվել է 2000 օրինակ պաստառ և 6000 օրինակ գործույկ:

<sup>144</sup> [www.ombuds.am](http://www.ombuds.am)

<sup>145</sup> Ըստ Հայաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ներկայացուցչի՝ պաստառի 17 000 օրինակ տպագրվել և առաքվել է բոլոր դպրոցներին:

<sup>146</sup> Մանրանասն տես՝ ՀՍԻԿ-ի կայքը. [www.acrpc.am](http://www.acrpc.am)

**Մարդու իրավունքների վերաբերյալ մատչելի լեզվով ոչ մի նյութ չկա լայն հասարակության համար:**

#### **Մարդու իրավունքների հայկական ՀԿ**

**Մարդու իրավունքների վերաբերյալ նյութերը բավարար չեն, պակասը զգալի է հատկապես մարդերում: Բացի այդ, մասնագետներ կամ, որոնք առանց մարդու իրավունքներ հասկացությունը հասկանալու, մարդու իրավունքների վերաբերյալ գրքեր և հոդվածներ են հեղինակում:**

#### **Մարդու իրավունքների հայկական ՀԿ**

**Մարդու իրավունքների բոլոր փաստաթղթերը թարգմանված են Հայաստանում, բայց մեծ մասամբ մատչելի չեն հասարակությանը:**

#### **Միջազգային կազմակերպություն**

**Չատ հարցվողներ, ներառյալ Երևանից դուրս գտնվող մարդու իրավունքների ուսուցիչները, նշել են, որ մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկատվության և նյութերի պակասը ակնառու է հատկապես գյուղերում: Հարցվողների շրջանում նաև կարծիք կար, որ խնդիրը ոչ այնքան նյութերի սակավությունն է, որքան հասարակության՝ դրանցից օգտվելու ցանկությունը:**

**Մարդու իրավունքների մասին ոչ մի ինֆորմացիա չկա: Մենք չունենք մասնագիտացված, մատչելի ամսագրեր, համակարգչային ցանցերը զարգացած չեն, չկա ոչ մի անկախ հետազոտություն: Օրինակ՝ Աղրբեջանի գիտությունների ակադեմիային կից գործում է գիտահետազոտական ինստիտուտ: Մենք նման բան չունենք: Բացի այդ, Հայաստանում չկա որևէ ինստիտուտ, որ պատասխանատու լիներ ընդունված ազգային օրենսդրության և վավերացված միջազգային փաստաթղթերի տարածման համար, դա բավական թանկ հաճույք է, եթե նույնիսկ գտնեք օրենքներն ու իրամանագրերը, դրանց մեկնաբանություններ գոյություն չունեն...**

**...Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի բյուջեով գումարներ չեն նախատեսվում մարդու իրավունքների կրթության և հետազոտության համար, որի ծրագրային մասը պետք է ֆինանսավորվի դռնոր կազմակերպությունների կողմից, սահմանադրական բարեփոխումներից հետո, երբ պարզվի՝ ինչ դուրս կգա մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտից:**

**Կառավարության մարդու իրավունքների գծով փորձագետ**

**Մի շարք մասնագետներ նշել են, որ շատ ավելի օգտակար ու արդյունավետ կլիներ ավելի շատ հեռուստատեսային հաղորդումներ հեռարձակել մարդու իրավունքների վերաբերյալ: Գրեթե բոլորը հիշատակել են «Իմ իրավունքը»՝ իբրև նման հաղորդաշարի հաջողված օրինակ՝ ուղղված լայն հասարակության իրավական գիտելիքների բարձրացմանը:**

**Այս ուսումնասիրության համար հավաքել և վերլուծվել է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային և եվրոպական փաստաթղթերի ռուսաց կամ հայոց լեզվով պարզեցված տարբերակների մեծ մասը: Մարդու**

իրավունքների իհմնարար փաստաթղթերի պարզեցված տարբերակներ գոյություն չունեն, բացառությամբ Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի<sup>147</sup> և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի, որն ուղեկցվում է մեկնաբանություններով<sup>148</sup>:

Հետևողական ջանքեր են գործադրվել՝ գտնելու Հայաստանի կառավարության կողմից միջազգային և Եվրոպական պայմանագրային մարմիններին ներկայացված զեկույցների, նաև դրանց կապակցությամբ առաջարկությունների ու եզրափակիչ դիտողությունների թարգմանված տարբերակները, սակայն ապարդյուն, այդ նյութերի հայերեն տարբերակներ գոյություն չունեն:

Հայաստանում մարդու իրավունքների վերաբերյալ վերջերս անցկացված համագօգային հարցումը, ի լրումն այլ բացահայտումների, ցույց տվեց, որ մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերման ամենատարածված աղբյուրը, մասնավորապես գյուղական վայրերում, հեռուստատեսությունն է՝ իհմնականում Հայաստանի հանրային հեռուստատեսությունը<sup>149</sup>:

Մարդու իրավունքների ուսուցիչների հետ նպատակային խմբային քննարկումները ցույց են տվել, որ ուսուցիչները հեռուստատեսությունը համարում են մարդու իրավունքների վերաբերյալ նորություններ ստանալու ամենաատչելի միջոցը: Գրեթե բոլոր պատասխանողները նշել են, որ «Ին իրավունքը» հեռուստատեսային հաղորդումը լայն ընդգրկում ունի հասարակության շրջանում, և իրավական ու մարդու իրավունքների գիտելիքների օգտակար աղբյուր է:

### Առաջարկություններ

- Անհրաժեշտ է ստեղծել տարբեր ձևաչափերով, բարձր որակի հեռուստատեսային հաղորդումներ, որոնք հնարավորություն ընձեռեն բարձրացնելու հասարակության իրազեկության մակարդակը մարդու իրավունքների ոլորտում:
- Մարդու իրավունքների Եվրոպական և միջազգային կարևոր փաստաթղթերի պարզեցված տարբերակների տպագրությունը, ինչպես նաև Հայաստանի կառավարության կողմից միջազգային և Եվրոպական պայմանագրային մարմիններին ներկայացված զեկույցագրերը, Մարդու իրավունքների կոմիտեի և տարբեր պայմանագրային մարմինների կողմից Հայաստանին հասցեագրված եզրափակիչ դիտողություններն ու առաջարկությունները պետք է լինեն բոլոր հանրային գրադարաններում՝ դրանց առկայության մասին տեղեկացնող ազդագրերով հանդերձ:

<sup>147</sup> ՅՈՒՆԻՍԵՖ/Հայաստանը ձեռնարկել է հրչակագրի պարզեցված, նկարագրող տարբերակի տպագրությունը՝ պաստառի և բրոշյուրի տեսքով:

<sup>148</sup> Այվազյան Վ. ՀՀ օրենքը «Մարդու իրավունքների պաշտպանի մասին»՝ մեկնաբանություններով: Երևան, 2004: ՍՍԶԾ-ի Հայաստանի գրասենյակի «Հայաստանում մարդու իրավունքների խթանման և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացնան ծրագրի» շրջանակներում:

<sup>149</sup> Դանիելյան Լ. Ինչ գիտենք մենք մարդու իրավունքների մասին: 2004թ. համագօգային հարցում՝ Հայաստանում / ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր: Երևան, 2005:

- Մարդու իրավունքների իրազեկության նոր արշավ սկսելու գերազանց միջոց կլիներ հեռուստաբանավեճերի կազմակերպումը նոր սահմանադրության համապատասխան բաժինների վերաբերյալ:

## **Մարդու իրավունքների կոռուպտացում ուղղված ֆինանսական և կազմակերպական առաջնային հայաստանում**

Միջազգային խոչոր դոնոր կազմակերպությունները, միջկառավարական կազմակերպությունները, միջազգային և տեղական ՀԿ-ներն ու կառավարական հիմնարկները, որոնք այս տասնամյակի ընթացքում աջակցել են մարդու իրավունքների կրթությանը, առանձնացվել են գնահատման համար (այդ կազմակերպությունների ցուցակը տես հավելված Ե-ում):

Փորձ է արվել որոշելու մարդու իրավունքների կրթության ֆինանսական աջակցության ընդհանուր մակարդակը, սակայն նման տեղեկատվությունը մատչելի չէ, քանի որ մարդու իրավունքների կրթությունը հիմնականում ավելի մեծ ծրագրի մի բաղադրամասն է<sup>150</sup>:

Բավական դժվար էր տեղեկատվություն ստանալ մարդու իրավունքների կրթությանը ցույց տրված պետական ֆինանսական օժանդակության չափերի վերաբերյալ: Պետական բյուջեն մարդու իրավունքների կրթության համար առանձին հատկացում չունի, այդ ոլորտի գլխավոր ծրագրերը հովանավորվել են միջազգային նվիրատվությունների կամ վարկերի միջոցով<sup>151</sup>:

Մարդու իրավունքների կրթության և իրազեկության բարձրացմանը միտված պետական ֆինանսավորման վերաբերյալ ձեռք բերված հիմնական տեղեկությունները հետևյալն են. առաջինը կապված է Երեխաների իրավունքների ՀՀ ազգային ծրագրի կատարման ժամանակացույցի հետ (2004-2015 թթ.)<sup>152</sup>, որը, 2005-ից սկսած, տարեկան 2,9 միլիոն դրամի<sup>153</sup> ծախս է ապահովում: Այդ մասնաբաժնը Սահմանադրական դատարանի և Ազգային ժողովի՝ Երիտասարդության իրավունքների ճանաչմանը նվիրված կրթական ծրագրի համար է: Երկրորդը ֆինանսավորվում է Վաշչապետի 199-Ա 2005թ. հրամանագրով, ըստ որի՝ պետական բյուջեից 2,7 միլիոն դրամ է հատկացվում մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի մուսկովյան գրասենյակի կողմից կազմակերպվելիք «Հանուն հանդուրժողականության և ընդդեմ ռասիզմի ու քսենոֆորիայի» միջազգային համաժողովին: Ծավալուն հարցարույցների ընթացքում հարցվողները փորձել են գնահատել միջազգային դոնոր կազմակերպությունների, կառավարության և

<sup>150</sup> Օրինակ՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամը մի շարք ՀԿ-ների փորձիկ դրամաշնորհներ է հատկացրել մարդու իրավունքների կրթության համար: Տեղեկատվություն կարելի է ձեռք բերել դրամաշնորհի տվյալների բազայից՝ [www.osi.am/grant-list..aspx](http://www.osi.am/grant-list..aspx), կամ Բաց հասարակության ինստիտուտի հիմնադրամի տարեկան գեկույցներից. 2004-ին մոտ 140 հազար ԱՄՆ դրամ է տրամադրվել 8 կազմակերպությունների՝ մարդու իրավունքների կրթության և իրազեկության բարձրացման ծրագրերի համար:

<sup>151</sup> Օրինակ՝ միջնակարգ ավագ դպրոցի «Մարդու իրավունքներ» և «Քաղաքացիական կրթություն» դասագրքերի հրատարակումը ֆինանսավորվել է Համաշխարհային բանկի կողմից, նշված առարկաների ուսուցիչների վերապատրաստումը՝ իրականացված «Պատանեկան նվաճումների» կողմից, հովանավորել է ԱՄՆ ՍԶԳ-ն: Ոչ Համաշխարհային բանկը, ոչ էլ ԱՄՆ ի վիճակի չին տրամադրելու բյուջետային տեղեկատվություն այս ծրագրերի վերաբերյալ:

<sup>152</sup> ՀՀ կառավարության #1745 Ն, 2003 հրամանագիր:

<sup>153</sup> Դոլարի փոխարժեքը հայկական դրամով ներկայումս կազմում է մոտավարապես 450 ՀՀ դրամ:

տեղական ՀԿ-ների գործունեության և քաղաքականության արդյունավետությունն ու օժանդակության ընդհանուր մակարդակը, ինչպես նաև ուղիներ առաջարկել մարդու իրավունքների կրթության ֆինանսավորման գործում դրանց արդյունավետությունը բարձրացնելու համար: Գրեթե բոլոր պատասխանողներն այն կարծիքն էին, որ միջազգային դոնոր ու միջկառավարական կազմակերպությունները արժեքավոր ներդրում են ունեցել Հայաստանում մարդու իրավունքների կրթության համար՝ մատուցելով իրենց փորձագիտական ու նյութական օժանդակությունը:

Հայաստանի տարբեր կառավարական հիմնարկներ ներկայացնող հարցվողները շեշտել են, որ այդ կազմակերպությունները ավելի սերտորեն պետք է համագործակցեն կենտրոնական իշխանությունների հետ՝ մարդու իրավունքների կրթության ծրագրերի արդյունավետ իրականացումը ապահովելու համար, նաև պետք է ավելի անմիջականորեն հսկեն ու ստուգեն ֆինանսավորվող ՀԿ-ների գործունեությունը:

Ավելին, մարդու իրավունքների պաշտպանության ՀԿ-ների ներկայացուցիչները առաջարկեցին, որ միջազգային դոնոր և միջկառավարական կազմակերպությունները հաշվի առնեն տեղական մասնագետներ ներգրավեն՝ զարգացնելու և իրականացնելու համար մարդու իրավունքների կրթության նախագծերը: Այդ շահառուներից ոմանք բողոքեցին, որ դրամաշնորհների տրամադրումը միշտ չէ, որ իրապարակայնորեն է արվում, դրամաշնորհները տրվում են քաղաքականացված ՀԿ-ներին: Մյուսներն էլ խորհուրդ տվեցին միջազգային դոնոր հանրությանը լուրջ վերահսկողական գործառույթ իրականացնել իրենց ֆինանսավորման նկատմամբ:

**Միջազգային կազմակերպությունները բացառիկ դեր ունեն իրավագիտակցության բարձրացման, ՀԿ-ների վերապատրաստման և կառավարության ու ՀԿ-ների երկխոսության օժանդակելու գործում:**

.... Դժբախտաբար ոչ բոլոր դեպքերում է դրամաշնորհների տրամադրումը հիմնված անկողմնակալ սկզբունքների վրա:

Մարդու իրավունքների պաշտպանության հայկական ՀԿ

**Ծատ միջազգային կազմակերպություններ հետևողական չեն:** Օրինակ՝ դրամաշնորհները լավ կազմակերպված, փոքրաթիվ ՀԿ-ներին տրամադրելու փոխարեն տրամադրում են այնպիսի ՀԿ-ների, որոնք որոշակի գործունեություն ծավալելու համար սկսմակներ են և ոչ մի գաղափար չունեն անհրաժեշտ մեթոդների և ուղիների մասին:

Մարդու իրավունքների պաշտպանության հայկական ՀԿ

Մարդու իրավունքների կրթության գործում ՀԿ-ների դերի վերաբերյալ կարծիքները հակասական էին. կառավարության ներկայացուցիչները հիմնականում բացասական վերաբերմունք էին արտահայտում՝ շատ ՀԿ-ների համարելով պարզապես «գրանտակերներ», որոնք հոգ չեն տանում նախագծի վերջնարդյունքի մասին, իսկ միջազգային կազմակերպությունները շեշտում էին տարբեր ՀԿ-ների նշանակալից ավանդը Հայաստանում մարդու իրավունքների կրթության գործում: Կառավարության պաշտոնյաները նաև շեշտեցին, որ ՀԿ-ները ավելի շատ պետք է համագործակցեն կառավարության հետ:

Երբ ՀԿ-ների ներկայացուցիչներին խնդրում էին գնահատել ՀԿ-ների գործունեությունը, որպես կանոն, նրանք սկսում էին քննադատել ու վատարանել ուրիշ կազմակերպությունների: Միևնույն ոլորտում գործող ՀԿ-ները համարվում են մրցակիցներ: Ծատ քիչ ՀԿ-ներ են գնահատանքով արտահայտվում մարդու իրավունքների կրթության ոլորտում այլ ՀԿ-ների աշխատանքի վերաբերյալ:

Դայաստանում գործում են 3.500 ՀԿ-ներ, որոնց տասը տոկոսն է մշտապես աշխատում, մնացածը գործում են միայն դրամաշնորհ ստանալու համար, հաջողության դեպքում նրանք պատրաստ են իրականացնել ցանկացած ծրագիր ցանկացած ոլորտում: ՀԿ-ների հիմնական զանգվածը երևանում է, ՀԿ-ները չունեն մասնաճյուղեր մարզերում և չունեն նեղ մասնագիտացում:

Մարդու իրավունքների պաշտպանության հայկական ՀԿ

Ծատ քիչ լավ կազմակերպված, լուրջ ՀԿ-ներ կան, նրանցից շատերը ճանաչում և հեղինակություն չունեն, նրանց ծրագրերը փոքրամասշտաբ են: Խնդիր է նաև ՀԿ-ների՝ երևանում կենտրոնացվածությունը:

Ազգային ժողով

Նույնիսկ եթե իշխանությունները որևէ բան են անում մարդու իրավունքների կրթության ոլորտում, դա այնքան աննշան է, որ ես չեմ էլ նկատել:

ՀՀ ռազմական ոստիկանություն

Ես միայն մի քամի դեպք կարող եմ հիշել, երբ մարդու իրավունքների կրթության և իրազեկության բարձրացման միջոցառումները կազմակերպվել են պետական հիմնարկությունների կողմից, այն էլ միայն միջազգային կազմակերպությունների ծննդամբ կամ ինչ-որ ֆինանսական ռեսուրսներ հայթայթելու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանության հայկական ՀԿ

Այն փաստը, որ մարդու իրավունքները դարձել են դպրոցների պետական դասացուցակի մի մասը, արդեն իսկ ողջունելի է, դա ցույց է տալիս մեր ձկունությունը, չնայած շատ հավանական է, որ այդ քաղաքականությունը պարզապես մեզ հատուկ միմիկրիայի ունակության օրիհանակ է, այնուհանդերձ ես շատ դրական եմ տրամադրված դրա նկատմամբ: Չնայած պետությունը դեռևս շատ անելիքներ ունի մարդու իրավունքների կրթության բնագավառում:

Կառավարության մարդու իրավունքների գծով փորձագետ

Կարծում եմ, որ մարդու իրավունքների կրթության և հասարակական իրազեկության բարձրացման բնագավառում ոչ մի նպատակառուղղված քաղաքականություն չկա. այս ոլորտում կառավարության գործունեությունը խոսքից այն կողմ չի անցնում:

Կրթության ոլորտի պաշտոնյա

## **Մարդու իրավունքների կրթության ազգային ծրագիրը և համանման ուրիշ ծրագրեր**

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակի շրջանակներում անդամ պետությունները պարտավորվել են ստեղծել Մարդու իրավունքների կրթության ազգային կոմիտե, որն ուղղակիորեն պատասխանատու լինի Մարդու իրավունքների կրթության ազգային ծրագրի մշակման համար<sup>154</sup>: Յայաստանը Մարդու իրավունքների կրթության ազգային կոմիտե չունի:

ԹՀՀԿ-ն փորձել է կապվել կառավարության բոլոր հնարավոր գերատեսչությունների հետ (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերի գերագույն հանձնակատարի կողմից տրամադրված ուղեցույցի համաձայն՝ կոմիտեի ստեղծման նախաձեռնությունը պետք է ստանձնի կառավարության համապատասխան ճյուղը կամ գերատեսչությունը)<sup>155</sup> և տեղեկություններ է քաղել բոլոր շահագրգիռ անձանց հետ արված ծավալուն հարցազրույցներից: Բոլոր պատասխաններից երևում է, որ ոչ ոք տեղյակ չէ նման կոմիտեի ստեղծման մասին: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերի գերագույն հանձնակատարի վեր կայքի հղումը, որը նկարագրում է Տասնամյակի շրջանակներում իրականացվող միջոցառումները, մատնանշում է Յայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնաժողովը և ՀՀ արտաքին գործերի նախարարությունը՝ որպես այդ միջոցառումները համակարգող հիմնական հաստատություններ<sup>156</sup>: Սակայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի ներկայացուցչի հետ անցկացված ընդարձակ հարցազրույցի ժամանակ նա նշեց, որ տեղյակ չէ Մարդու իրավունքների կրթության հայաստանյան կոմիտեի մասին, և նարդու իրավունքների կրթությունը՝ որպես այդպիսին, հանձնաժողովի գործունեության առարկան չէ: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը մատչելի չէր հարցազրույցի համար:

Հիմնական տեղեկացված անձինք ոչ միայն չեն լսել Մարդու իրավունքների կրթության հայաստանյան կոմիտեի մասին, այլև չգիտեին, թե կառավարական որ հաստատությունն է պատասխանատու Յայաստանում մարդու իրավունքների միջոցառումներն իրականացնելու համար: Ոնանք ենթադրում են, որ հավանաբար դա կամ կրթության և գիտության նախարարությունն է, կամ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը:

ԹՀՀԿ-ն նման պատասխաններ ստացել էր Մարդու իրավունքների կրթության ազգային ծրագրի առկայության մասին հարցնելիս: Մարդու իրավունքների ոլորտի մի ԴԿ-ի՝ Յակական սահմանադրական իրավապահտական կենտրոնի ներկայացուցչի տեղեկացմամբ, 1998 և 1999 թթ. փորձեր են արվել մշակելու Մարդու իրավունքների միջոցառումների ազգային ծրագիր և ստեղծելու կոմիտե՝ ծրագրի իրականացումը վերահսկելու համար: Միջոցառումների ծրագրի մշակումը քննարկելու նպատակով ՄԱԶԾ-ի օժանդակությամբ երեք քննարկումներ են կազմակերպվել Վանաձորում, Գյումրիում և Երևանում: Այդ քննարկումներին մասնակցել են մարդու իրավունքների տեղական և միջազգային փորձագետներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ, կառավարական պաշտոնյաներ, միջազգային դոնոր հանրության անդամներ և

<sup>154</sup> Տես 6-րդ հղումը:

<sup>155</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>156</sup> <http://www.unhchr.ch/hredu.nsf/GENFSEn?OpenFrameSet>

դիվանագետներ<sup>157</sup>: Արդյունքում սահմանվել են երեք գերակայություններ, մարդու իրավունքների կրթություն, օրենքի հղորացում և օրենսդրության վերանայում<sup>158</sup>:

2001թ. ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակի մարդու իրավունքների մասնագետ դր. Կունիո Մանոլովը պատրաստել է Մարդու իրավունքների ազգային միջոցառումների ծրագրի փաստաթղթի նախագիծը: Այդ փաստաթղթը, որը բովանդակում է մարդու իրավունքների միջոցառումների ծրագիրը<sup>159</sup>, հիմնված է Բուլղարիայում և Արևելյան Եվրոպայի այլ երկրներում հաջողությամբ իրականացված քաղաքականությունների վրա: Այն ներառում է Հայաստանի մարդու իրավունքների իրավիճակի ընդիանուր նկարագրությունը և Հայաստանի մարդու իրավունքների ապագա ծրագրի համար նախատեսված մանրամասն նկարագրությունը, որն անդրադառնում է գործառույթներին, ռազմավարություններին, իրականացնող հաստատություններին և կառուցվածքին: Ծրագիրն անդրադառնում է ընդիանուր քաղաքական, քաղաքացիական, հասարակական, տնտեսական և մշակութային իրավունքներին և հատուկ ոլորտներին, որոնք պետք է խթանվեն, պաշտպանվեն և երաշխավորվեն ՀՀ կառավարության կողմից: Այն նաև սահմանում է հանձնարարականներ համակարգման ազգային վարչություն (ՀԱՎ) ստեղծելու համար, որի նպատակը կլինի իրականացնել Մարդու իրավունքների միջոցառումների ծրագիրը: Արդարադատության նախարարը պետք է լինի վարչության նախագահը և ստեղծի Մարդու իրավունքների փաստաթղթերի ազգային կենտրոն, որը ներկայացնի մարդու իրավունքների փաստաթղթերը կառավարության մարմիններին և մարդու իրավունքների իրավական փաստաթղթերի թարգմանությամբ գրադարձ հաստատություններին: Ֆինանսների նախարարը պետք է ծրագրի իրականացման համար ստեղծի ազգային հիմնադրամ: ՀԱՎ-ի անդամները կլինեն փոխնախարարներ, որոնք կնախագահեն փորձագետներից կազմված հանձնաժողովները՝ հատուկ ոլորտների միջացառումները համակարգելու համար: Ծրագիրը նաև սահմանում է ՄԱՎ-ի և այլ միջազգային կազմակերպությունների դերը դրա իրականացման մեջ: Սակայն միջոցառումների ծրագիրը չի անդրադառնում մարդու իրավունքների կրթության անհրաժեշտությանը: Այսպիսով, ՀԱՎ-ի մեջ առաջարկված չէ մարդու իրավունքների կրթության կոմիտեի ստեղծումը, և ոչ մի ռազմավարություն կամ գործողություն՝ որպես այդպիսին, սահմանված չէ:

Ի լրումն ՄԱԶԾ-ի 2001թ. առաջարկության՝ ԹՀՀԿ-Ն ձեռք է բերել (երբեմն մեծ դժվարությամբ) Հայաստանում ներկայումս գործող երեխայի իրավունքների պաշտպանության,<sup>160</sup> հակարիաֆիքսնօֆի,<sup>161</sup> կանանց վիճակի բարելավման<sup>162</sup> և

<sup>157</sup> ՄԱԶԾ-Ն ԹՀՀԿ-ին տրամադրել է մասնակիցների ցանկը: Ուշագրավ է, որ մեծ թվով անձինք, ովքեր մասնակցել են այդ քննարկումներին, հանգանակալի հարցազրույցների ժամանակ չեն հիշել դրա մասին:

<sup>158</sup> ՄԱԶԾ-ի կողմից կազմակերպված քննարկումների գեկույցներից:

<sup>159</sup> «Նախագիծ. Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների միջոցառումների ազգային ծրագրի մշակումն ու իրականացումը», 04.09.2001 KM №857/01 PRO 300/HR:

<sup>160</sup> «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության #1745-Ն որոշում, 2003 թ., 18-ը դեկտեմբերի:

<sup>161</sup> «Հայաստանի Հանրապետությունից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման և առուվաճառքի (թրաֆիքնօֆի) կանխման հայեցակարգի ու ՀՀ-ից շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիքնօֆի) կանխման 2004-2006

հակակոռուպցիոն<sup>163</sup> ազգային ծրագրերի պատճենները և վերլուծել դրանք՝ պարզելու համար, թե արդյոք դրանք պարունակո՞ւմ են մարդու իրավունքների կրթության դրույթներ:

